

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԴԱՎԻԹ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԻՍԼԱՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Բուհական դասագիրք

Հատոր

I

Երևան
ԵՊՀ հրատարակչություն
2020



Մրագիրն իրականացվել է Արդուլազիզ Սաուդ ալ-Բաբայնի մշակութային հիմնադրամի աջակցությամբ
 تم تحقيق البرنامج تحت رعاية مؤسسة عبد العزيز سعود البابطين الثقافية
 The program was implemented with the support of the Abdulaziz Saud Al-Babtain Cultural Foundation



ՀՏԴ 28(075.8)

ԳՄԴ 86.38g73

Հ 854

*Հաստատված է ՀՀ կրթության, գիտության,
 մշակույթի և սպորտի նախարարության կողմից
 որպես բուհական դասագիրք:*

Հրատարակվում է ԵՊՀ արևելագիտության
 ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ:

Գիտական խմբագիր՝
 պ.գ.թ., դոցենտ Հայկ Քոչարյան

Գրախոս՝
 պ.գ.դ., պրոֆեսոր Ռուբեն Մելքոնյան

Հ 854 «Իսլամագիտություն»/Դ. Հովհաննիսյան, հ. 1: -եր., ԵՊՀ
 հրատ., 2020, 228 էջ +4 էջ նկար:

«Իսլամագիտություն» դասագրքի 1-ին հատորը բաղկացած է 15 դասախոսությունից, որոնք ներկայացնում են իսլամի ծագման և վերջինիս դավանաբանական և կրոնաիրավական համակարգերի ձևավորման առաջին փուլի առանձնահատկությունները: Դասագիրքը նախատեսված է արևելագիտության, աստվածաբանության, պատմության, միջազգային հարաբերությունների, մշակութաբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետների ուսանողների, ինչպես նաև ընթերցող լայն շրջանակի համար:

ՀՏԴ 28(075.8)

ԳՄԴ 86.38g73

ISBN 978-5-8084-2466-1

© ԵՊՀ հրատ., 2020

© Հովհաննիսյան Դ., 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ5

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ9

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 2. ՆԱԽԱԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՐԱՔԻԱ:
ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ 32

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 3. ՆԱԽԱԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՐԱՔԻԱ:
ԳԻՏԵԼԻՔԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ 43

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 4. ԱՐԱՔԱԿԱՆ ԹԵՐԱԿՂՋԻՆ ԵՎ
ՔԱՐՈՋԻ ՍԿԻՋԲԸ58

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 5. ՄԵՔՔԱ՝ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ 72

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 6. ՄԵՔՔԱ՝ ՔԱՐՈՋԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ83

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 7. ՄԵՔՔԱ՝ ԴԱՎԱՆԱՔԱՆԱԿԱՆ
ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ96

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 8. ՄԱՐԳԱՐԵՆ ՈՐՊԵՍ ՈՒՄՄԱՅԻ
ԱՌԱՋՆՈՐԴ.....111

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 9. ԾԵՍԻ ԵՎ ՕՐԵՆՔԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ:
ԿՐՈՆԻ ԵՎ ՀԱՎԱՏԻ ՀԻՄՔԵՐ123

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 10. ՄԱՐԳԱՐԵՈՒԹՅԱՆ ԱՎԱՐՏԸ ԵՎ ՂՈՒՐԱՆԻ ԳՐԱՌՈՒՄԸ.....	138
ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 11. ՄՈՒՀԱՄՄԱԴԻ ՔԱՐՈԶԻ ՈՃԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....	152
ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 12. ՈՒՄՄԱՆ ՄԱՐԳԱՐԵԻՑ ՀԵՏՈ.....	162
ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 13. ՇԻԱՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱԳՈՒՄԸ...178	
ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 14. ԳԻՏԵԼԻՔԻՑ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ.....	189
ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 15. ԱՐԳԵԼՎԱԾՆ ԻՍԼԱՄՈՒՄ (ՀԱԼԱԼ ԵՎ ՀԱՐԱՄ).....	201
ՏԵՐՄԻՆԱԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ.....	210
ԱՐԱԲԵՐԵՆԻ ԳՐԱԴԱՐՁԱԿԱՆ-ՀՆՁՈՒՅԹԱԳՐԱԿԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ.....	226

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Մենք, որպես ժողովուրդ և մշակույթ, դարեր շարունակ ապրել ենք մուսուլմանական շրջապատում՝ այս հանգամանքից բխող բոլոր հնարավոր հետևանքներով: Միայն Խորհրդային Միության կազմում գտնվելու ժամանակաշրջանում Արևելյան Հայաստանի բնակչությունը մեկուսացվել է իր այս միջավայրից: Ցեղասպանության հետևանքներից մեկն էլ այն էր, որ Արևմտյան Հայաստանի բնակչության այն մասը, որը փրկվեց ոչնչանալուց, մասամբ բնակություն հաստատեց արաբական միջավայրում, այսինքն՝ չնայած, որ օսմանական (թյուրքական) միջավայրը փոխվեց արաբականի, սակայն մուսուլմանականը, հատկապես՝ սուննի հանաֆիական մուսուլմանականը, հիմնականում մնաց նույնը: Այս հանգամանքը կարևոր էր, քանի որ հնարավոր էր դարձնում արդեն իսկ գոյություն ունեցող ադապտացիոն ունակությունների և գործիքների կիրառումը նոր պայմաններում, ինչը նշանակում էր (շարիաթի համակարգը այդ հնարավորությունը տալիս է) մաքսիմալ հնարավոր մեկուսացում, կենտրոնացում ներհամայնքային կյանքի վրա և արտահամայնքային շփումների հնարավորինս սահմանափակում: Այս մոտեցումը խիստ սահմանափակում էր հայ փոքրամասնության սոցիալականացումը, սակայն նպաստում էր էթնոպահպանական գերխնդրի լուծմանը: Այս իրավիճակի կողմնակի արդյունքներից մեկն այն էր, որ մուսուլմանական երկրներում բնակ-

վող մեր հայրենակիցները իսլամի վերաբերյալ իրենց գիտելիքներով շատ չեն տարբերվում Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից:

Հայաստանի Հանրապետությունը իր ձևավորման պահից գտնվում է այնպիսի աշխարհաքաղաքական իրավիճակում, որը պարտադրում է հստակ պատկերացումներ ունենալ մեր պետության հետ տարբեր տիպի հարաբերություններ ունեցող մուսուլմանական պետությունների և կազմակերպությունների, ինչպես նաև այդ երկրների հասարակությունների որակների և հատկությունների մասին: Առանց իսլամի մասին գիտելիքների դա անհնար է: Բանն այն է, որ իսլամը, բացի կրոն լինելուց, և՛ ապրելակերպ է, և՛ մտածելակերպ, ինչը հատուկ է եղել նաև ավելի հին կրոններին իրենց պատմության որոշակի փուլերում: Ուստի առանց պատկերացումների մուսուլմանական կրոնի առանձնահատկությունների, շարիաթի օրենքների ձևավորման տրամաբանության, մուսուլմանական պետության և կառավարման վերաբերյալ ստեղծված տեսությունների, հայեցակարգերի և մոտեցումների, հավատացյալների առօրեական կյանքի և այլն, շատ դժվար է համարժեք քաղաքական դիրքորոշումների և վերաբերմունքի ձևավորումը:

Շնորհիվ Բուն.ամ-ի (Boon.am) թիմի նախաձեռնության՝ ես 2017 թ. ընթացքում ինտերնետային սփռմամբ ներկայացրեցի 50 դասախոսություններից բաղկացած շարք, որը նվիրված էր իսլամին: Ի զարմանս, այդ շարքն ինձ համար անսպասելի շատ դիտորդներ ունեցավ, ինչն ակնհայտ դարձրեց այն իրողությունը, որ մեր հասարակության մեջ շատ մեծ է հետաքրքրությունն այսպես կոչված «իսլամական աշխարհի» և իսլամի՝ որպես կրոնի, հավատի և որոշ իմաստով՝ նաև ապրելակերպի նկատմամբ:

Բուն.ամ-ով սփռված դասախոսություններին հիմնական հասցեատերն էր այս կրոնից անտեղյակ լսարանը, այսինքն՝ թեմանե-

րը, գաղափարները և խնդիրները ներկայացվում էին հնարավորինս պարզ և մատչելի ձևով: Սակայն տարիներ շարունակ ես իմ ուսանողներից բողոքներ էի ստանում, որ «իսլամագիտություն» դասընթացի համար հայերենով չկա այնպիսի ամբողջական աշխատանք, որը հնարավոր լիներ օգտագործել որպես հիմնական դասագիրք: Ուսանողների բողոքին իրենց ձայնն ավելացրեցին մի քանի իմ հարգանքը վայելող գործընկերներ, որոնց որոշ մասը արևելագետներ չէին, ինչն ինձ հուշեց, որ այդ դասախոսություններն այնուամենայնիվ բավական խորություն չեն ապահովում տարբեր տիպի մարդաբանական ոլորտներում խորացած հետազոտողների համար: Այս բացը համապատասխան դասագրքով լրացնելը դարձավ ևս մեկ դրդապատճառ:

Վերջապես, այս դասախոսությունների շարքը հնարավորություն է տալիս ներկայացնել երկար տարիների ընթացքում ձևավորված իմ որոշ մոտեցումներ իսլամի զարգացման տրամաբանության, այս կրոնի շրջանակներում ծնված և ապա ինքնուրույն կյանքով ապրող և զարգացող գաղափարների և տեսությունների վերաբերյալ, որոնք միշտ չէ, որ համընկնում են ընդունված տեսակետների հետ:

Շնորհակալություններ

Նախևառաջ, շնորհակալ եմ քուվեյթյան Ալ-Բաբտեյն հիմնադրամին՝ ԵՊՀ արաբագիտության ամբիոնին օժանդակություն ցուցաբերելու համար: Հիմնադրամի իրականացվող ծրագրի մի մասն էլ այս հատորն է:

Շնորհակալ եմ Բուն.ամ-ի ամբողջ թիմին, հատկապես՝ Քրիստինե Արմենակյանին և Գեմաֆին Գասպարյանին իրենց ավյունի և լայնախոհության համար:

Շնորհակալ եմ իմ գործընկերներին, առանց որոնց օգնության շատ ավելի դժվար կլիներ ամբողջացնել այս հատորը: Ինձ համար հաճույք է անվանապես նշել նրանց՝ Հայկ Քոչարյան, Հասմիկ Փարեմուզյան, Շուշան Կյուրեղյան, Տաթևիկ Մկրտչյան, Աննա Գևորգյան:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 1.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նոր սկզբնավորվող քաղաքակրթության ակունքներում սովորաբար այն բազային արժեքն է¹, որն իրենից ներկայացնում է ոչ միայն նոր ձևավորվող արժեհամակարգի հիմքն ու թախմորը, այլև իր մեջ ներառում է այնպիսի մեխանիզմ, որը պետք է քանդի նախորդ արժեհամակարգը (ի դեպ, նախորդ համակարգի առանձին տարրեր ընտրվում են, վերաիմաստավորվում և ասիմիլացվում նոր արժեհամակարգին): Այդ արժեհամակարգի ակունքներում կանգնած է անհատը, որը, այս կամ այն գաղափարներից ելնելով, ընդունում է դա՝ մարմնավորելով այն իր կյանքով, քանի որ արժեքը, ինչպես նշում էր Վիշեսլավցևը, չէր կարող միանշանակորեն ընկալվել միայն հրամանով կամ ստիպողաբար: Այն գրեթե միշտ սոսկ հնարավորությունների իրականություն դառնալու մոդալությունն է²:

Այն մարդը, որը դառնում է Ալլահի միակության և միասնական լինելու բազային արժեքի կրողը, Մուհամմադ իբն Աբդալլահն

¹ Ըստ Մաքս Վեբերի՝ արժեքն այն է, ինչը մեզ համար կարևոր է, որով ուղղորդվում ենք մեր կյանքում, այն է, ինչին մենք ուշադրություն ենք դարձնում: Այնպես, ինչպես կանտյան «տարածություն» և «ժամանակ» հասկացություններն են, վեբերյան արժեքը թույլ է տալիս մարդուն ձևափոխել քառսը (անկանոն տարածությունն ու ժամանակը) կոսմոսի (միմյանց փոխկապակցված և կանոնակարգված տարածությունն ու ժամանակը): «Բազային արժեք» հասկացությունը, մեր պատկերացումներում, նշանակում է, արժեք, որը ոչ միայն տվյալ համակարգի կենտրոնն է, այլև գեներացնում է այլ համակարգեր: Բազային արժեքը կանխորոշում է մշակութային նորմերի և կառուցվածքային առումով աչքի ընկնող տարրերի ձևերն ու գոյությունը, որոնց միջոցով էլ տվյալ քաղաքակրթության շրջանակներում կենդանություն են ստանում:

² Вышеславцев Б. П., Этика преображенного Эроса. Проблемы закона и благодати. М., 1994, с. 99.

է, և նրա կողմից հռչակված բանաձևը հետևյալն էր՝ «Վկայում եմ, որ չկա աստվածություն Ալլահից բացի, և Մուհամմադն է նրա մարգարեն»: Այս բանաձևում առկա է ամենաբազային արժեքի բացարձականացման գործընթացը՝ Ալլահի միասնականության և միակության գաղափարը, և դրա հաստատման միակ ճանապարհը հնարավոր է միայն Մարգարեի³ միջոցով:

Մուհամմադ մարգարեի⁴ քարոզը ամենասկզբում հետապնդում էր մի կարևոր նպատակ, մատնանշել և ցույց տալ կյանքի և աշխարհի միակ պատճառն ու աղբյուրը: Այդ ճշմարտության ընկալումը ոչ միայն ինքնարժեք էր, այլև թույլ էր տալիս Աստծո միջոցով հասկանալ կյանքն ու աշխարհը, միմյանց հետ կապակցել և ներդաշնակեցնել այն ամենն ինչ հայտնի էր դրա մասին, սակայն միայն Աստծուց ելնելով և նրա միջոցով: Այլ կերպ ասած՝ վերափոխել անհասկանալի և անկանոն աշխարհը հասկանալի և կանոնակարգված աշխարհի, որը հիմնված կլինի պատճառահետևանքային հարաբերությունների մի ամբողջական համակարգի վրա, քանի որ միշտ առկա է և նախորդում է նախապատճառը՝ Ալլահը:

Ի տարբերություն ջահիլիայի (նախաիսլամական) ժամանակաշրջանի, երբ կային կյանքի բազում «աղբյուրներ» և պատճառներ, տեղի ունեցող իրադարձություններ և երևույթներ, որոնք էլ իրենց արտահայտումն էին գտնում բազում աստվածությունների մեջ, աստիճանաբար, ցեղերի և տոհմերի միջև կապերի ամ-

³ Քրիստոնեությանը հակադրվելով՝ շեշտվում է մարգարեի մարդկային էությունը՝ ի տարբերություն Քրիստոսի: Օրինակ հետևյալ սուրայում՝ (արաբ. سورة [sūra])՝ գլխում «Կարդա, չէ որ ես մարդ եմ, ինչպես և դուք, ինձ հայտնվել է, որ ձեր Աստվածը մեկն է» (Ղուրան, 41: 5):

⁴ Մուսուլմանական ավանդույթում Մարգարեի անունից հետո օգտագործվում է صَلَّى اللهُ عَلَيْهِ وَسَلَّمَ (Օրհնի նրան Ալլահը և ողջունի) բանաձևը, իսկ նրա զինակիցների հիշատակելիս կիրառվում է رَضِيَ اللهُ عَنْهُ (Գոհանա Ալլահը նրանով) արտահայտությունը:

րապնդման (ինտեգրացիոն գործոնների ուժեղացման արդյունքում) հետևանքով հավաքվում էին տվյալ ցեղերի և տոհմերի համար ընդհանրական համարվող միասնական պանթեոնում, հստակ էր դառնում, որ Մուհամմադի Ալլահը միակն է:

Մեքքայի և նրա շրջակայքի բնակիչների սոցիալ-մշակութային գիտակցությունը, որում ծնվել և իր քարոզն է սկսել Մարգարեն, դեռևս մինչև քարոզը սկսելու ժամանակահատվածում ենթարկվել էր զգալի փոփոխությունների: Բնության ոչ բարենպաստ պայմանների բերումով կարճատև համեմատական աղքատության իրադրություն էր ստեղծվել (հողագործություն անելը հնարավոր չէր հողի անբերրիության պատճառով, իսկ անասնապահությունը կարողանում էր կերակրել ոչ ավել, քան հազար մարդ⁵), մեքքացիները զբաղվում էին քարավանային առևտրով, որն էլ հանգեցրել էր տոհմացեղայինի համեմատությամբ առավել զարգացած և կազմակերպմանն ու կառավարմանը միտված սոցիալական համակարգերի ստեղծմանը:

Մեծ առևտրային քարավանների գործարկման և անվտանգության ապահովման համար անհրաժեշտ կառավարման առավել արդյունավետ համակարգի ստեղծման և զարգացման շնորհիվ տվյալ կառավարման համակարգի ուղեծրում էին հայտնվում աստիճանաբար ավելի մեծ թվով սոցիալական ենթահամակարգեր:

Մեքքացիները սկզբնական շրջանում ստիպված էին քարավանների ապահով տեղափոխման համար դեպի հարավ՝ Եմեն և դեպի հյուսիս՝ Սիրիա անցնող ճանապարհների բեղվինական ցեղերի հետ պայմանավորվել, թե ինչքան պետք է վճարեն տեղի քոչվոր ցեղերի առաջնորդների հետ իրենց քարավանների ապա-

⁵ Այս մասին տե՛ս՝ Большаков О. Г., История халифата. Т. 1. М., 1989, с. 48:

հովության պահպանման համար, իսկ ավելի ուշ՝ նրանց հետ համաձայնագիր ստորագրել հասույթի իրենց մասնաբաժնի չափի վերաբերյալ: Այս կերպ անկանխատեսելի քոչվորները, որոնք իբրև պաշտպաններ չէին կարող վստահություն ներշնչել, «վճարվող պաշտպաններից վերածվում էին գործընկերների» և համախոհների⁶, իսկ որ ամենակարևորն է, առաջանում էին պարբերական հարաբերություններ, որոնք դուրս էին արյունակցական-տոհմային կապերի շրջանակից:

7-րդ դարի սկզբին Մեքքայի բնակչությունը տարբեր հաշվարկներով կազմում էր 8-12 հազար մարդ, որը պայմանավորված էր ոչ միայն արյունակցական հարազատության հիմունքներով առևտրի աշխուժացմամբ և ամրապնդմամբ, այլև Մեքքայի շրջակայքի բեդվիանական ցեղերի միջև փոխադարձ շահերի վրա հիմնված հարաբերություններով և միևնույն ժամանակ Սասանյան Իրանի և Բյուզանդիայի միջև ակտիվ ռազմական գործողությունների թատերաբեմից հեռու լինելու հանգամանքով: Կառավարման համակարգի կատարելագործումը, փոխհարաբերությունների շրջանակի ընդլայնումը (ոչ միայն միմյանց հարևանությամբ գտնվող ցեղերի միջև, այլև այն սիրիական և եմենական տարածքների բնակչության հետ, որոնց հետ առևտրային հարաբերություններ էին հաստատվել), ինչպես նաև այդ փոխադարձ շփումների որոշակի գործառույթային փոփոխությունների շնորհիվ, նաև Մեքքայի բնակչության թվային աճը, հանգեցրին լրջագույն աշխարհայացքային փոփոխությունների: Մասնավորապես փոխվեցին աշխարհընկալումը կարգավորող այնպիսի հիմնաքարային կատեգորիաներ, ինչպիսիք են ժամանակը և տարածությունը: Ժամանակի և տարածության դիսկրետությունը հակասու-

⁶ Այս մասին տե՛ս՝ Большаков О. Г., История халифата. Т. 1, М., 1989, с. 48:

թյան մեջ էին մտնում գոյության շարունակականության և ընդլայնվածության զգացողությունների հետ:

Ժամանակը սկսում է ընկալվել ոչ միայն որպես ցիկլ, որը հիմնված էր իրադարձությունների (ուխտագնացություն, քարավանների գնալն ու վերադառնալը և այլն) անընդհատ կրկնությամբ և տարվա եղանակներով, այլ որպես անընդհատ մի բան, որն ունի սկիզբ և չունի ավարտ (սկզբնական շրջանում հիմնադրից սերունդներին փոխանցվող): Տարածությունը նույնպես կորցնում է իր կտրտվածությունը: Այն արդեն իր մեջ ներառում է ոչ միայն այն տարածքները, որոնք բնակեցված են և քաղաքակրթության ենթարկված «ցեղի մարդկանց»՝ *կաումի* (արաբ. قوم [qā'im]) կողմից, ինչպես, օրինակ, օազիսները, քոչվորական տարածքները, ճամբարների համար նախատեսված վայրերը, աղբյուրները, անապատային օգտագործվող հատվածները և այլն: Այն ներկայացվում է (սկզբնական շրջանում միայն ֆրագմենտար) որպես ժամանակով չափվող ճանապարհ, սկիզբ ու վերջ ունեցող (այստեղ կարելի է հիշել, որ «Արաբների օրերը» կոչվող հնագույն պատմություններում դա ոչ մի ձևով չէր չափվում. դրանք գոյություն ունեին միայն նրա շնորհիվ, որ այդ վայրերում իրադարձություններ էին տեղի ունենում):

Հին միջուղգիական տեքստն⁷ այլևս չէր բացատրում և չէր կարողանում հիմնավորել աշխարհի նոր ընկալումը: Ներդաշնակությունը խախտված էր, կոսմոսը վերածվում էր քաոսի: Հենց այս ճգնաժամային պայմաններում էլ սկիզբ են առնում նոր կրոնական համակարգերը, տեղի են ունենում աստվածությունների փոփոխ-

⁷ Այս մասին տե՛ս՝ Оганесян Д. А., Хабар в культурном сознании общества доисламской и раннеисламской Аравии // Проблемы арабской культуры, М., 1987, с. 302-312:

ման գործընթացները (օրինակ՝ հնդկական միֆոլոգեման ունի աստվածների 7 սերունդ):

Մուհամմադ մարգարեն իր աշխարհին հայտնեց նոր գիտելիքի՝ Ալլահի և նրանից բխող գիտելիքի մասին: Նրա միջոցով Աստված հայտնեց այն մասին, որ ավարտվել է չիմացության ժամանակաշրջանը՝ ջահիլիան (արաբ. جَاهِلِيَّة [jāhiliyah]): Մարգարեն իր բոլոր ջանքերն ուղղում է նրան, որ իր համաքաղաքացիներին համոզի հրաժարվել ճակատագրական չիմացությունից, որի պատճառով մարդիկ մեծամտացել են և հրաժարվել են իրենց պատվից և արժանապատվությունից, որոնք պետք էին, որպեսզի համապատասխանեին «մուրովայի» (արաբ. مروءة [murūʿa]) բարձր պահանջներին (ճշմարիտ բեղուկի առաքինության համագումար): Մեքքայական (Մեքքայում արտասանված) առաջին սուրաներում խոսվում է այդ մասին: Միայն մի քանի հատված ներկայացնենք. «Օ, ոչ, մարդը ըմբոստանում է նրանից, որ տեսնում է իրեն հարստացած: Չէ՞ որ դեպի Աստված է վերադարձը», (Ղուրան, 96:6-8): «Վայ ամեն զրպարտիչի, հեզնողի, որը կուտակել է ունեցվածք և հաշվարկել, համարում է, որ իր ունեցվածքն իրեն կհավերժացնի» (Ղուրան, 104:1-3): «Սակայն նա, ով (Աստծո ճանապարհին) ողջախոհությունը ընտրի և ընծայաբար ծախսի, նա, ով համարել է ճշմարտությունը որպես ամենից հիասքանչ բանը, կթեթևացվի նրա գործը: Իսկ նա, ով ժլատ է և հարստացել է և համարել է սուտը ամենից հիասքանչ բանը, նրա բեռը մենք կծանրացնենք: Եվ չի փրկի նրան իր ունեցվածքը, երբ որ նրան տապալեն (Ղուրան 92:5-11): «Նրանք, ովքեր մեծամտացել են և մերժել են Ալլահին, կպատժվեն, իսկ նրանք, ովքեր հավատացել են և բարի գործեր են արել, նրանց պարգևը անհամրելի կլինի (Ղուրան 95:6): Այսպիսով, բազային արժեքը՝ Ալլահը, կապված է իր հետ առնչվող արժեքների մի ողջ համակարգի հետ: Ալլահը,

բարեգութ և գթասիրտ, ստեղծել է մարդուն արյան գնդիկից (Ղուրան 96:2), «... սովորեցրեց նրան գրչով, սովորեցրեց մարդուն այն, ինչ նա չգիտեր» (Ղուրան 96:4-5), և նախ և առաջ այն, որ այն ինչ բարի է և ճշմարիտ, Ալլահից է սերում, իսկ չարն ու սուտը՝ գայթակղող սատանայից: Ամեն ինչի համար պետք է պատասխան տալ («և ձեզնից, ով բարին է արել, կտեսնի այն, և ով չարն է արել, կտեսնի դա» Ղուրան 99:7-8): Միակ և անկրկնելի Ալլահի նկատմամբ հավատը, այլ կերպ ասած, բազային արժեքի իրագործման ձևը մարգարեին հատուկ ժամանակակից մշակութային ունիվերսումում հասկանալի բացատրությունների կարիք էր զգում: Ալլահին պետք էր հավատալ, քանի որ «նա էր, որ ստեղծեց երկինքն ու երկիրը վեց օրում, և նրա արքայությունն էր ջրի վրա, որպեսզի փորձեր ձեզ, թե ով է ձեզնից ավելի ուժեղ գործի մեջ» (Ղուրան 11:9), «...նա էր, որ շողշողացող դարձրեց արևը, իսկ ամիսը՝ լույս, և այնպես դասավորեց նրանց կանգառներով, որ դուք իմանայիք տարիները և օրերը: Ալլահը ստեղծեց այդ ամենը միայն ճշմարտությամբ՝ իմացող մարդկանց համար թողնելով նշաններ: Իրականում, օրվա ու գիշերվա միմյանց հաջորդելը, ու նաև այն ամենն ինչ Ալլահը ստեղծեց երկնքում ու երկրի վրա, աստվածավախ մարդկանց համար էին նշաններ» (Ղուրան 10:5-6):

Ալլահին պետք է նաև հավատալ, որովհետև «նա ունի թաքուն իմաստների բանալիները. և դրանք գիտի միայն ինքը: Նա գիտի, թե ինչ կա երկրի վրա, և թե ինչ կա ծովում, տերևն ընկնում է միայն իր իմացությամբ, չկա երկրի մթության մեջ մի որևէ հատիկ, չկա չոր ու թաց մի բան, որը չլիներ պարզ գրքում (6-59) և նաև նրա համար, որ «նրա մոտ պետք է վերադառնաք բոլորդ, ճշմարիտ Ալլահի խոստմամբ: Ահա նա սկսում է արարել, հետո նորից է արարում, որպեսզի փոխհատուցի նրանց, ովքեր հավատացել են

իրեն և արդարամտությամբ բարի գործեր են արել: Իսկ նրանք, ովքեր, չեն հավատացել, նրանց համար նախատեսվում է եռացող ջուր և տանջալից պատիժներ...» (Ղուրան 10:4): Այսպես ներմուծվում են ևս երկու բազային հասկացություններ՝ նախախնամություն և արդարություն:

Փաստորեն, քայլ առ քայլ մեքքայական սուրաներում աստիճանաբար կառուցվում է հարաբերականորեն ամբողջական արժեհամակարգ, որը գեներացվում էր բազային արժեքով՝ Ալլահով: Ալլահի նկատմամբ հավատը այդ հիմքի հաստատման ճանապարհն էր: Միննույն ժամանակ տեղի է ունենում այս ամենի ներմուծումը մշակութային ունիվերսում, որն առաջանում է Ալլահի նկատմամբ հավատի հիմքով այն մարդկանց շրջանում, «ովքեր հավատացել էին» (և դրա շնորհիվ առանձնանում էին նրանցից, «ովքեր չէին հավատացել»)՝ իր հետ բերելով արժեքներ՝ հետևել «այն ամենին, ինչ քեզ ներշնչվում է» և դիմանալ այնքան, «...մինչև Ալլահը կդատի: Չէ՞ որ Նա է ամենից լավ դատավորը» (Ղուրան 11:109), աղոթել և լինել աստվածավախ (Ղուրան 6:70-71), բարի գործեր անել և այլն:

Կենտրոնական և Արևմտյան Արաբիայի արաբական ցեղերի շրջանում քրիստոնեության և հուդայականության համեմատական տարածվածության շնորհիվ ժամանակի և տարածության ձևափոխված բաղադրիչները բնականոն կերպով դարձան նոր դավանանքի հենքը: Ժամանակի միագծությունը, որը սկսվում էր աշխարհի ստեղծումով և ավարտվում էր Ահեղ Դատաստանի օրը, և տիեզերքի անսահմանությունը քանդեցին տոհմացեղային գիտակցության հիմքերը՝ այն դուրս բերելով իր լոկալ սահմանափակությունից և դիսկրետությունից: Աշխարհի վերափմաստավորման նոր համակարգն աստիճանաբար ընդունվում էր այն մարդկանց կողմից, որոնք, առնչվելով միաստվածության գաղափարին,

մտնում էին Մուհամմադի շուրջը ձևավորվող մուսուլմանների համայնքի մեջ: Այն համակարգը, որը ստեղծվում է քարոզվող բազային արժեքի հիմքի վրա, դեռևս շատ ամորֆ էր, և այդ իսկ պատճառով կրոնական և սոցիալական կարգերը գործնականում դուրս չէին գալիս Ալլահին հավատալու էթիկական նորմերի շրջանակից: 622թ. սեպտեմբերի 24-ին իր հետևորդների հետ Մուհամմադ մարգարեն *հիջրա* (արաբ. هجرة [hijra]) կատարեց Մեքքայից, որտեղ նրան հետապնդում էին, և տեղափոխվեց Յասրիբ, հետագայում՝ Մադինա, որտեղ ապրում էին մի քանի տարբեր ցեղեր, որոնք պարբերաբար միջցեղային արյունակցական պատերազմների մեջ էին գտնվում: Հենց այստեղ էլ Մուհամմադ մարգարեի կողմից քարոզվող արժեքային համակարգի տարրերից մեկը սկսում է տարածվել. աշխարհը սկսում է բաժանվել ոչ թե տարբեր ցեղերի կամ տոհմերի պատկանելությամբ մարդկանց խմբերի, այլ հավատացյալների, որոնք գիտեին ճշմարտությունը, և անհավատների: Ահա այս քայլով Մարգարեին հաջողվում է դադարեցնել երկար տարիներ տևող արյունալի պայքարը տարբեր տոհմացեղային խմբավորումների միջև:

Մադինա տեղափոխմանը նախորդել էր Մուհամմադի և յասրիբյան *բանու աուս* ու *բանու խազրաջ* ցեղերի միջև Ալ-Ակաբայի պայմանագրի կնքումը, որով այս երկու ցեղերը ընդունում էին Մուհամմադին որպես նոր դավանանքի ուսուցիչ և համայնքի ղեկավար: Որպես հոգևոր և աշխարհիկ առաջնորդ՝ Մուհամմադ մարգարեի քայլերն ուղղված էին ումմայի (արաբ. أمة [umma])՝ մուսուլմանական համայնքի ձևավորմանը⁸: «Ումմա» հասկացությունը բավականին դժվար է ներկայացնել մեկ սահմանամբ: Մեքքայական սուրաներում ումմա էին համարում այն մարդկանց

⁸ Տե՛ս՝ Քոչարյան Հ., Ալ-Ակաբայի հանդիպումները որպես ումմայի հիմնադրման նախապայման // «Իրան-Նամե», հատոր 39, 2005, էջ 36-38:

խմբին, որոնք միևնույն հոգևոր առաջնորդն ունեին, ումից նրանք ստացել էին հավատքն ու ուսմունքը: Մադինայական սուրաներում ումմա էին անվանում Մադինայում բնակվող մուսուլմաններին և հրեաներին⁹: Ինչպես նշում է Ե. Ա. Ռեզվանը, «մադինայական ումմայի սոցիալական կազմակերպության հիմքը ենթակայության-երաշխավորության՝ վալա՝ ջիվար հարաբերություններն էին, որոնք էլ, ի տարբերություն մինչիսլամական ժամանակաշրջանի պայմանական բնույթի, ձեռք են բերում նոր բացարձակ բնույթ:

Ումմայի բոլոր անդամները միմյանց հետ կապված էին վալա՝ ջիվար կապերով՝ միևնույն ժամանակ գտնվելով «գերագույն Մաուլայի՝ վալիի (ولی)՝ Ալլահի հովանու ներքո: Ումմայի անդամների հովանավոր՝ վալի է դառնում հենց ինքը՝ Մուհամմադը, որն էլ Ալլահի կամքի հաղորդողն էր երկրի վրա: Ումմայի ստեղծումը որպես սոցիալական երևույթ ազդարարում էր գերագույն իշխանության բացարձակ բնույթի պայմաններում գերակա-ենթակա համակարգի ստեղծման մասին¹⁰: Ինչպես մեզ թվում է, այստեղ կարելի է մեկ այլ կերպ ձևակերպել՝ «Ալլահի գերագույն իշխանություն», քանի որ Մուհամմադն իր կենդանության օրոք կատարում էր Ալլահի և Ալլահի ումմայի միջև կապի-միջնորդի դեր: Ալլահի ումման ապրում էր՝ հիմնվելով մարգարեի կողմից փոխանցված տեքստի՝ Ղուրանի վրա, որն էլ Տիրոջ վերջնական հայտնությունն էր (ամբողջական հայտնություն, քանի որ Մուհամմադն իրեն համարում էր «մարգարեների կնիք», այսինքն՝ Աստծո կողմից ուղարկված վերջին առաքյալ): Իսկ տեքստը համարվում էր հենց Ալլահի խոս-

⁹ Տե՛ս՝ Քոչարյան Հ., «Ումմա» հասկացության զարգացումը Ղուրանի տեքստում //ORIENTALIA, հ. 2, 2004, էջ 78-87, Քոչարյան Հ., «Ումմա» եզրի կիրառությունը հադիսներում //Մերձավոր Արևելք, Երևան, 2005, էջ 157-161:

¹⁰ Резван Е. А., Умма // Ислам. Энциклопедический словарь. М.: Наука, 1991, с. 241.

քը, այն ճշմարտությունը, որը նրանց էր փոխանցվել Մուհամմադի միջոցով:

Բազային արժեքների հիերարխիան այսկերպ համալրվում էր: Այժմ այն ուներ հետևյալ տեսքը՝ Ալլահ-Ռասուլ Ալլահ (Ալլահի առաքյալ)-ուսմաթ Ալլահ (Ալլահի ուսմա): Ալլահի կամքը իրագործվում էր իր առաքյալի միջոցով իր համայնքում: Եթե Ղուրանի մեքքայական սուրաները բանաստեղծական կառուցվածքով միաստվածության, էթիկական նորմերի, հանդերձյալ կյանքում փոխհատուցման, Ահեդ դատաստանի օրվա, մարգարեների պատմության և Մուհամմադ մարգարեի՝ որպես վերջին մարգարեի առաքելության մասին էին, ապա մադինայական հայտնությունն այլ բովանդակություն ուներ: Դրանք պարունակում են բազմաթիվ, երբեմն էլ մանրակրկիտ կերպով մշակված օրենքներ, որոնք կարգավորում էին նոր ձևավորված պրոտոպետությունը: Օրինակ՝ ունեցվածքի և ժառանգության հարցերի, տարբեր բնույթի ոճիրների և պատիժների, ռազմական ավարի բաժանման և սեփականության իրավունքի վերաբերյալ կարգավորումները: Այստեղ էլ մշակվում է Ալլահի երկրպագության ծիսակարգը, ձևավորվում և սահմանվում են ընտանեկան և հասարակական կյանքի նորմերը, մշակվում են դատաիրավական համակարգի տարրերը:

Այս օրենքները, որոնք ի հայտ էին գալիս որպես համայնքի կյանքում առաջացած կոնկրետ հարցերի պատասխաններ, երբեմն հետևում էին ձևավորված ավանդույթներին, երբեմն էլ դրանք ամբողջությամբ մերժում էին: Դրանք ի հայտ էին գալիս համայնքի զարգացմանը և 7-րդ դարի արաբական ցեղերից միասնական պետության և հասարակության ձևավորմանը զուգընթաց: Լինելով Ալլահի ամբողջական և վերջնական հայտնության՝ Սուրբ գրքի մի մաս, որը հավերժ է և չարարված (Մուհամմադին այն միայն որպես հայտնություն է տրվել)՝ այդ օրենքները և

դրոյթները կրոնում (իսլամում), ունենալով սրբազան և հավերժական կարգավիճակ, հանգեցնում էին Աստծո միակ և անկրկնելի լինելու հավատի արտահայտմանը: Սակայն համայնքը, աստիճանաբար ընդլայնելով իր ազդեցությունը, դեռևս Մուհամմադ մարգարեի կենդանության օրոք դառնում է բավականին բարդ և բազմաճյուղ պետական և սոցիալական համակարգ, որն իր մեջ ներառում էր գրեթե ողջ Արաբական թերակղզին: Իր ուժեղացմանը զուգընթաց ումմայի ներհամայնքային կապերն ավելի են բարդանում և խճճվում, որը տեղի է ունենում նաև իրենց ազդեցության տակ հայտնված տարբեր քաղաքների ու բնակավայրերի ցեղերի և բնակիչների հետ փոխհարաբերությունների արդյունքում:

Մադինայաբնակ հրեաների հետ վեճերի և պայքարի արդյունքում տեղի է ունենում կրոնադավանական ուսմունքի և ծիսակարգի ձևավորումը: Մեքքացիների և նրանց դաշնակից ցեղերի հետ ռազմական դիմադրությունը, իսկ հետագայում նաև բախումները քրիստոնյաների և հրեաների (*ահլ ալ-քիթաբ' գրքի մարդկանց*) հետ առաջացնում էր ստանդարտ ձևակերպումների մշակման կարիք: Սակայն, քանի դեռ Մարգարեն կենդանի էր, խնդիրներ չէին առաջանում, քանի որ Ալլահը նրա միջոցով իր կամքն էր թելադրում համայնքին, որպես սակրալ գիտելիք, որը ձևակերպվում էր որպես Աստծո կողմից տրված օրենք: Ումմայի կենսագործունեության գրեթե բոլոր ոլորտներում կրոնի նորմատիվ և կարգավորող դերը հանգեցրեց նրան, ինչը Բեռնար Լյուիսի ձևակերպմամբ հետևյալն էր. «Իսլամն իր հիմնադրման ժամանակներից նույնականացվում էր պետության հետ, և պետության ու կրոնի միասնականության նկատմամբ վստահությունը ամուր կերպով ամրապնդվել էր հավատացյալների հիշողության և գիտակցության մեջ՝ հիմնվելով հենց իրենց իսկ սրբազան տեքստերի,

պատմության և փորձի վրա»¹¹: Այստեղ կարելի է այլ կերպ ձևակերպել. ոչ այդքան պետությունը, այլ հենց ումման էր համարվում արժեք, իսկ 632թ. մարգարեի մահից հետո, երբ «Ալլահի անմիջական ներգրավվածությունը» համայնքի կյանքում դադարեց, այն սկսվեց դիտարկվել որպես «գերագույն սուլվերենության երկրային կրող»¹²: Ինչպես վերը նշվել է, արժեքները ուղղություն չեն տալիս, այլ միայն գիտակցաբար ընտրություն կատարելու հնարավորություն են ընձեռում: Մաքս Վեբերը նշում է արժեքների երկակի բնույթը (օրինակ՝ առատաձեռնություն և ժլատություն, բարեգթություն և արդարություն և այլն), որոնք կոնֆլիկտի սկզբնավորման պատճառ են, սակայն միևնույն ժամանակ ընտրելու և դրա պատասխանատվությունը կրելու հնարավորություն են տալիս: Համայնքում, որը ղեկավարվում և առաջնորդվում է Ալլահի առաքյալի կողմից փոխանցվող աստվածային օրենքներով, ընտրության հնարավորություն չի նախատեսվում (բազային արժեքի ազդեցության շնորհիվ արժեքների կոնֆլիկտները միանշանակ կերպով լուծված են. Աստծո խոսքը բացարձակ ճշմարտություն է), բացառությամբ այն դեպքերի, երբ նման դրույթները սահմանված չեն: Երբ Մարգարեն այլևս կենդանի չէր, անհետանում էր ոչ միայն պատասխանների աղբյուրը, այլև սակրալ էությունը, որի իշխանությունն ուներ իրավունք և լիազորություններ՝ առանց կասկածի որոշումներ ընդունելու համար:

Մարգարեի մահից հետո հավատացյալների պատկերացումներում Ալլահի և իր համայնքի միջև կապն ընդհատվում է: Առաջ է գալիս երկու խնդիր.

¹¹ B. Lewis. The Return of Islam // Religion and Politics in the Middle East. Westview Press, 1981. P. 11.

¹² Резван Е. А., Умма // Ислам. Энциклопедический словарь. М.: Наука, 1991, с. 241.

ա) ո՞ւմ և ի՞նչ հիմքով պետք է համայնքի ղեկավարումը փոխանցվի,

բ) ո՞րտեղ փնտրել համայնքի կենսագործունեության ընթացքում առաջացած հարցերի պատասխանները:

Առաջին հարցի պատասխանները սկսեցին տրվել Մուհամմադ մարգարեի մահից անմիջապես հետո: Իշխանության համար սկսված պայքարը, որը զուգորդվում էր Ղուրանի և Սուննայի մեկնաբանության վերաբերյալ կարծիքների բախումներով, բյուրեղացնում է տարբեր կողմերի արժեքային հիմնադրույթները: Առաջին երեք խալիֆների՝ Աբու Բաքր, Օմար և Օսման, աջակիցները հիմնվում էին խալիֆի ընտրության սկզբունքի վրա՝ դրանով հաստատելով Ալլահի ումմայի առաջնայնությունը՝ որպես բազային արժեք: Մուհամմադ մարգարեի փեսայի՝ Ալի իբն Աբի Տալիբի աջակիցները ելնում էին այն համոզմունքից, որ նրան է պատկանում մարգարեի կողմից ժառանգված գերագույն իշխանության բացառիկ իրավունքը: Ինչպես կարելի է նկատել, շիաները ակտուալացնում են երկրորդ բազային արժեքը՝ Ալլահի առաքյալին: Այս գաղափարի զարգացմանը զուգահեռ մշակվում է «իմամաթի» ամբողջական հայեցակարգը: «Շիաները հերքում են մուսուլմանական համայնքի և պետության իմամի ընտրությամբ կատարելու սկզբունքը և հայտարարում են, որ գերագույն իշխանությունը ալիականների ցեղի ժառանգական իրավունքն է և սահմանվել է «աստվածային նախախնամությամբ»:

Ելնելով իմամության «աստվածային» բնույթից և նմանեցնելով այն մարգարեությանը՝ շիաները հավատի և աշխարհիկ կյանքի հարցերում գերագույն հեղինակություն էին համարում օրինական իմամին՝ աստվածային նախախնամության իրագործողին՝ երկրի վրա Աստծու փոխանորդին, Մարգարեի իմացության ժա-

ռանգորդին, «դարպաս», որի միջով հնարավոր է մոտենալ նրան¹³:

Եվ վերջապես երրորդ խումբը ելնում էր այն սկզբունքից, որ «Աստծուն ենթարկվելը մարդուն ենթարկվելուց ավելի կարևոր է», այսինքն՝ բազային արժեքներից հիմնվում էին «հավատ առ Ալլահի» վրա: Նման դիրքորոշումը, ինչպես նշում է Վեբերը, կրոնական պատերազմի անհրաժեշտություն է առաջացնում¹⁴: Նման պատերազմ սկսում են վարել *խարիջիները*, որոնք 657թ. Սիֆինի ճակատամարտի ժամանակ հայտարարում են, որ Ալիի (մահ. 660թ.) և Մուավիայի (մահ. 680թ.) միջև իշխանության պայքարում «որոշումը պատկանում է միայն Ալլահին»: Արդյունքում 12000 զինվոր ուղղակի լքում է խալիֆ Ալիի ճամբարը: Խարիջիները նշանակալի դերակատարում ունեն «հավատի և վերջինիս հետ գործողության փոխհարաբերությունների սահմանման միջոցով խալիֆայության տեսության հետ կապված դոգմատիկ հարցերի մշակման գործում: Գերագույն իշխանության հարցում խարիջիները դիմադրում էին ոչ միայն սուննիներին և նրանց կողմից խալիֆի ընտրության սկզբունքին, այլև շիաներին և նրանց՝ իմամաթի սակրալության և ժառանգականության պատկերացումներին: Նրանք գտնում էին, որ իմամաթի իրավունքին հավակնողի համար պարտադիր պայման էր Ղուրանին և Սուննային հետևելը, մարդկանց հետ արդարորեն վարվելու և նաև զենքը ձեռքին բռնապետ-առաջնորդի դեմ դուրս գալու ունակությունը»¹⁵:

Գաղափարական համակարգում հիմնվելով իսլամի արժեհամակարգի վրա՝ պետական կազմավորումների (համակարգերի)

¹³ Мухаммад Ибн Абд ал-Карим аш-Шахрастани. Книга о религиях и сектах / Перевод с араб., введение и комментарий С. М. Прозорова. М.: Наука (ГРВЛ), 1984, с. 220-221.

¹⁴ Вебер М., Избранные произведения. М., 1990, с. 325.

¹⁵ Прозоров С. М. ал-Хаваридж // Ислам: Энциклопедический словарь, с. 260.

հետագա պատմության ամբողջ ընթացքում, իշխանության ստեղծման և դրա փոխանցման սկզբունքի ընտրությունը պատվում էր վերոնշյալ երեք բազային արժեքների շուրջ:

Մուհամմադ մարգարեի մահից հետո ծագած երկրորդ հարցի պատասխանը շատ ավելի բարդ էր, քանի որ վերաբերում էր արժեհամակարգում փոփոխություններ մտցնելու խնդրին: Յուրաքանչյուր կրոն հիմնադրի մահից հետո ստիպված է լինում անցնել դոգմատիզացիայի և վերջնական տեսքի բերելու ուղով: Քանի դեռ կրոնի հիմնադիրը ղեկավարում է համայնքը, առաջացող խնդիրներն ու հարցերը անմիջական լուծումներ են ստանում:

Միևնույն ժամանակ դրանք ֆիքսելու անհրաժեշտություն չկար (հատկապես, երբ ինֆորմացիայի գրավոր փոխանցման համակարգը դեռ նորմավորված չի), միշտ կարելի էր մարգարեին հարցնել և ստանալ պատասխան: Նրա մահից հետո սկսվում է իր ուսմունքի ֆիքսման և պահպանման գործընթացը: Նախ և առաջ տեղի է ունենում Ղուրանի գրի առնելու գործընթացը: Ընդ որում միմյանցից որոշակիորեն տարբերվող տարբերակներից մեկն է ընտրվում և ճանաչվում կանոնիկ:

Այս ամենին զուգահեռ համայնքի կյանքը զարգանում է, սոցիալական կազմը բարդանում է, կառույցները (ենթակառուցվածքները) մեծանում են, իսկ ընթացքում առաջացող որոշ հարցերի պատասխանները ֆիքսված տեքստում չկային: Այնուհետև սկսվում է մի գործընթաց, որի մասին զգուշացնում էր Մարգարեն, սակայն ինչն անխուսափելի էր. սկսում են փոխանցել ոչ միայն ալլախները, այլև Մուհամմադ մարգարեից փոխանցված *հադիսները* (արաբ. حديث [ḥadīth])՝ մարգարեի կյանքի և գործունեությանն առնչվող պատումները: Երկար ժամանակ (մինչև 8-րդ դար) Մուհամմադ մարգարեի խոսքերի, գործողությունների, լուռ համաձայնության կամ անհամաձայնության մասին պատումները՝ *հադիս-*

ները, փոխանցվում էին բանավոր: 7-րդ դարի կեսերից մինչև 8-րդ դարի կեսերն ընկած ժամանակահատվածում անցում կատարվեց ինֆորմացիայի փոխանցման բանավոր համակարգից պահպանման և մշակման գրավոր համակարգ, որը անխուսափելի դարձրեց հադիսների հավաքագրումը: Այսպես էլ առաջանում է *Սուննայի* (արաբ. سنة [al-sunna]) տեքստային հիմնավորումն ու հաստատումը, որը Ղուրանից հետո դարձավ երկրորդ կարևոր աղբյուրը: Եթե Ղուրանը Ալլահի խոսքն էր, որն ուղղված էր Մուհամմադի միջոցով իր համայնքին, ապա Սուննան մարգարեի ճանապարհն էր՝ ումմայի համար օրինակը և վարքագծի նմուշը: Փաստորեն այս երկու «սրբազան գրքերն» էլ իրենց հաստատված և կանոնիկացված տեսքով դարձան իդեալական մշակութային գեներատորներ, որոնք իրենց մեջ ներառում են սահմանված արժեքների համակարգը: Այդ մշակութային գեներատորների շուրջն էլ տեղի է ունենում միջնադարյան արաբամուսուլմանական մշակույթի ամբողջական համակարգի տարրերի կառուցակցումը:

Ինֆորմացիոն համակարգի փոփոխություններին զուգահեռ տեղի ունեցող գործընթացներն ուղեկցվում էին հասարակության կառուցվածքի արմատական փոփոխություններով, ինչն էլ հանգեցնում էր ավանդույթի նշանակալից տրանսֆորմացիայի, որի արդյունքում ընդլայնվում էր գիտելիքի կրողների շրջանակը: Այդպես էլ առաջանում է *ուլեմների*՝ սրբազան տեքստերի և դրանց մեկնաբանման գիտակների դասը, որոնք իսլամում չեն միավորվում եկեղեցու նման որևէ կազմավորման մեջ, ինչն էլ նշանակում է, որ ավելի աշխարհիկ էին, քան քրիստոնյա եկեղեցականները և աստվածաբանները: Այդ իսկ պատճառով նրանք չէին հավակնում տիրապետել բացառիկ ճշմարտությանը, և կրոնա-իրավական տարբեր դպրոցներ՝ (*մազհաբներ*) հավասարապես ճանաչվում են օրինական և ուղղահավատ: Լինելով Ալլահի հրահանգների և

նրա կողմից տրված օրենքների համաձայն Մարգարեի կողմից ստեղծված ումմայի մի մաս և հենց այդ օրենքների գիտականեր՝ ուլեմները պետության (հասկացություն, որը ամբողջանում է ումմա հասկացությամբ) ղեկավարումը չէին համարում աշխարհիկ գործ, քանի որ իսլամում «մաքուր աշխարհիկի» և «մաքուր կրոնականի» բաժանում չկա: Այստեղից էլ, Մուհամմադ մարգարեի և նրա միջոցով Ալլահից անմիջականորեն ստացվող հրահանգների բացակայության պայմաններում հենց ումման է ճշմարտության կրողը, նրա համընդհանուր կարծիքով է սահմանվում այս կամ այն հարցի իրավականությունը: Հենց այս պատճառով է, որ այն ամենն ինչ վտանգում է համայնքի միասնականությունը և կարող է ապակայունացնել իրավիճակը համայնքում, համարվում է *բիդ'ա* (արաբ. بـدعة [bid'a]) («անթույլատրելի նորարարություն», «նորամուծություն», ինչն անմիջականորեն չի բխեցվում Ղուրանից և Սուննայից և չի հիմնվում դրանց վրա):

Նվաճողական արշավանքների առաջին տասը տարիների ընթացքում մուսուլմանները, իրենց առջև բացված նոր աշխարհներով, դրանցում բնակվող տարբեր լեզուներով խոսող և բազմաթիվ աստվածությունների պաշտող բնակիչներով զարմացած և զգալով իրենց բացարձակ գերակայությունը, որը հիմնված էր իր կամքով իրենց հաղթանակներ շնորհող և իր համայնքին տարբեր երկրներ և ժողովուրդներ ենթարկող Ալլահի հավատի վրա, սկսեցին աշխարհը բաժանել երկու մասի: Դրանցից մեկը *դար ալ-իսլամն* (արաբ. دار الإسلام [dar al-islam]) էր՝ աշխարհի այն հատվածը, որտեղ Ալլահի օրենքի գերակայություն էր, որով էլ ղեկավարվում էր ումման: Երկրորդ հատվածը *դար ալ-հարբն* էր (արաբ. دار الحرب [dar al ḥarb]), որտեղ չեն գործում Ալլահի օրենքները, և որտեղ ումման չի ղեկավարում: Իսլամի արժեքային համակարգի կարևորագույն տարրերից մեկի՝ *դար ալ-իսլամի* առաջացումը հանգեցնում է

մեկ այլ արժեքի՝ *ջիհադի* (արաբ. جهاد [jihād])՝ որպես հանուն բոլոր մարդկանց Ալլահի ումմայի մեջ ներգրավելու սրբազան պատերազմի ձևավորմանը¹⁶:

Մյուս կողմից «դար ալ-իսլամը» այնպիսի քաղաքակրթական համակարգի արժեքային հիմքն է, ինչպիսին խալիֆայությունն է, որի տեսության մշակումը բավականին ակտիվ կերպով տեղի է ունեցել իսլամի բարեփոխման բոլոր ժամանակաշրջաններում:

Իսլամի պատմության գրեթե ողջ ընթացքում բազային արժեքները, հիերարխիկ համակարգում իրենց տեղը փոխելով և բովանդակային փոփոխությունների ենթարկվելով, շարունակում էին լինել կրոնի հիմքը: Ժամանակ առ ժամանակ հենց դրանք էլ ստեղծում էին իսլամի գլխավոր ուղղություններին հակասող արժեքներ, որոնք դառնում էին սուննիական և շիայական ուղղություններից ճյուղավորված ուսմունքների բազային արժեքներ: Որպես օրինակ՝ ներկայացնենք շիա վեցերորդ իմամ Ջաֆար Ալ-Սադիկի (մահ. 765թ.) որդու՝ Իսմայիլի դեպքը, որը մահացել էր դեռ իր հոր կենդանության օրոք (762թ.): Շիայական համայնքի մի հատվածը վեցերորդ իմամ Ջաֆար Ալ-Սադիկի մահից հետո որպես հաջորդ իմամ է ընդունում ոչ թե նրա երկրորդ որդուն՝ Մուսա Ալ-Քազիմին, այլ Իսմայիլի որդուն՝ Մուհամմադին: Արժեքների հիերարխիայում տվյալ դեպքում առաջնային է դառնում իմամաթի գաղափարը, որը մարմնավորվում է Իսմայիլի անձի մեջ, որով էլ կտրվում է համայնքը ղեկավարող իմամների շղթան, և դրանով սկսվում է «թաքնված» իմամների շրջանը: Այսպես էլ իսլամում սկիզբ է առնում իսմայիլականությունը:

Դրուզների համայնքը առաջացել է մեկ այլ բազային արժեքի՝ ֆաթիմյան խալիֆ Ալ-Հաքիմի (996-1021թթ.) աստվածացման հիմ-

¹⁶ Հիշեցնենք, որ ումմայի անդամներ (ոչ լիարժեք) էին նաև «հովանավորյալները»՝ հրեաները, քրիստոնյաները և ուրիշներ:

քով, որն իրեն հոչակել էր «աստվածային վերջին մարմնավորում»: Նման օրինակները իսլամի պատմության ընթացքում բազմաթիվ են:

Բացի «կողմնակի» արժեքների ստեղծումից, բավականին կարևոր և հետաքրքիր է արժեքների «մրցակցության» վերլուծությունը, երբ այս կամ այն պատճառով հիերարխիայում փոփոխվում են բազային արժեքների դիրքերը: Արժեքների «մրցակցության» առաջին երևույթներից մեկը Ղուրանի արարված/չարարված լինելու հարցի շուրջ պայքարն էր: Մութազիլիները, որոնք պաշտպանում էին Ղուրանի ստեղծված լինելու թեզը, մատնացույց էին անում Ղուրանի արարված չլինելու ճանաչումը, իսկ հավերժականի գոյությունը կնշանակեր «Ալլահին ընկերների վերագրում», այլ կերպ ասած՝ կհակասեր միաստվածության բացարձակությանը, ինչն էլ իր հերթին կնշանակեր Աստծու խոսքի բաժանումը Աստծուց, Աստծու խոսքը կհամարվեր Աստծուն հավասար, այսինքն՝ Ղուրանը բազային արժեքների հիերարխիա էր ներմուծվում՝ որպես Ալլահին հավասարազոր արժեք:

Ամեն անգամ, երբ մուսուլմանական աշխարհը ամբողջությամբ կամ առանձին մուսուլմանական պետությունները արտաքին աշխարհի ճնշումների արդյունքում հետընթաց էին գրանցում (բառի այս կամ այն իմաստով), կամ մուսուլմանական պետությունը ղեկավարում էր «անօրեն առաջնորդ», բազային արժեք համարվող «ումման» հիերարխիայում դառնում էր առաջնային: Նման բան տեղի ունեցավ հանբալիական մեծագույն ալիմ Իբն Թայմիյայի (1263-1328թթ.) կենդանության օրոք, երբ մուսուլմանական աշխարհն իր պատմության ամենախոր ճգնաժամներից մեկն էր ապրում: Իբն Թայմիյան անզիջում պայքարում էր «նորարարության»՝ բիդ'այի դեմ: Կյանքի բոլոր բնագավառներում Շարիաթի կիրառման անհրաժեշտությունը շեշտելով՝ նա բացարձակ

արժեք էր տալիս Ղուրանին և Սուննային, քանի որ ումմայի կյանքը մինչև Մարգարեի մահը և չորս արդարակյաց խալիֆների կառավարման շրջանում հենց նրանց վրա է հենվել և կառուցվել: Այսպիսով, նա ընդունում էր *սալաֆների*՝ վաղ շրջանի մուսուլմանների առաջին սերունդների հեղինակությունը: Միննույն ժամանակ մի քանի մուսուլմանական պետությունների և իմամների առկայության հնարավորությունը շեշտելով՝ «Ալլահի առաքյալին» էր վերադարձնում բազային արժեքի բացարձակությունը: Այս ուլեմի ողջ ջանքերն ուղղված էին ումմայի մաքրության վերականգմանը. բերել ումման այնպիսի տեսքի, ինչպիսին եղել է Մուհամմադ մարգարեի և *սալաֆների* օրոք: 18-րդ դարում Իբն Թայմիյայի գաղափարները Մուհամմադ իբն Աբդ Ալ-Վահաբի (մահ. 1972թ.) կողմից վերածնվում և զարգացվում են ու հիմք են դառնում սալաֆիական կրոնաքաղաքական ուղղության համար:

19-20-րդ դարերում մուսուլմանական աշխարհի վրա Արևմուտքի ազդեցության ուժեղացմանը զուգընթաց (սկզբում գաղութատիրության տեսքով, ապա այսպես կոչված *ղազվ ալ-սակաֆի* (արաբ. غزو الثقافي [gāzaw al-ṭaḳāfī])՝ մշակութային ագրեսիայով) գլոբալ քաղաքականության գործոնները, ինչպիսիք են Օսմանյան կայսրության փլուզումը, սառը պատերազմը, արաբախորայելական հակամարտությունը, Իսրայել պետության ստեղծումը և մի շարք այլ իրադարձություններ մեծ դեր խաղացին. իսլամում սկսեցին ի հայտ գալ առավել ակտիվ բարեփոխական միտումներ, որոնք հիմնվում էին բազային արժեքներից մեկի՝ ումմայի բացարձականացման վրա, ինչն, իհարկե, չի նշանակում մյուս բազային արժեքների կողմից իրենց բազային արժեքի դերի կորուստ:

Ումմայի այնպիսի բարեփոխման ձգտումը, որի արդյունքում այն կլիներ մրցունակ, 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին այսպես կոչված «մուսուլմանական մոդեռնիզմի» առաջնորդնե-

րին՝ Ջամալ Ալ-Դին Ալ-Աֆղանիին (1838-1897թթ.) և Մուհամմադ Աբդոյին (1849-1905թթ.) հանգեցրեց պանիսլամիզմի գաղափարախոսությանը և Աստծո խոսքը ժամանակակից պայմաններին հարմարեցնելու անհրաժեշտության գիտակցմանը: Այդ նպատակով Աբդոն և իր աշակերտները կրկին մեկնաբանել են Ղուրանը: Այս նույն նպատակն արդեն 20-րդ դարի վերջին ստիպեց սուդանցի խոշորագույն ուլեմ Մ. Տահային (մահ. 1985թ.) հրաժարվել մադինայական սուրաներից և հիմնվել միայն մեքքայականի վրա, քանի որ, ըստ նրա, հակառակ պարագայում ումման անհնար կլիներ ժողովրդավարացնել:

Ժամանակակից պայմաններին ադապտացվելու իրենց փորձերի ընթացքում արմատական (ֆունդամենտալիստական) շարժումները օգտագործել են տարբեր մշակութային և քաղաքակրթական միջոցներ (ումմայի ներսում և դրանից դուրս իրականացվող քարոզչությունից մինչև ջիհադի տարբեր ձևեր)՝ ըստ Ա. Թոյնբիի ձևակերպման՝ մնալով զելոտիզմի շրջանակներում¹⁷: Իրենց ընկալմամբ ագրեսիվ արտաքին աշխարհին ընդդիմանալու գործում գլխավոր

¹⁷ Ձելոտն այն մարդն է, որը հայտնիության մեջ է գտնում անհայտությունից փրկությունը, և եթե նա մասնակցում է հակառակորդի հետ կռվին, որն իրեն գերազանցում է տակտիկապես և օգտվում է հզոր նորարար զենքերով, նա պատասխանում է հետևյալ կերպ. շատ զգուշորեն և մանրակրկտորեն օգտագործում է իր ավանդական գործիքները» (Тойнби А. Дж., Цивилизация перед судом истории. М., 2002, с. 384): Թոյնբիի միտքը ամբողջապես կիրառական է նաև գաղափարախոսության բնագավառի համար, քանի որ ֆունդամենտալ ուղղությունների հիմնադիրների Ղուրանին և Սուննային անդրադառնալու մոտեցումը թելադրված է «շատ զգուշորեն և մանրակրկտորեն սեփական ավանդական գործիքների կիրառման» ձգտմամբ՝ որպես իսլամի բազային արժեք: Մյուս կողմից Թոյնբին նշում է, որ «զելոտը», որը զինված է անծուխ հրազենով, արդեն մաքուր «զելոտ» չէ, քանի որ ընդունելով արևմտյան զենքը, նա կանգնում է արատավորված հողի վրա (նույն տեղում, էջ 385): Վերջինը նաև ամբողջապես կիրառական է շահիդների նկատմամբ, որոնք իրականացրել էին սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունը:

արժեքը Ալլահի (Ղուրան) և նրա առաքյալի (Սուննա) կողմից տրված օրենքների հիման վրա ստեղծված ումմայի մաքրությունն է, ուժը և միասնությունը: Հենց այսպիսին է բազային արժեքների հիերարխիան, որոնց հիման վրա մշակվում է ժամանակակից արմատական շարժումների արժեքային ողջ համակարգը:

Ժամանակակից գլոբալիզացիոն գործընթացները հանգեցնում են մասսայական միգրացիաների, որոնց արդյունքում այս կամ այն արժեքների տարածման ավանդական արեալները փոփոխությունների են ենթարկվում: Իսլամի բազային արժեքներն արդեն բնորոշ են ոչ միայն իսլամի տարածման ավանդական արեալին, այլև դրանից դուրս գտնվող շատ հասարակություններին: Հավատացյալ մուսուլմանների մեծ մասը, որն ապրում է այն երկրներում, որտեղ կյանքը չի կարգավորվում և կազմակերպվում շարիաթով, իսլամի օրենքների և կանոնների կիրառման բնագավառը սահմանափակվում է իր անձնական կյանքի շրջանակներով՝ այդպիսով հավատը դեպի Ալլահն ընտրելով որպես առաջնային արժեք: Ժամանակակից քաղաքակրթական համակարգին ադապտացվելու այս ճանապարհը, ամենայն հավանականությամբ, ամենանպատակայինն է:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 2.

ՆԱԽԱԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՐԱԲԻԱ:

ՍՈՑԻԱԼ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ

Մինչև *իսլամի* (արաբ. اسلام [islām]) մասին խոսելը նախ անհրաժեշտ է հասկանալ, թե ինչ պայմաններում ստեղծվեց այդ կրոնը, ինչ միջավայրից դուրս եկավ այդ կրոնի մարգարեն՝ Մուհամմադը, և ինչից ծնվեց այդ մոնոթեիստական համակարգը:

Այդ պատճառով անհրաժեշտ է անդրադառնալ Արաբական թերակղզուն, որն ավելի ճիշտ կլինի անվանել ենթամայրցամաք, քանի որ զբաղեցնում է 3 մլն քառակուսի կիլոմետր տարածք: Արաբական թերակղզին սովորաբար ամբողջովին ընկալվում է որպես անապատ, ինչը ճշմարտությանը չի համապատասխանում, որովհետև թերակղզու հարավային մասը դեռ հին ժամանակներից հայտնի էր որպես *Arabia Felix՝ երջանիկ Արաբիա՝* պայմանավորված թերակղզու այդ մասում բավականաչափ ջրի առկայությամբ: Իսկ եթե ջուր կա, ուրեմն կանաչ կա, գյուղատնտեսություն և հատկապես՝ հողագործություն կա, եթե հողագործություն կա, ուրեմն քաղաքներ կան, որովհետև հողագործությունը և ոռոգման համակարգերի՝ ջրամբարտակների, ջրատար խողովակների և նման այլ համակարգային տարրերի ստեղծումը մեծ նախագծեր են և պահանջում են մարդկանց մեծ խմբեր, և, բնականաբար, այդ մեծ խմբերի ձևավորումը սկսում է ազդել տոհմացեղային կապերի վրա, սկսում է քանդել դրանք, ստեղծվում է վարչական համակարգ, որը հանգեցնում է քաղաքների ստեղծմանը:

Հայտնի է նաև, որ հին ժամանակներում այս տարածքում եղել են պետություններ կամ քվադի պետություններ: Աստվածաշնչյան պատմություններից տեղեկանում ենք այն մասին, որ

Սաբայի թագուհին Սողոմոն Իմաստունի մոտ է գնացել (Գ. Թագ. 10.1-13), այսինքն՝ ճամփորդել է Արաբական թերակղզու հարավից դեպի Իսրայելի միասնական թագավորություն:

Այսպիսի հետաքրքիր պատմություններ շատ կան, բայց ամենակարևորն այն է, որ գիտնականների հաշվարկով հենց Եմենում էր ապրում Արաբական թերակղզու բնակչության մեծամասնությունը՝ մոտ 3.5 մլն մարդ: Նույն գիտնականների հաշվարկներով ամբողջ Արաբական թերակղզում ապրում էր մոտ 7 մլն մարդ: Կրկին կարող է այնպիսի պատկերացում ստեղծվել, որ նրանք բուլորը քոչվոր էին: Իհարկե դա այդպես չէ, և, հավանաբար, այս 7 մլն բնակչությունից ընդամենը 3 մլն էր քոչվոր կամ կիսաքոչվոր: Եմենից բարձր՝ դեպի հյուսիս գտնվող տարածքներում՝ Կենտրոնական և Հյուսիսային Արաբիայում, բնակչության հիմնական զանգվածների տնտեսական և հասարակական կյանքը իրականացվում էր արյունակցական կապերի հիման վրա ձևավորված համայնքներում՝ գերդաստաններում, տոհմերում և ցեղերում: Ցեղերը բաղկացած էին 200-600 անդամից. դրանից ավել հնարավոր չէր կերակրել մի օազիսում կամ մի վադիում (արաբ. وادٍ [wādīn]) և այդ պատճառով, երբ ցեղը մեծանում և ճյուղավորվում էր, նոր ընտանիքներ, ապա նոր գերդաստաններ էին ձևավորվում: Երբ արդեն գոյատևելը բարդ էր դառնում, ցեղի որոշ անդամներ թողնում, գնում էին կյանքի համար պիտանի նոր վայրեր փնտրելու: Սակայն հիշողությունը արյունակցական կապի մասին պահպանվում էր սերունդներում և շատ հաճախ հիմք էր դառնում համատեղ գործողությունների համար:

Ցեղի միասնության հիմքում ընկած էր *ասաբիյան* (արաբ. عصبية [‘asabiyya]): Այս եզրույթը դժվար է թարգմանել հայերեն: Ֆրանց Ռուզենթալը (մահ. 2003թ.) այն թարգմանում է «խմբային զգացմունք», կա նաև «արյունակցական կապ» թարգմանու-

թյունը: Հայերեն, հավանաբար, այն կարելի է թարգմանել որպես «ցեղային համերաշխություն» կամ «պորտի կապ»: Իմաստն այն է, որ ցեղի միասնական ուժն ու հեղինակությունն են ապահովում նրա յուրաքանչյուր անդամի գոյատևումն ու անվտանգությունը:

Յեղը, որպես կանոն, ուներ առաջնորդ՝ *սայյիդ* (արաբ. *سَيِّد* [sayyid]), որն ընդամենը կատարում էր կարգավորող, կանոնակարգող գործողություններ, երբ հազարամյակներով ավանդաբար ձևավորված ապրելակերպի մեջ ինչ-որ բան էր խախտվում: Ավանդական հասարակություններում սերունդների փորձով հաստատված նորմերից շեղումներ շատ հազվադեպ էին պատահում, քանի որ նախնյաց իմաստությունն ու փորձը այն հենքն էր, որն ապահովում էր դժվարին պայմաններում գոյատևելու հնարավորությունը: Կարելի է եզրակացնել, որ սայյիդի հիմնական պարտականությունը ցեղում նախնիներից ժառանգած նորմերի և կանոնների պահպանումն էր, ինչը կարող էր անել միայն բացառիկ հեղինակություն վայելող անձը:

Յեղերի տնտեսությունը հիմնականում ասպատակային էր. հարձակվում էին մեկ այլ ցեղի վրա, այնտեղից գողանում էին այն ամենը, ինչը հնարավոր էր արագ փախցնել՝ սնունդը, անասունը, գործիքները, սպասքը, կանանց և այլն: Այդ ասպատակություններն ու արշավանքները ղեկավարում էր ցեղի ամենաուժեղ, խիզախ և հեղինակավոր տղամարդը, որն ուներ նման հարձակումներ, իսկ հարկ եղած դեպքում նաև պաշտպանությունը կազմակերպելու շնորհք և հմտություն: Յեղի մյուս անդամները նրան էին ենթարկվում ռազմական գործողությունների ժամանակ: Նրան անվանում էին *կահիդ* (արաբ. *قائد* [qā'id])՝ ռազմական առաջնորդ: Յեղում կար նաև *քահին* (արաբ. *كهن* [kahin], քահանա բառը ծագում է այս հին սեմական արմատից), որը ծիսական, ինչպես նաև շամանական գործողություններ էր կատարում:

Նախախլամական Արաբական թերակղզու հավատալիքները շատ տարբեր էին. ամենապարզ նախնիների պաշտամունքից, տոտեմիզմից և անիմիզմից մինչև ամենահասուն մոնոթեիզմ, որը ներկայացված էր և՛ քրիստոնեությամբ, և՛ հուդայականությամբ, և՛ մաքրուր, ավելի պարզ ու անորոշ (գուցե այն պատճառով, որ մենք առանձնապես տեղեկություն չունենք դրա մասին) *հանիֆիություն*: Հանիֆիությունը ձևավորվել էր հուդայականության և քրիստոնեության ազդեցության տակ: Հանիֆները կոչ էին անում հրաժարվել կոապաշտությունից, պահպանում էին ծիսական մաքրություն, վարում էին ասկետիկ կյանք: Հատկանշական է, որ *Ղուրանում* (արաբ. القرآن الكريم [Al-Qurān al-Karīm]) Իբրահիմը (աստվածաշնչյան Աբրահամը) հանիֆ է անվանվում (Ղուրան 3:67):

Յեղում առանձնահատուկ դեր ուներ *շա'իրը* (արաբ. شاعر [šā'ir]). սովորաբար այս բառը թարգմանվում է որպես բանաստեղծ, ինչը հետխլամական շրջանի համար լիովին ճիշտ թարգմանություն է: Սակայն նախախլամական արխայիկ մշակութային գիտակցության համար *շա'իրը* մի մարդ է, որին հատուկ ուժ է տրված. նա խոսքով աշխատում է, վնաս է հասցնում, ուժ է տալիս, մոգական գործողություններ է կատարում: Շա'իրն ի վերուստ օժտված է բառերը հանգավոր և տաղաչափական համակարգի մեջ տեղադրելով խոսք ստեղծելու գերբնական ունակությամբ, հետևաբար նա կապ ունի գերբնական ուժերի հետ և օգտագործելով այդ ուժը, ազդում է իրողության վրա, փոխում այն:

Մի հասարակության մեջ, որտեղ ինֆորմացիայի պահպանման և փոխանակման համակարգը բանավոր էր, բանաստեղծության դերը չափազանց կարևոր էր: Արձակ և բանաստեղծական տեքստերը տվյալ ժամանակահատվածում իրարից առանձին չէին, դրանք հետո են առանձնանում: Արձակ-բանաստեղծական սինկրետիկ տեքստն է այդ ժամանակաշրջանի հիմնական ինֆոր-

մացիոն միավորը, որը գործում է շատ հետաքրքիր ձևով՝ մենմոնիկ՝ հիշողությանն օգնող ձևով: Բանաստեղծը շատ կոնկրետ իրադարձության մասին է պատմում, որը ներկայացվում է արձակ տեքստով, իսկ բանաստեղծությունը հիշվում է, ինչի շնորհիվ հիշվում է նաև արձակ տեքստը, այսինքն՝ հիշվում է իրադարձությունը: Բնականաբար, բացի դրանից բանաստեղծությունը և՛ էմոցիոնալ, և՛ պատկերային համակարգն է ձևավորում և նաև շատ հետաքրքիր ձևով ներկայացնում է կոնկրետ այդ պահը և այդ տարածքը, ինչպես նաև իմաստավորում է այն ամենը, ինչը ներկայացված է իրադարձության մասին պատմող կամ վերջինս արձանագրող տեքստի մեջ:

Այստեղ անհրաժեշտ է նաև ներկայացնել ժամանակի և տարածության պատկերացումները, որոնք չափազանց կարևոր են, որպեսզի հասկանալի լինի այն տարերային ֆատալիզմը, որ գոյություն ուներ և հստակ երևում է իսլամի ծագման ժամանակաշրջանում և դրանից հետո ստեղծված տեքստերի մեջ: Ժամանակը շրջապտուտային է. և՛ վերջ չունի, և՛ սկիզբ չունի, կյանք և մահ, արևը ծագում է և մայր է մտնում, տարվա եղանակները փոխվում են: Այդ շրջապտույտից հնարավոր է առանձնացնել ինչ-որ իրադարձություն (օր.՝ ջրհեղեղ կամ մի ցեղի հարձակումը մյուսի վրա), եթե այն իրականացվել է ոչ թե սովորական, հաճախ կրկնվող, այլ արտառոց ձևով, և անպայմանորեն հիշվել է, որովհետև դրա ընթացքում ինչ-որ նորմ, կանոն խախտվել է, և նոր ու կարևոր բան է տեղի ունեցել: Այսինքն՝ տեղի է ունեցել ոչ թե միջադեպ, այլ իրադարձություն, որը կտրում է ժամանակը, այն դարձնում է դիսկրետ (ընդհատուն), և միայն այդ ժամանակը գոյություն ունի, մնացածը՝ նորմին համապատասխանող մշտական և անընդհատ շրջապտույտը, ուղղակի գոյություն չունի:

Նույնը բնորոշ է տարածությանը: Յեղն ունի իր *արդը* (արաբ. عرض [‘arḡ])՝ հողը, որի սահմանները վերջին յայլայից երևացող հորիզոններն են՝ *աֆակ* (արաբ. أفق [āfāq]): Աշխարհն այդտեղ վերջանում է, և միայն այդտեղ են մարդիկ, որոնք բանական են, քանի որ խոսում են մարդկային լեզվով, այսինքն՝ հասկանալի և պարզ: *Ջահիլիայի* (արաբ. جاهليّة [jāhiliyya])՝ նախաիսլամական շրջանի մի բանաստեղծ նկարագրում է, որ բյուզանդական ամրոցի վրա երկու զինվոր իրար հետ խոսում են, և արաբերեն այնպիսի բառ է օգտագործում, որը բարբաջել է նշանակում, այսինքն՝ իրենք բանական մարդուն հատուկ հասկանալի լեզվով չեն խոսում, այլ բարբաջում են: Սա մոտավորապես ռուսերենի «немец» բառն է. «немец-немой»՝ մարդ, որը համր է, չի խոսում: Աֆակից դուրս մարդկային լեզվով խոսող չկա, և այդ տարածությունը արդեն *արդ* (ճանաչված աշխարհ, հող) չէ, անձանոթ է, օտար է, վտանգավոր է: Իսկ արդում ամեն ինչ կրկին դիսկրետ է. տրվում է միայն այն անունը, որտեղ իրադարձություն է եղել, եթե չի եղել իրադարձություն, չկա հող, երկիր, տարածություն: Սա շատ տիպիկ պատկերացում է, որը հատուկ է ոչ միայն արաբական ցեղերին, այլ նաև նորվեգացիներին, իսլանդացիներին և այլն:

Հավատի ձևավորումը կապված է դիցաբանական ընկալման բարդացման հետ: Պարզ է, որ հիմնական արժեքը մարդկային կյանքն է, և արժեքային համակարգը ձևավորվում է այնպես, որ օժանդակի այդ հիմնական արժեքի պահպանմանը: Այստեղ շատ կարևոր դեր ունի հավատը, որը ուժ է տալիս, դառնում է առանցք և որը նաև միավորման հիմք է դառնում:

Ինչի՞ն են հավատում: Ինչից վախենում են, դրան էլ հավատում են: Հրաբուխը ժայթքում է, և դա նշանակում է, որ այնտեղ մի ոգի կամ ինչ-որ գերբնական ուժ կա՝ աստված, աստվածիկ, որը բարկացել է: Ինչու՞ է բարկացել, որովհետև հավանաբար

մեղք են գործել: Եվ ի՞նչ պետք է անեն, որպեսզի այդ հրաբուխի գերբնական ուժը ների իրենց և չպատժի: Պետք է զոհաբերություն անեն: Քուրմը, շամանը գնում է, ինչ-որ բաներ է երգում, ինչ-որ անհասկանալի գործողություններ է անում, որից հետո զոհաբերություն են անում: Աստված եթե բավարարվում է, ապա մեղմանում է, և ժայթքումն ավարտվում է:

Հավատում են նաև նրան, որ ինչ-որ մեկն իրենց սկիզբ ու կյանք է տվել: Դա իրենց նախնին է, որը եկել է, հիմնվել է և իրենից է ցեղը սկսվել, այդ պատճառով էլ ցեղը կրում է իր անունը՝ *բանու* (արաբ. بنو [banū] զավակներ, որդիներ) այսինչ: Այդ նախնին կարող է մարդ լինել, բայց հնարավոր է նաև չլինի. օրինակ՝ *Բանու ասադը* (առյուծի զավակներ) արաբական ցեղի անվանում է կամ *Բանու նասր* (արծվի զավակներ), *Բանու սալաբ* (աղվեսի զավակներ), այսինքն՝ վերոնշյալ ցեղերի նախնին եղել է առյուծ, արծիվ կամ աղվես: Բայց կարող է նաև մարդ լինել, ամենահայտնի ցեղերից է, օրինակ, *Բանու Կուրայշը* (արաբ. بنو قريش [banū qurayš])՝ Կուրայշի զավակներ ցեղը: Այս ցեղի ճյուղն է Բանու Հաշիմը (արաբ. بنو هاشم [banū hāšim]), որից ծագել է Մուհամմադ մարգարեն:

Գիտելիքի աստիճանական կուտակմանը և բարդացմանը զուգահեռ զարգանում է դիցաբանական համակարգը: Այստեղ երկու տեսակի տեքստերի մասին է պետք խոսել: Շրջապատուտային ժամանակը, ինչպես արդեն նշվել է, սինխրոնացված է նորմայի հետ և դիցաբանական տարածության հետ կազմում է աշխարհը, տիեզերքը, հասարակական կյանքը, մարդուն բացատրող և համակարգող դեր ունեցող տեքստի հիմքը:

Դիցաբանական տեքստը բացատրում է այդ ամենը. արևը ծագում և մայր է մտնում: Հնդկական երրորդ սերնդի աստվածների մեջ Ինդրան, որի ձեռքերը մինչև արմունկները ոսկուց էին, ա-

ռավոտյան սկսում էր բարձրացնել ձեռքերը, կեսօրին դրանք հնարավոր ամենաբարձր դիրքում էին, որից հետո նա հոգնում էր և սկսում էր ձեռքերը կամաց իջեցնել, և արևը մայր էր մտնում: Իրենք դա որպես այլաբանություն չէին օգտագործում, իրենք գիտեին, որ դա այդպես է: Նույն կերպ էր ընկալվում նաև Հելիոսի և իր կառքի մասին պատումը (հունական դիցաբանություն): Այս միջերը այդ հասարակությունների աստղագիտության դասագրքերի հատվածներն էին:

Դիցաբանությունը կարելի է համեմատել մի պայուսակի հետ, որտեղ լցված են այն բոլոր դասագրքերը, որոնցով երեխան սովորել է մինչև հասունության վկայագիր ստանալու պահը: Սա ամբողջ դիցաբանական համակարգն է: Պարզ է, որ դիցաբանական համակարգերը փոխվում են, քանդվում են, երբ քանդվում են այն կտորները, որոնք հակասում են նոր դիցաբանական համակարգին, այսինքն՝ մեծ մասը ջնջվում, մոռացվում է: Չհակասող և օգտակար կիրառություն ունեցող մասը մտնում է նոր դիցաբանական համակարգի մեջ, իսկ մի մասն էլ դառնում է հեքիաթ, առասպել, պատում:

Եվ կա երկրորդ տիպի տեքստ: Երկրորդ տիպի տեքստը արտառոց երևույթների՝ շարքից դուրս եկող, հիշվող, վառ երևույթների մասին պատմող տեքստերն են: «Պապիս պապը տեսավ, որ ինչ-որ բան երկնքով անցավ (գիսասող), պապիս հայրը չտեսավ դա, բայց պապս տեսավ, հիմա ես էլ եմ դա տեսնում»: Սա արդեն ֆիքսված երեք փաստ է: Արաբները դրան ասում են *խաբար* (արաբ. خبر [xabar])՝ ճշմարիտ տեղեկություն; Դրա վավերացման ձևն էլ հաղորդողների շրթան է, որը կոչվում է *իսնադ* (արաբ. إسناد [isnād]): Օրինակ՝ Ահմադ իբն Հուսայնը լսեց Աբդ Ալ-Ռահմանից, Աբդ Ալ-Ռահմանը լսեց Մուհամմադից, Մուհամմադը լսեց Իբրահիմից, Իբրահիմը լսեց Յահյայից, Յահյան պատմեց իմ պապին,

պապս էլ ինձ պատմեց. այս շղթայի բոլոր օղակները ստուգվում են, և սա չափազանց կարևոր է տեքստի իսկությունը ապացուցելու համար: Սա հետո երևում է Մուհամմադի կյանքի մասին պատմող փոքրիկ պատումների՝ *հադիսների* (արաբ. حديث [ḥadīṭ]) մեջ, որոնցից էլ բաղկացած է իսլամի երկրորդ աղբյուրը՝ *Սուննան* (արաբ. سنة [al-sunna]), (առաջինը Ղուրանն է): Սուննայում ընդգրկված հադիսները, ի տարբերություն խաբարների, նոր գիտելիք են:

Խաբարները նախնյաց փորձը փոխանցող տեքստեր են: Երկրորդ տիպի տեքստի մեջ կուտակվում են նորմից շեղվող, վառ, անսպասելի, անկանխատեսելի իրադարձությունների մասին վկայող խաբարները: Գիսաստղի մասին պատմությունից պարզ է դառնում, որ դա ժամանակ առ ժամանակ կրկնվող երևույթ է: Երկու սերունդը մեկ այդ լույսը, պայծառությունը, աստղն անցնում է երկնքով: Սա լրացնում է գիտելիքը ոչ միայն կուտակվելու արդյունքում, այլ նաև երբ սրա նման մի շարք այլ խաբարներ էլ են հիշվում: Երբ այդ խաբարների հիման վրա կարելի է արդեն մի նոր կանոն ձևակերպել, քանդվում է նախորդը, որն արդեն գիտելիք չէ:

Աշխարհի մասին պատկերացումը սկսում է փոխվել և ձևակերպվել որպես նոր դիցաբանական համակարգ: Հին համակարգի փոխարեն պիտի ուրիշ բան գա, բայց քանի որ գիտելիքն արդեն բարդացած է, և պարզ է, որ երևույթները կապված են իրար հետ, ի հայտ է գալիս նոր պատճառահետևանքային կապ: Պարզ է դառնում, որ կան պատճառներ, որոնք երկրորդական են, բխում են այլ պատճառից, և սկսվում է հիերարխիկ դիցաբանական համակարգի ստեղծումը: Ամենահայտնի օրինակները հունական դիցաբանությունից Ջևալը և մյուսներն են: Ջևալը նախորդ դիցաբանական համակարգի բեկոր էր, վերջինս քանդվեց, և նա դարձավ

գլխավոր աստված, որից արդեն ծագում էին մնացած բոլորը, որոնք որոշակի ինքնավարություն ունեն. իրենք այնքան էլ ենթարկված չեն: Որքան ավելի ցած է իջնում, ինքնավարության մակարդակը բնականաբար ավելի նվազում է: Օրինակ՝ Դրիադան ցանկանա, թե ոչ, պետք է արթնանա, և ծառը պետք է ծաղկի: Նա փոքր աստվածիկ է, այդքան ազատություն չունի: Գիտելիքն ավելի է բարդանում, և մենք հասկանում ենք, որ կա ընդամենը մի աղբյուր և մի պատճառ, որ հենց այդ աղբյուրից է կյանքը, որ հենց այդ աղբյուրից է տիեզերքը, որ այդ աղբյուրից է խոսքը, այդ աղբյուրից է միտքը, գործողությունը, բայց այդ աղբյուրից է նաև ճակատագիրը, այդ աղբյուրից է նա՛ չարը, նա՛ բարին: Այսպես ստեղծվում է մոնոթեիստական համակարգը, որտեղ կա մի աստված: Իսլամի առաջին և հիմնական գաղափարը հենց բացարձակ միաստվածությունն է՝ *թաուհիդը* (արաբ. التوحيد [al-tawhīd]):

Հիմնական գրականություն

- Большаков О. Г., История Халифата. Т.І. Ислам в Аравии. 570-633. М., 1989/ М., 2000, стр. 11-67.
- Hodgson G. S. M., The Venture of Islam, Volume 1: The Classical Age of Islam, University of Chicago Press, 1977, pp. 3-102.
- Пиотровский М. Б., Пророческое движение в Аравии VII в. // Ислам: Религия, общество, государство. М., 1984. стр 19-27.
- Грязневич П. А., Аравия и арабы (к истории термина ал-‘араб) // Ислам: Религия, общество, государство. Сб. ст. — М.: Главная редакция восточной литературы издательства «Наука», 1984. стр. 122-131.

Լրացուցիչ գրականություն

- ✓ Hoyland R. G., *Arabia and the Arabs from the Bronze Age to the Coming of Islam* (Routledge; London, 2001), pp. 113-167.
- ✓ *Patricia Crone, Meccan Trade and the Rise of Islam, Georgias press, 2004.*
- ✓ Пигулевская Н. Византия и Иран на рубеже VI и VII веков, М.: АН СССР, 1946.
- ✓ Грюнебаум Г. Э. фон, Классический ислам. Очерк истории (600-1258). Пер. с англ. И. М. Дижур. "Наука", 1988, стр. 13-26.

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 3.

ՆԱԽԱԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՐԱԲԻԱ:

ԳԻՏԵԼԻՔԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Մշակութային այն համակարգում, որտեղ տեղեկության փոխանցումը, պահպանումն ու մշակումը կատարվում է հիմնականում բանավոր ճանապարհով, «ճշմարտությունն» ու «ճշմարիտ գիտելիքը» ձեռք են բերում առանձնահատուկ կարևորություն: Սոցիալապես կարևոր նշանակություն ունեցող տեղեկությունների ճշմարտացիությունը վերահսկելու և ստուգելու համար տարբեր մշակույթների շրջանակներում ստեղծվել են հատուկ այդ նպատակին ծառայող մեթոդներ: Օրինակ՝ նախախալամական շրջանում Արաբական թերակղզում բնակվող ցեղախմբերի կողմից ստեղծվել էր ճշմարտացիությունը ստուգելու և հաստատելու մի մեթոդ, որն իր արդիականությունը չկորցրեց նաև իսլամն ընդունելուն հաջորդած առաջին դարերում: Այդ մեթոդը հիմնված էր բանավոր տեղեկություն հաղորդողների շղթայի՝ *խսնադի* (արաբ. إسناد [isnād]) բոլոր օղակները հերթով, այն է՝ օղակ առ օղակ նույնականացնելու և հաստատելու վրա:

Այստեղ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել հետևյալ հանգամանքի վրա. սերնդեսերունդ փոխանցվող տեղեկությունների ամբողջությունը, որը քաղաքակրթական և մշակութային տեսանկյունից անհրաժեշտ էր համարվում հասարակության (տվյալ դեպքում՝ տոհմացեղային համայնքների)՝ սեփական հիմքի վրա վերարտադրվելու համար, իրենից ներկայացնում էր արձակ բանաստեղծական սինկրետիկ, այսինքն՝ չտարբերակված տեքստ:

Այդ տեքստի (որը սահմանվում է որպես խաբարային տեքստ)¹⁸ արձակ և բանաստեղծական բաղադրիչները խաղում են հավասարապես կարևոր, սակայն սկզբունքորեն տարբեր դերեր: Որպես խաբարային տեքստի հեշտությամբ հիշվող և վերարտադրվող մաս՝ բանաստեղծականը էական դեր էր խաղում խաբարի արդեն արձակ մասում պահպանվող տեղեկության համար: Այս վերջին տեղեկությունը նվիրվում էր որևէ նշանակալի իրադարձության կամ երևույթի և այնքան էր կարևորվում ցեղախմբի կողմից, որ դրա մասին բանաստեղծություն էին հորինում:

Այսպիսով, կարելի է ասել, որ խաբարը հաղորդողների շրթան ֆիքսելու հիման վրա փոխանցվող տեղեկության ճշմարտացիությունը հաստատելու ձևն օգտագործվում էր նաև բանաստեղծական տեքստերի շրջանառության տիրույթում, թեև այստեղ կային նաև էական տարբերություններ և այդ տարբերությունները բխում էին նախախլամական Արաբական թերակղզու կյանքում բանաստեղծության՝ շի'րի (արաբ. شعر [šī'r]) կարևորագույն դերից: Ահա թե ինչպես է բնութագրել իսլամական բանաստեղծական խոսքի էությունը Մուհամմադ մարգարեի զինակից, երկրորդ խալիֆ Օմար իբն Ալ-Խատտաբը. «Բանաստեղծական խոսքը մարդ-

¹⁸ Խաբար եզրույթը նշանակում է 8-րդ դ. կեսերի արձակ պատմություն՝ հիմնականում բանավոր տեսքով, որը տեղեկություն է հաղորդում ինչ-որ կարևոր իրադարձության մասին, կամ տեղեկություններ է հաղորդում որևէ նշանավոր մարդու վերաբերյալ: Խաբարներն անպայման ունեն իրական հիմք, նրանք տեղեկացնում են իրադարձությունների մասին, որոնք այն ժամանակվա հասարակության տեսանկյունից իրականում տեղի են ունեցել: Հենց իրադարձությունն է այստեղ համարվում որպես մանրագույն անքակտելի մասնիկ: Խաբարն ունի վկայված և խոսքի ձև ստացած փաստի նշանակություն: Խաբարի մասին տես՝ Դ. Ա. Оганесян, Хабар в культурном сознании общества доисламской и раннеисламской Аравии. - в кн. Проблемы арабской культуры, М., 1987; его же, О месте „Калилы и Димны,» в средневековой арабо-мусульманской культуре. - в кн. Проблемы современной советской арабистики, т.2, Ереван, 1990.

կանց համար այն գիտելիքն էր, որից ավելի հավաստին նրանք չունեին»:

«Շի'ր» հասկացությունն ինքնին տոհմացեղային գիտակցության կողմից ընկալվում էր որպես գերբնական գիտելիք, մոգական, կախարդական մի բառ, իսկ բանաստեղծը՝ «շա'իր»-ը (արաբ. شاعر [šā'ir])՝ որպես մարդ, ում (անդինից, «անիմանալից») տրված է բառի այդ մոգական զորությունը օգտագործելու, դրա միջոցով գերբնական ուժերի հետ շփվելու ունակություն և այդպիսով ներգործել իրադարձությունների և երևույթների վրա իրեն շրջապատող, իր ու իր ցեղակիցների կողմից ընկալվող աշխարհում:

Այս կապակցությամբ տեղին է հիշել Մ. Ի. Ստեբլին-Կամենսկու հետևյալ միտքը. «Այն հանգամանքը, որ ավանդույթը մոգական գործողություն է վերագրում որոշ բանաստեղծական ժանրերի, նշանակում է, իհարկե, ոչ միայն իրականությանն անադելվատ պատկերացումների առկայություն, այլև, և սա հատկապես նշանակալի է պատմական և գրական տեսանկյունից, ժանրի գեղարվեստական թերարժեքություն՝ նրա զարգացման տվյալ փուլում, նրա գեղարվեստական գործառույթի թերզարգացածություն: Սակայն վերջինիս զարգացման գործընթացի հակասականության պատճառով գեղարվեստական այդ թերարժեքությունը կամ թերզարգացածությունը որպես այդպիսին ոչ միայն չի գիտակցվել ժամանակակիցների կողմից, այլև հակառակը՝ վերջին հաշվով, հենց նրանով էր պայմանավորված պոեզիայի՝ որպես հնարավոր գործուն և հզոր միջոցի բարձր գնահատականը և բանաստեղծի բարձր դիրքը, նրա հերոսականացումն ու աստվածացումը՝ իբրև ուժի և իշխանության կրողի»¹⁹:

¹⁹ М.И. Стеблин-Каменский, Историческая поэтика, Ленинград, 1978, с. 104.

Այս միտքն էլ ավելի է կարևորում այն պահը, երբ հասարակությունը սկսում է գիտակցել մի գործընթաց, որի արդյունքում առաջանում է կամ, ավելի ճիշտ, ծնվում է լիարժեք գեղարվեստական խոսքը: Արաբական միջնադարյան ավանդույթը վստահորեն մատնանշում է պատմության այդ պահը՝ 6-րդ դ. առաջին կեսը, այսինքն՝ այն ժամանակաշրջանը, երբ ապրում էր նախաիսլամական բանաստեղծ Աբու Լայլա ալ-Մուհալիիլը (մահ. 561թ.), ում մասին պահպանվել է հետևյալ տեղեկությունը. «Նա առաջին սրախոս բանաստեղծն էր (արաբ. کذاب [kaḏḏāb])»:

Ինչ «ստի» մասին է խոսքը: Ըստ հանրաճանաչ հեղինակ Աբու Ալ-Ֆարաջ Ալ-Իսֆահանիի (մահ. 967թ.) «Երգերի գրքի» (արաբ. كتاب الأغاني [Kitāb al-ağāni])՝ այդ բանաստեղծը առաջինն էր, որը նկարագրել է ոչ թե իրականում կատարված իրադարձությունը (այստեղ խոսքն այն մասին է, թե ինչն էր ընկալվում որպես «իրականություն» նախաիսլամական տոհմացեղային սոցիալ-պատմական գիտակցության կողմից), այլ հորինվածը, այն, «որն իրականում տեղի չի ունեցել»²⁰:

Այսպիսով, առաջին անգամ ազատություն ստանալով՝ գեղարվեստական գործառույթը դեռ շարունակում է ընկալվել որպես «šī'r», բայց հետզհետե վերածվում է բանաստեղծության: Ժամանակակիցները, սակայն, նրա առաջին դրսևորմանը տալիս են բացասական գնահատական՝ համարելով, որ այն անհամատեղելի է հասարակության հաստատագրված արժեքների հետ: Դա ոչ թե ձեռքբերում է, այլ բացարձակապես անպիտան, ճշմարտությանը վնասող մի բան: Ավելին, գեղարվեստական գործառույթի (կամ ստի՝ արաբ. کذب [kiḏḏb]) կիրառման հետևանքով տեղ գտնող

²⁰ Abu-l-Faraj al-Isfahani. Kitāb al-Agani, v. 1-21, Beirut, 1956-1957, v. 4, p. 291.

խեղաթյուրումները խիստ վտանգավոր են, քանի որ պահպանելով «ճի՛ր»-ի ձևը՝ մեկնաբանվում են իբրև ճշմարտություն:

Ավանդական մի հասարակության համար, որի վերարտադրությունը հիմնված է սոցիալապես կարևոր տեղեկության բանավոր փոխանցման մեխանիզմի վրա, այդ տեղեկությունը գիտակցաբար աղավաղող ցանկացած գործողություն, «նախնիների փորձը, «նախնիների իմաստությունը» (հիշենք, որ հենց դա էր ընկած արձակ բանաստեղծական տեքստի հիմքում) փոխանցող տեքստի ցանկացած փոփոխություն համարվում էր պարսավելի, վնասակար և «ճի՛ր» հասկացության հետ անհամատեղելի:

Այս կապակցությամբ անհրաժեշտ է կանգ առնել նախախլամական արաբական մշակութային համակարգի համար մեծ կարևորություն ունեցող ևս մեկ հասկացության՝ *մուրուվայի* (արաբ. مروءة [murūʿa]) վրա, որը, ըստ Ի. Գոլդզիերի, բառացիորեն կարելի է սահմանել որպես «իսկական բեղվինին բնորոշ արժանիքների ամբողջություն»: Հանդես գալով որպես բոլոր ավանդական արժանիքների միասնություն, որոնք են քաջությունը, պատիվը, հյուրընկալությունը և այլն, մուրուվան հին, ջահիլիայի դարաշրջանում ավելի վառ էր փայլում, քան իսլամի ժամանակ: Իսլամն իբրև կատարյալ կենսակերպ առաջ քաշեց *դինի* (արաբ. دين [dīn])՝ կրոնի գաղափարը, ինչը բավական չէր մուրուվայի պահանջները բավարարելու համար: Մինչդեռ, շարունակում է գիտնականը, բանաստեղծությունը «խոսքի մեջ ամփոփված մուրուվան է, նրա ծաղկումն ու անկումը պայմանավորված են այն կենսաձևով և հոգեվիճակով, որոնցից և ծագում է իսլամի մուրուվան»²¹ :

Երկու հիշատակված սահմանումները՝ բանաստեղծությունը որպես «ամենահավաստի գիտելիք» և որպես «խոսքի մեջ ամ-

²¹ Goldziher J., Alte und neue Poesie im Urtheile der arabischen Kritiker. - in: Abhandlungen zur arabischen Philologie, 1, Leiden, 1896, s. 149.

փոփված մուրուվա», շեշտում են «ճի՛ր»-ի դերը, և այդ դերը բնորոշող սահմանումը կարող է ստանալ «նախահայտնություն» ձևակերպումը, քանի որ այստեղ ամրագրված են նախախլամական տոհմացեղային հասարակության արժեհամակարգի սկզբունքային հիմքերը:

Ղուրանն ու Մարգարեի քարոզը սկզբունքորեն նոր (միաստվածության) հիմքի վրա կազմակերպված հասարակությանը՝ ումմային, տվեցին Ալլահի անունով գրանցված և օրհնված ամբողջական արժեհամակարգ: Նախքան այս հեղափոխական արարն արդեն տեքստի ձևով «ճի՛ր»-ում (հիշեցնեմ, որ «ճի՛ր»-ը գիտակցվում էր որպես արձակ բանաստեղծական տեքստ) արտահայտված յուրօրինակ պատվիրանների դեր էր խաղում հենց մուրուվան, որը ներկայացնում էր թույլատրելին, դրվատելին և պարսավելին սահմանող պատկերացումների վերաբերյալ «հասարակական պայմանագրի» վրա հիմնված և նախնիների հեղինակությամբ սրբագործված արժեհամակարգին համապատասխանող որակների մի ամբողջություն:

Այն պահից, սակայն, երբ Արաբական թերակղզու կենտրոնական և հյուսիսային մասերում տարածում են գտնում քրիստոնեությունն ու հուդայականությունը, այսինքն՝ Հայտնություն բովանդակող կրոնները, «ճի՛ր»-ի նմանօրինակ ընկալումն ու ըմբռնումը, հետզհետե կորցնելով իր արդիականությունը, վերաիմաստավորվում է: Դրա հետ մեկտեղ Մեքքայի կռապաշտները Մուհամմադ մարգարեի՝ իբրև Ալլահի առաքյալի գործունեության առաջին իսկ քայլերից մերժում են նրա առաքելությունը և փորձում են նույնացնել նրա և բանաստեղծների գործունեությունը: Մարգարեի առաքելության խեղաթուրման այս փորձի կապակցությամբ նրան ի վերուստ շնորհվել են Ղուրանի հատուկ հանգատողեր՝ այաթներ, այդ թվում հետևյալ այաթները.

– «Չէ որ նրանք, երբ նրանց ասվում էր. «Չկա այլ աստված Ալլահից բացի», ամբարտապանում էին և ասում. «Միթե մենք հի-րավի կլքենք մեր աստվածներին մոլեգնոյ բանաստեղծի (արաբ. ليشاعِرٍ مَجْنُونٍ [lisha'ir majnun]) պատճառով» (Ղուրան, 37: 35-36)²²:

– «Մենք նրան չենք ուսուցանել բանաստեղծություն (shi'r), և նրա համար չէ դա...» (Ղուրան 36:69):

– «Հիրավի՛ դա ազնվաբարո Առաքյալի խոսք է: Դրանք բա-նաստեղծի (shai'r) խոսքեր չեն...» (Ղուրան 69:40-41):

Այս թեմայի շուրջ վեճերի արձագանքն ավելի շատ պահպան-վել է Ղուրանի 26-րդ սուրայում, որն այդպես էլ կոչվում է՝ «Բա-նաստեղծներ» (արաբ. الشعراء [Šu'ara']): Այն սկսվում է հետևյալ վեց այաներով.

– «Տահ, Մին, Միմ (1): Ահա պարզ գրքի նշանները (2): Գուցե դու պատրաստ ես ինքդ քեզ սպանել այն բանի համար, որ նրանք չեն հավատում (3): Եթե Մենք ցան-կանանք, Մենք երկնքից նրանց համար նախանշան կի-ջեցնենք, և նրանց ճիտերը կծովեն դրա առաջ (4): Նրանց չի շնորհվում և ոչ մի նոր հիշեցում Բարեգութից՝ առանց այն բանի, որ նրանք չըրջվեն Իրենից (5): Նրանք խաբեություն համարեցին, բայց նրանց կհասնեն լուրեր այն մասին, ինչը **նրանք** ծաղրում էին (6)»:

Այնուհետև Մուհամմադ մարգարեի բերանով բերվում են իրեն նախորդած մարգարեների օրինակներ, որոնց նույնպես իրենց ժամանակակիցները համարում էին «ստախոսներ»: Հիշա-տակվում են Մուսայի (موسى), Հարունի (هارون), Իբրահիմի (إبراهيم),

²² Ղուրանի բոլոր այաթների թարգմանությունը հեղինակինն են:

Նուհի (نوح), Հուդի (هود), Սալիհի (صالح), Լուտի (لوط), Շուայբի (شُعَيْب) անունները:

Մարգարեների անունների հետ կապված գրեթե բոլոր սյուժեներն ավարտվում են հետևյալ արտահայտություններով.

«...Նրանք խաբեություն համարեցին, սակայն նրանց կհասնեն լուրեր այն մասին, ինչը նրանք ծաղրում էին» կամ «Նուհի ժողովուրդը սպախոսներ համարեց առաքյալներին», կամ «Ադերը սպախոսներ համարեց առաքյալներին»:

Ահա Շուայբին նվիրված վերջին սյուժեն.

- «Եվ նրան սպախոս համարեցին, և նրանց պատիժը վրա հասավ ծածկույթի օրը, հիրավի, դա պատիժն էր Մեծ օրվա (189): Հիրավի, դրա մեջ՝ նախանշանն է, սակայն նրանց մեծ մասը չի հավատում (190): Եվ, հիրավի, քո Տիրակալը մեծ է, բարեգութ (191): Եվ, հիրավի, դա աշխարհների Տիրակալի ուղերձն է (192): Իր հետ իջավ հավատարիմ հոգին (193) քո սրտի վրա, որպեսզի դու լինես ազդարարների թվում (194). մաքուր, արաբերենով (195)»:

Սուրայի այս մասում արդեն ակնհայտորեն ձևակերպվում է «ճշմարտություն-սուտ» հակադրությունը, ընդ որում, այն ֆիքսվում է հենց «ճշմարիտ» կամ «սուտ» արտահայտության իմաստով: Գրանցենք, որ «հավատարիմ ոգին» (արաբ. الرُّوحُ الْأَمِينُ [ar-ruh al-amin]) այս ճշմարտությունը բերեց մարդկանց, «մարդկանց սրտներին իջեցրեց» «մաքուր, արաբերեն **լեզվով**», այլ կերպ ասած, այն նույն **լեզվով, որով** ասվում է նաև սուտը: Գրանցենք նաև, որ այստեղ **որոշակիորեն** մատնանշվում է սկզբունքային տարբերությունը. «ճշմարիտ տեքստը» արդեն աշխարհների Տի-

րակալի ուղերձն է, այն շնորհված է, որպեսզի նրա Առաքյալները «խրատողներ» դառնան:

Այնուհետև սուրայի տեքստում հետևում են սպառնալիքներ Մուհամմադ մարգարեի առաքելությունը **մերժողների** հասցեին, ինչից հետո նշվում է, թե **ինչպես** պետք է քարոզել, և **ու՛մ** պիտի ուղղված լինի այդ քարոզը: **Սուրան** ավարտվում է հետևյալ այաթներով.

–«Արդյո՞ք, չհայտնեմ, թե սափանաներն ում վրա են իջնում (221): Նրանք իջնում են ամեն մի ստախոսի, մեղավորի վրա (222): Նրանք արտավիժում են թաքուն լսվածք, սակայն նրանց մեծ մասը ստախոսներ են (223): Եվ բանաստեղծները՝ նրանց հետևում են մոլորյալները (224): Միթե դու չես տեսնում, որ նրանք թափառում են բոլոր հովիտներում (225) և այն, որ նրանք ասում են այն, ինչը չեն անում (226), բացի նրանցից, ովքեր հավատացել են և բարի գործեր են կատարել և Ալլահի անունը շար են հիշել (227): Եվ նրանք սափարում են ստացել այն բանից հետո, երբ հալածվել էին, կիմանան հալածողները, թե ինչպես կշրջվեն գլխիվայր (228)»:

Ղուրանի միջնադարյան մեկնություններից մեկում այս այաթները բացատրվում են հետևյալ կերպ. «Նրանք, ում մասին Մարգարեն ասում է, որ «**արտավիժում են թաքուն լսվածք**»՝ դա ոչ արդարակյաց Մուսայյիման²³ է և նրա նմանները՝ քահիններից:

²³ Մուսայյիման 7-րդ դարի Արաբիայի «մարգարեական շարժման» ազդեցիկ կերպարներից է, որի գաղափարները մոտ էին Մուհամմադի քարոզի սկզբնական շրջանի գաղափարներին: Տե՛ս Пиотровский М.Б., Мусайлима // Ислам: Энциклопедический словарь, с. 174.

Իսկ «**Եվ բանաստեղծները՝ նրանց հեղուկ են մոլորյալները**» այսթում «**հեղուկ են**» նրան պոեզիայում, արտասանում այն և նրանից (բանաստեղծից – Դ. Հ.) փոխանցում ուրիշներին: «**Նրանք թափառում են բոլոր հովիտներում**»՝ հովիտներից է նրանց բառն ու կարողությունները: Թափառում են և յուրաքանչյուր հանդիպածին արտասանում ձոն (արաբ. *حد [madh]*) և հիջա (*هجا [hijā ']*): «**Եվ այն, որ նրանք ասում են այն, ինչ չեն անում**»²⁴:

Այսպիսով, պարզ է դառնում, որ մարգարեական առաքելության առաջին փուլում զգացվում է և անգամ հստակորեն գիտակցվում է հետևյալ անհրաժեշտությունը. պարզորոշ և միանշանակ կերպով նշել այն, որ Ալլահի առաքյալը հակադրվում է նրանց, «ում վրա սատանաներ են իջնում», այլ կերպ ասած, նրանց, ում գիտելիքը ոչ թե Աստծուց է, այլ՝ սատանայից²⁵:

Նախ և առաջ, դա քահիններն են՝ նախաիսլամական հեթանոսական քրմական ավանդույթի ներկայացուցիչները, նրանց հաջորդում են բանաստեղծները, որոնց մեկնաբանը մեղադրում է նրանում, որ.

ա) նրանք դեգերում են հովիտներում և առաջին իսկ պատահական պատվիրատուի պահանջով բանաստեղծություններ են հորինում, ընդ որում այն երկու ժանրերում, որոնցում, ըստ ամենայնի, բանաստեղծական երևակայությունն ու մտացածինը ավելի վաղ են արտահայտվել, քան մյուս ժանրերում,

բ) նրանք ասում են այն, ինչը չեն անում:

²⁴ Tafsir al-Jalalayn, Beirut, 1986, p. 493.

²⁵ Այն մասին, թե ինչքան լայն տարածում էին գտել պատկերացումներն այն մասին, թե պոետներին ոգեշնչում են ջիններն ու շեյթանները, տես՝ А.Б. Куделин. Аравийская словесность VI-VIII вв.: опыт рассмотрения в фольклорно-мифологическом контексте // Фольклор и мифология Востока, М., 1999, с. 241.

Նախախլամական շրջանում «մի՞թե չես տեսել» (արաբ. *ألم تر* [*ʾālam tara*]) հոետորական հարցը բանաստեղծական ուղերձի բավականին տարածված ձև էր, որով բանաստեղծը դիմում էր իր ցեղակիցներին, երբ խոսողը համայնքին պատմում էր այնպիսի մի բան, ինչն, ըստ նրա ենթադրության, համայնքն արդեն իսկ պետք է իմանար: Դիմելու այս ձևը Ղուրանում նույնպես հաճախ է հանդիպում, դրա օգնությամբ մուսուլմանական համայնքի հիշողության մեջ ակտուալացվում է այս կամ այն տեղեկությունը բոլորին հայտնի որևէ դեպքի կամ երևույթի վերաբերյալ (օրինակ, *Փիղ* (արաբ. *الفيل* [*al-fil*]) սուրան, որտեղ «*ʾālam tara*» արտահայտության օգնությամբ ակտուալացվում է փղի մարդկանց, Աբրահամի արշավի և այլնի վերաբերյալ տեղեկությունը):

Ամենայն հավանականությամբ, Մեքքայում նման կարծիքը բանաստեղծների մասին արդեն իսկ բավականին մեծ տարածում ուներ: Եթե վերադառնանք հիշատակված տեքստին, կարելի է ասել, որ Մարգարեի բերանով, հավանաբար, հաստատվում է հետևյալը. նախ և առաջ, նա, ի տարբերություն բանաստեղծների, ոչ ոքի պատվերը չի կատարում, և երկրորդ՝ իր հղած խոսքը, իր ուղերձը ճշմարիտ է, և հենց դրանով է տարբերվում բանաստեղծների ստից:

Թեև Հայտնության կամ Աստծո խոսքի և բանաստեղծական խոսքի հստակ հակադրությունը դրսևորվում է արդեն իսկ Ղուրանում, հաջորդ դարերում նույնպես փորձեր էին արվում համեմատություն անցկացնել մուսուլմանների Սուրբ գրքի և բանաստեղծության միջև: Հավանաբար դեռևս բավականին կենսունակ էին պատկերացումները «մուրուվա-բանաստեղծության» վերաբերյալ և, հավանաբար, դրանք լիովին դուրս չէին մղվել տոհմացեղային համայնքների գիտակցությունից «Ղուրան-ալ-դին»-ի վերաբերյալ պատկերացումներով:

Հատկանշական է, որ ի պաշտպանություն Աստվածային Հայտնության՝ ստեղծվել էր գիտության հատուկ մի ճյուղ՝ «Ղուրանի անկրկնելիություն» (արաբ. إجاز القرآن [iˈjāz al-qurʿān]), որի հիմնական սկզբունքի համաձայն՝ ղուրանական տեքստի համեմատությունը հասարակ մահկանացուների կողմից ստեղծված բանաստեղծական տեքստի հետ բացարձակապես անթույլատրելի էր: Միևնույն ժամանակ հայտնի է, որ միջին դարերում բազմիցս ձեռնարկվել են նմանօրինակ, այդ թվում և Ղուրանի հետ մրցակցող բանաստեղծություն հորինելու փորձեր: Համենայն դեպս, հենց դրա վրա էին հիմնված հերետիկոսության մեջ մեղադրանքները, որոնք հնչում էին Ալ-Մութանաբիի (մահ. 965թ.), Աբու Ալա Ալ-Մաարիի (մահ. 1058թ.), Իբն Ալ-Ռավանդի (մահ. 911թ.) և մյուսների հասցեին: Ուշագրավ է, որ նշված հեղինակների համոզմամբ իրենց ստեղծագործությունները գերազանցել են Ղուրանը ոչ միայն ձևի, այլև բովանդակության, գաղափարի, այսինքն՝ «ճշմարտության» առումով:

Ինչևիցե, այս պարագայում կարևոր է նշել, որ Ալլահի առաքյալի մարգարեական գործունեությունից սկսած արաբամուսուլմանական մշակույթի շրջանակներում հատուկ ձևակերպում է ստանում «Աստծո Խոսք – բանաստեղծական խոսք»²⁶ հակադրությունը, ընդ որում, որպես այդ «հականարտության» հիմք և չափանիշ՝ երկու նշված տեսակների տեքստերում օգտագործվում է «ճշմարտություն-սուտ» գնահատականը:

²⁶ 8-րդ դ. կեսին, երբ Իբն ալ-Մուկաֆֆայի և նրա գործընկերների գործունեության արդյունքում ձևավորվեց ադաբի շրջանակը, որը վերաիմաստավորում էր մուրուվայի հիմնական կատեգորիաները այդ դարաշրջանի կոնտեքստում, հենց ադաբը սկսեց խաղալ տեքստի դեր, որը տարածում էր «ճշմարտությունն» ու ուսուցանում էր այն: Այս կապակցությամբ հատկանշական է հադիսը, որն, ըստ ամենայնի, կեղծ է. «Ադաբը հավասար է կրոնի (din) համարյա երկու երրորդին» (մեջբ. ըստ I. Goldciher. Adab. - in: The Encyclopaedia of Islam, London, 1908, v. 1, p. 122.

Արաբախորայելական մշակույթի զարգացման մի ողջ փուլի համար այդ հակադրությունը դարձավ արաբական բանասիրական ավանդույթի ներկայացուցիչների, տարբեր փիլիսոփայական ուղղությունների ներկայացուցիչների և մասնավորապես՝ արևելյան պերիպատիկների բուռն քննարկման առարկա:

Եվրոպական մշակույթի շրջանակներում ձևակերպված հակադրությունը սկզբունքորեն այլ բնույթի էր: Բանաստեղծության հակադրումը միանգամայն այլ հասկացությանը՝ վերջինիս առանձնահատկություններն ու հատուկ իմաստները վերհանելու նպատակով առաջին անգամ ձևակերպվել է Արիստոտելի «Պոետիկայում»²⁷: Խոսքն այն հայտնի տեքստի մասին է, որտեղ նա համեմատություն է անցկացնում բանաստեղծության և պատմության միջև: Արիստոտելը չէ միայն, որ տարբերություններ է դնում արձակ և բանաստեղծական տեքստերի միջև: Հերոդոտի աշխատությունը կարելի է վերաշարադրել բանաստեղծական լեզվով, սակայն նույնիսկ դրանից հետո այն կշարունակի ընկալվել իբրև պատմության մի տարատեսակ: Սկզբունքային տարբերությունն այն է, որ այս երկու տեսակի տեքստերից մեկը նկարագրում է այն, ինչն «իրականում է տեղի ունեցել», իսկ մյուսը՝ այն, «ինչը կարող էր տեղի ունենալ», մեկը դիտարկում է «այն, ինչ կար», մյուսը՝ «այն, ինչը կարող էր լինել՝ նույնատիպ իրավիճակում, սակայն այլ պայմաններում:

Արիստոտելը եզրակացնում է, որ պոեզիան որոշ առումով իրենից ներկայացնում է գիտության ավելի բարձր և փիլիսոփայական բնագավառ, քան պատմությունը: Քանի որ առաջինի ուշադրության օբյեկտը հավերժականն է, նրա պնդումները կրում են ավելի ընդհանրական բնույթ: Իսկ պատմության պնդումները սահ-

²⁷ Аристотель и античная литература, М., 1978, с. 187.

մանափակված են ժամանակային շրջանակներով, ինչի արդյունքում դրանք ավելի մասնավոր բնույթ ունեն: Անգամ եթե բանաստեղծը գրում է իրականում տեղի ունեցած իրադարձությունների մասին այնպես, ինչպես դա անում է պատմաբանը, նա միևնույն է շարունակում է մնալ բանաստեղծ, քանի որ իրականում անցյալում տեղի ունեցած իրադարձությունները կարող էին կատարվել նաև ապագայում: Այլ կերպ ասած, այս առումով հնացածը նույնքան ճշմարտացի է, որքան որ ապրվող ներկան:

Այսպիսով, համաձայն Արիստոտելի, հնացածի ճշմարտացիությունը շատ ավելի արժեքավոր է (իմացության տեսանկյունից), քան իրական պատմական ճշմարտությունը: Այս մոտեցումն իր շարունակությունն է ստացել միջնադարյան փիլիսոփայական աշխատություններում: Միևնույն ժամանակ, թեև Ուսուցչի (այդպես էին անվանում Արիստոտելին արաբախորայելական ավանդույթում) աշխատությունները, այդ թվում նաև «Պոետիկան», սկսած 8-րդ դ.-ից թարգմանվում էին արաբերեն, նրա գաղափարները մնացին այդպես էլ չընկալված և չհասկացված: «Պոետիկայի» արաբ մեկնաբանները հիմնականում դիմում էին այս աշխատության այն մասերին, որոնք ունեին ավելի ընդհանուր նշանակություն: Նույնիսկ Իբն Ալ-Ասիրի (1233 թթ.) պես մտածողը «Պոետիկայի» այն մասը, որտեղ քննարկվում են ողբերգությունն ու դրաման, համարում էր «անհասկանալի և խճճված, ինչպես հույնի խոսքը»:

Նույնը կարելի է ասել նաև Մեծն Մեկնաբանի՝ Իբն Ռուշդի (մահ. 1198 թ.) վերաբերյալ: Բանաստեղծության էության մասին մտորելիս նա աշխատում էր ապահիստեղծկտուալացնել այն՝ համարելով, որ պոեզիայի նպատակը չպետք է լինի որևէ բան ապացուցելը կամ որևէ մեկին որևէ բանում համոզելը: Իսկ արիստոտեսյան չափանիշներից ելնելով՝ բանաստեղծության մասին խոսելիս

նա «Կալիլա և Դիմնայի» առակներով է փոխարինում վերոնշյալ զույգում տեղ գտած պատմությունները և գալիս է այն եզրակացության, որ պոեզիայի էությունը պատկերման առավելագույն վերացականությունն է մշակույթի մեջ:

Հավանաբար, այս դիրքորոշումն առավել հստակ կերպով արտահայտել է միջնադարյան մեծ բանասեր Ալ-Ասկարին (մահ. 1005 թ.): «Բանաստեղծից պահանջում են խոսքի գեղեցկություն, իսկ ճշմարտությունը փնտրում են մարգարեների մոտ»:

Հիմնական գրականություն

Տե՛ս Դասախոսություն 2-ի գրականությունը:

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 4.

ԱՐԱՐԱԿԱՆ ԹԵՐԱԿՂԶԻՆ ԵՎ ՔԱՐՈՋԻ ՍԿԻՋՔԸ

20-րդ դարի իսլամագետներից մեկը ժամանակին մի միտք է արտահայտել, որի իմաստը հակիրճ կարելի է հետևյալ կերպ ձևակերպել. «իսլամն առաջացավ ուղտի շնորհիվ»: Դա իհարկե չափազանցություն է, բայց որոշակի ճշմարտություն այս մտքի մեջ այնուամենայնիվ կա: Ուղտը հսկայական դեր էր կատարում արաբական ցեղերի կյանքում: Ուղտը անապատային և տափաստանային պայմաններում կարող է հինգ օր ջուր չխմել, ուստի այն չափազանց կարևոր էր որպես տեղաշարժվելու միջոց: Այն երկար ճանապարհներ կտրելու հնարավորություն էր տալիս: Մոտ 4-րդ դարի վերջին ուղտի մի հատուկ տեսակ բուծվեց, որն իր վրա 150 կգ-ից մինչև կես տոննա (եզակի ուժեղ կենդանիները) բեռ էր տեղափոխում: Ուղտը կաթ էր տալիս, ուղտը միս էր տալիս, ուղտը բուրդ էր տալիս, ինչպես նաև կաշի, որն օգտագործում էին վրաններ և հագուստ կարելու համար: Բացի դրանից, հատուկ թամբելու եղանակներ առաջացան, որոնց շնորհիվ հնարավոր դարձավ բեռն ավելի շահեկան ձևով բարձել կենդանիների վրա: Ուղտերի վրա նստած հեծյալները մասնակցում էին ասպատակային արշավներին: Դեռ մ.թ.ա. 4-րդ դարից հայտնի են ուղտերի վրա կռվող նետաձիգ վարձկանները, որոնց տարածաշրջանի տիրակալները ձգտում էին ունենալ իրենց բանակներում:

Արաբները մի ասացվածք ունեն, ըստ որի՝ Ալլահի հարյուրերորդ գաղտնի անունը, որը մարդկանց հայտնի չի, հայտնի է ուղտին:

Ուղտերի՝ անապատային ճանապարհներով մեծ բեռներ տեղափոխելու ունակությունը հնարավորություն էր տալիս զարգաց-

նել ապրանքափոխանակության մեծ ծավալներ ապահովող քարավանային առևտուր:

Մուհամմադ մարգարեի գործունեության մասին պատմող ավանդապատումներից մեզ հայտնի է, որ 624թ. Բադրի ճակատամարտում, երբ մուսուլմանները հարձակվեցին կռապաշտ մեքքացիների քարավանի վրա, այն բաղկացած էր հազար ուղտից և արծաթ էր տեղափոխում²⁸: Այս ամենից կարելի է պատկերացնել, թե պատմական այդ ժամանակահատվածի և բնակլիմայական նման պայմանների առանձնահատկությունները հաշվի առնելով, ինչ հսկայական և լուրջ նշանակություն ունեցող առևտուր էին կարողացել կազմակերպել Մեքքայի վաճառականները:

Ղուրանի 106-րդ՝ Կուրեյշ կոչվող սուրայի (Բանու Կուրեյշը Մեքքայում բնակվող ցեղի անունն է) առաջին երկու հանգատողերից (այաթ) պարզ է դառնում, որ Կուրեյշ ցեղի առևտուրը կապում էր հարավը հյուսիսի հետ և արևելքը արևմուտքի հետ: Սուրայի առաջին տողերն են.

–«Կուրեյշի միության համար (1) ամառվա և ձմեռվա ճամփորդությունների նպատակով (2)»:

Սրանից պարզ է դառնում, որ քարավանները ուղևորվում էին դեպի հյուսիս և դեպի հարավ: Կարող ենք ենթադրել, որ տարեկան առնվազն երկու մեծ քարավան էր անցնում: Դեպի հյուսիս գնացող քարավանները Մեքքայի միջոցով կապում էին Եմենը Սիրիայի, իսկ այնտեղից՝ Պաղեստինի և Եգիպտոսի հետ: Դեպի հարավ գնացող քարավանները նույն Մեքքայի միջոցով կապում էին հյուսիսը Եթովպիայի հետ, քանի որ աֆրիկյան մայրցամաքը Ա-

²⁸ Այլ տվյալներով՝ խունկ և կտորեղեն: Եկամուտը պետք է կազմեր 50 հազար ոսկե դինար:

րաբական թերակղզու հարավային մասից բաժանող Բաբ ալ-Մանդեբը շատ նեղ է: Ակտիվ և բազմազան էր ապրանքափոխանակությունը նաև Սասանյան Իրանի հետ: Շնորհիվ ձևավորված և գրեթե անխափան գործող քարավանային ճանապարհների՝ Մեքքան դարձավ առևտրական կարևորագույն կենտրոն և խաչմերուկ:

Մեքքայի ստեղծման ավանդապատումները շատ հետաքրքիր են: Համաձայն մուսուլմանական ավանդության՝ Մեքքան հիմնել են Իբրահիմը և ստրկուհի Հաջարից ծնված նրա որդի Իսմայիլը, այնուհետև այստեղ է բնակվել Բանու Ջուրիում ցեղը, իսկ հետո՝ Կուեյդ՝ բանու Կուրեյշի, որն այդ ժամանակ դեռ փոքր ցեղ էր, առաջնորդը, ով դուրս է մղում ջուրհումցիներին և այստեղ բնակություն հաստատում:

Համաձայն առասպելի²⁹ Իբրահիմն իր կնոջ՝ Սառայի ճնշման տակ Հաջարին և Իսմայիլին բերում և թողնում է այս անապատային անմարդաբնակ վայրում: Հաջարն ու իր մանկահասակ տղան, կիզիչ արևի տակ առանց ջուր և սնունդ մնալով, տառապում են և սարսափած՝ Ալլահի անունը բացականչելով՝ վազում են Սաֆա և Մարվա բլուրների կողքով³⁰: Ալլահը, լսելով նրանց աղոթքները և աղերսանքը, Իսմայիլի ոտքի տակից աղբյուր է բխեցնում³¹: Այդ աղբյուրը սուրբ Զամզամն է, որի շուրջն էլ սկսեցին

²⁹ Այս առասպելի մի շարք գրանցված տարբերակներ կան, որոնցից ներկայացվում է ամենատարածվածը:

³⁰ Այս պատճառով հաջի ժամանակ Մեքքա ուխտի գնացողները նույնպես վազում են այս բլուրների մոտ:

³¹ Առասպելի մեկ այլ տարբերակում Իբրահիմը ճանապարհի կեսից վերադառնում է և տեսնելով Հաջարի և Իսմայիլի վիճակը՝ աղոթում է Ալլահին, որ փրկի նրանց, որից հետո իր գավազանով հարվածում է գետնին և անապատում բացվում է Զամզամ աղբյուրը: Սակայն այս տարբերակը հակասում է այն գաղափարին, որը առասպելի էությունն է. Ալլահը փորձության է ենթարկում Իբրա-

մարդիկ բնակվել: Այսպես սկիզբ դրվեց այն ավանին, որը կոչվեց Մեքքա:

Այնուհետև Իբրահիմը և Իսմայիլը կառուցում են *Քաաբան* (արաբ. الكعبة [al-k‘aba]): Այս մասին հիշատակվում է Ղուրանի ավ-Բակարա սուրայի 127-րդ այաթում: Համաձայն ավանդության՝ Իբրահիմը բերեց և Քաաբայի պատի մեջ ամրացրեց Սև քարը, որն Ալլահը տվել էր Ադամին: Այդ ժամանակ քարը սպիտակ էր, սակայն մարդկային մեղքերի ազդեցության տակ աստիճանաբար սևացավ: Այս քարը համարվում է սրբազան և չնայած այն կռապաշտների պաշտամունքի առարկա էր, Մուհամմադ մարգարեն չհրաժարվեց դրանից: Հնագույն շրջանից Քաաբայի շուրջն ընկած տարածքները համարվել են *հարամ* (արաբ. حرم[haram]) արգելված, քանի որ ուխտի ժամանակ այստեղ արգելված էր զենքով մուտք գործել և արյուն թափել: Ուխտագնացների կարիքների սպասարկումը Մեքքայի բնակիչների համար ևս մեկ կարևոր եկամտի աղբյուր էր: Քաաբայից դեպի արևելք անցնում է վադին, որի շնորհիվ էլ հնարավոր է սեզոնային հողագործությունը:

Քաաբայից ոչ շատ հեռու *Ուքազ* (արաբ. اوكاذ[‘ukaḏ]) անունով վայր կար, որը հարամ ամիսներին (սրբազան ամիսներին), որոնց ժամանակ, ինչպես արդեն նշվել է, արյուն թափել և զենքով այստեղ մուտք գործել չէր կարելի, վերաձվում էր մեծ մարդաշատ շուկայի: Կար հատուկ մի ցեղ, որը հսկում էր, որ արյուն չթափվի: Այդ ցեղը չէր պաշտում ո՛չ Քաաբան, ո՛չ Քաաբայում դրված աստվածիկներին և հենց այդ պատճառով կարգուկանոնը պահպանելու նպատակով զենք կրելու իրավունք ուներ: Այս մեծ շուկայում տարբեր ցեղեր գալիս էին, ամեն մեկը բերում էր իր ունեցածը, առևտուր անում: Տարբեր ցեղեր հանդիպում էին և փորձում իրար

հիմին, որ ստուգի, թե որքանով է նա հավատում Ալլահի կամքին և նրա գթասիրտ և բարեգութ (al-raḥmān al-raḥīm) էության բացարձակությանը:

մեջ գոյացած խնդիրների վերաբերյալ պայմանավորվել, տեղեկություններ փոխանակել, դաշինքներ ձևավորել: Ուքազում նաև մշակութային փոխանակություն էր տեղի ունենում:

Այդ շարունակական բնույթ ունեցող հաճախակի հանդիպումների և շփումների արդյունքում ստեղծվում է նաև բոլորի համար հասկանալի ընդհանուր լեզու. արաբերենի տարբեր խոսվածքները սկսում են մոտենալ իրար: Ցեղերից յուրաքանչյուրն իր բարբառով էր խոսում, սակայն սկսում է ձևավորվել մի ընդհանուր լեզու, որը հավանաբար ընկած է Ղուրանի լեզվի հիմքում: Հարկ է նշել, սակայն, որ այս հարցի վերաբերյալ կան նաև այլ վարկածներ:

Ուքազը փոխանակման և առևտրի կարևոր կետ էր, այնտեղ ցեղերը իրենց բանաստեղծների՝ շաիրների հետ էին գալիս, և այս շաիրները, արտասանելով իրենց բանաստեղծությունները՝ *կասիդաները* (արաբ. قصيدة [qasīda]), մրցում էին իրար հետ: Այստեղ արտասանվող բանաստեղծություններում նրանք փառաբանում էին իրենց ցեղը, փնտվում թշնամիներին, գովաբանում իրենց և իրենց հերոսներին: Կա մի պատում, ըստ որի՝ լավագույն կասիդան՝ բանաստեղծությունը, ոսկե տառերով գրվում էր կաշվի վրա և կախվում էր Ուքազում՝ ամենաբարձր սյան վրա, այդ պատճառով այդ բանաստեղծությունները կոչվում էին «*մուալլակա*»-ներ (արաբ. معقات [mu‘allaqat]) կախվածներ:

Ըստ հաշվարկների՝ Մուհամմադի կենդանության օրոք Մեքքայում 8-12 հազար մարդ էր բնակվում: Ճշմարտությանը հավանաբար ավելի մոտ է 8 հազար թիվը: Կան նաև այլ հաշվարկներ, որոնց համաձայն՝ Մեքքայի բնակլիմայական պայմանները թույլ էին տալիս կերակրել միայն 1.500-2000 մարդ: Այստեղից կարելի է եզրակացնել, որ Մեքքայի բնակչությունը ապրում էր հիմնականում առևտրի շնորհիվ: Հայտնի է, որ Մեքքայի բնակիչները

գրադվում էին նաև անասնապահությամբ և հողագործությամբ, սակայն առևտրական ճանապարհների խաչմերուկում գտնվող քաղաքի բնակիչների հիմնական գործը կապված էր քարավանների ապահովման և սպասարկման հետ:

Առևտրի շնորհիվ Մեքքան կապվում է նաև ամբողջ շրջակայքի՝ Հիջազ կոչվող տարածքի քոչվոր ցեղերի հետ: Այդ քոչվոր ցեղերն ունեին ասպատակային տնտեսություն, հարձակվում էին, ավազակություն էին անում և դրանից խուսափելու համար քարավանատերերը պայմանավորվում էին վճարել՝ քարավանների անվտանգ անցնելու համար:

Քարավանների մեծացմանը զուգահեռ շատ ավելի գայթակղիչ է դառնում այդ քարավաններն ամբողջովին վերցնելը, քան փոքր վճարով բավարարվելը: Մեքքացիները մեկ քայլ առաջ են գնում և դառնում քարավանային առևտրի մեծ և հարատև ծրագրի մասնաբաժին ունեցող մասնակիցներ: Այսինքն՝ նրանք ոչ միայն թույլ էին տալիս իրենց տարածքով քարավանների երթը, այլ ապահովում դրանց անվտանգությունը և դրա դիմաց ընդհանուր եկամտից ստանում իրենց հասանելիքը: Այսպիսով, քոչվորական ցեղերը այլևս շահագրգիռ են ոչ միայն քարավանների՝ իրենց տարածքներով անցնելու, այլ նաև նրանց անվտանգությունը ամբողջ ճանապարհի երկայնքով ապահովելու հարցում:

Սա չափազանց կարևոր է և վկայում է այն մասին, որ Մեքքայում գոյություն ունեցող վարչական որոշակի համակարգն աստիճանաբար բարդանում էր, և ակնհայտ էին դառնում որոշակի կենտրոնացման միտումներ: Հայտնի է, որ այս քաղաքում գործում էր կառավարման մարմին, որը կոչվում էր *մալա'* (արաբ. *ملا* [malā'])՝ խորհուրդ: Մեքքայում բնակվող ցեղերը անկախ էին և գործում էին ինքնուրույն: Նրանք շատ խանդազին էին վերաբերվում այդ անկախության հնարավոր սահմանափակմանը: Մալա՛ի

որոշումները չէին կարող պարտադիր բնույթ ունենալ, բացի այն դեպքերից, երբ որոշումները ընդունվում էին միաձայն կամ ճնշող մեծամասնությամբ: Քաղաքի բոլոր բնակիչների համար կարևոր նշանակություն ունեցող մեծ ծրագրերը, օրինակ՝ հերթական քարավանի կազմակերպումը կամ ուխտագնացների ապահովումը անհրաժեշտ պայմաններով, բնականաբար, ավելի էին արժևորում խորհրդի գործունեությունը:

Մեքքայի շուրջ ստեղծվում է միասեռ դաշտ, ինչը հրաշալի միջավայր է, որպեսզի ստեղծվի դիցաբանական մի համակարգ, որից ծնվեն իդեոլոգեմներ, որոնք թույլ են տալիս կոնսոլիդացնել այդ ամբողջ մարդկային զանգվածը:

Մուհամմադ մարգարեն, ըստ ամենայնի, ծնվել է այսպես կոչված Փղի տարում՝ մոտ 570 թ., Բանու Հաշիմ ցեղի, որը Կուրեյշ ցեղի մի ճյուղն էր, ամենահեղինակավոր ներկայացուցի՝ Աբդ Ալ-Մուտալիբի ընտանիքում, որի կրտսեր որդին՝ Աբդալլահը, Մուհամմադի³² հայրն էր:

Աբդալլահը Մուհամմադի ծնվելուց հետո շատ շուտ մահանում է, իսկ երբ Մուհամմադը 6 տարեկան էր, մահանում է նաև նրա

³² Համաձայն մուսուլմանական ավանդության՝ Մուհամմադ մարգարեի ամբողջական անունը, որը ներառում է նաև նրա մանուկ հասակում մահացած որդու անունը, այսպես է հնչում՝ Աբու Ալ-Կասիմ Մուհամմադ իբն Աբդալլահ իբն Աբդ Ալ-Մուտալիբ իբն Հաքիմ իբն Աբդ Մանաֆ իբն Կուսայ իբն Քիլաբ իբն Մուռռա իբն Քաաբ իբն Լուայ իբն Ղայիբ իբն Ֆիհր իբն Մալիք իբն Ալ-Նադր իբն Քինանա իբն Հուզայմա իբն Մուդրիք իբն Իյասս իբն Մուդար իբն Նիզար իբն Մադ իբն Ադնան իբն Ադադ իբն Մուքավիմ իբն Նահուր իբն Նահուր իբն Տայրահ իբն Յարուբ իբն Յաշջուբ իբն Նաբիթ իբն Իսմայիլ իբն Իբրահիմ իբն Ազար իբն Նահուր իբն Սարուդ իբն Շալիհ իբն Իրֆխաշադ իբն Սամ իբն Նուհ իբն Լամք իբն Մատտու Շալահ իբն Իդրիս իբն Յարդ իբն Մահիլ իբն Քայնան իբն Յանիշ իբն Շիս իբն Ադամ: Աբու Ալ-Կասիմ (արաբ. أبو القاسم [Abū al-Qāsim]) նշանակում է Կասիմի հայր. տղամարդկանց հարգալից այդպես են դիմում: Իբն (արաբ. ابن [ibn]) նշանակում է որդի: Կարող ենք տեսնել, որ այս ծագումնաբանությունը Մուհամմադին ուղղակիորեն կապում է Ադամի հետ:

մայրը՝ Ամինան: Մուհամմադը սկզբում մեծանում է պապի ընտանիքում, ապա հորեղբոր, որը Աբդ ալ-Մուտալիբի մահից հետո ստանձնում է առաջնորդի դերը: Հորեղբոր անունը Աբու Տալիբ էր: Նա իսլամի մեջ հսկայական դեր խաղացած մի անձնավորության՝ Ալի իբն Աբի Տալիբի հայրն էր: Մուհամմադն իր մանկության տարիներին առանձնապես բարեկեցիկ կյանքով չի ապրել, սակայն նաև զրկանքներ չի կրել: Այլ երեխաների նման նա էլ մասնակցել է իր ցեղի կյանքին. այժ արածացրել, մեծերի հանձնարարությունները կատարել, ինչպես նաև մասնակցել է քարավանային ուղևորություններին:

Այդ ժամանակաշրջանի հետ կապված են մի շարք առասպելներ, պատումներ կան, որոնք, ամենայն հավանականությամբ, ստեղծվել են արդեն Մարգարեի մահից հետո: Այդ պատմություններից է այն, որ հրեշտակները գալիս, ճեղքում են Մուհամմադի սիրտը, հանում են սրտի մեջ եղած սև լերդուկը, լվանում և մաքուր սիրտը դնում են հետ: Մեկ այլ պատմության համաձայն, երբ Մուհամմադը քարավաններից մեկի հետ գնում է հավանաբար Սիրիա, մի քրիստոնյա վանական է նստած լինում ճանապարհին և երբ որ տեսնում է կուրեյցիների այս խումբը, ասում է. «Կա՛նգ առեք, ձեզ հետ մարգարե է գալիս», - և ցույց է տալիս այդ երեխային: Այս առասպելները հետին թվով հաստատում են Մուհամմադի՝ դեռևս ծնվելուց և մանկությունից մարգարեական առաքելության համար պատրաստ լինելը, հենց դրա համար ծնված լինելը:

Մուհամմադի հորեղբայր Աբու Տալիբը հարուստ չէր, նրա վրա դրված էր Մեքքա ուխտագնացության եկողներին ջրով և սնունդով ապահովելը, ինչը մեծ ծախսերի հետ էր կապված, ուստի նա շատ արագ սնանկացավ: Իր եղբայրներն ավելի հարուստ էին, և հարուստ եղբայրներից մեկը մի քանի անգամ Աբու Տալիբի խնդրանքով նրան օգնելուց հետո խորհուրդ տվեց նրան հրաժար-

վել այդ շատ պատվավոր, բայց մեծ ծախսերի հետ կապված պարտականությունից և առաջարկեց նրան իրեն տալ այդ դերը: Աբու Տալիբը ստիպված էր համաձայնվել եղբոր առաջարկին՝ պահպանելով, սակայն, իր՝ Բանու Հաշիմ ցեղի առաջնորդի դիրքը:

Մոտավորապես 595 թ. Մուհամմադի կյանքում մի շատ կարևոր իրադարձություն է տեղի ունենում: Հորեղբոր խորհրդով նա ընդունում է Խադիջա անունով մի հարուստ այրու առաջարկը՝ վերջինիս կողմից ֆինանսավորած քարավաններից մեկը Սիրիա տանելու վերաբերյալ: Միջնադարյան հեղինակները վկայում են, որ այդ ուղևորությունից նա մեծ շահույթով է վերադառնում, ինչը, բնականաբար, Խադիջայի ուշադրությանն է արժանանում: Բացի դրանից՝ ապագա մարգարեն արդեն հայտնի էր քաղաքում իր լրջությամբ, խելքով, արժանապատվությամբ և նաև բարեստությամբ: Խադիջան երկու անգամ ամուսնացած էր եղել, կորցրել էր ամուսիններին և չորս զավակ ուներ: Չնայած դրան՝ շատ փեսացուներ ցանկանում էին նրա հետ ամուսնանալ, որովհետև Խադիջան ազդեցիկ ցեղի էր պատկանում, շատ գեղեցիկ, հարուստ և խելացի կին էր, սակայն նա բոլորին մերժում էր:

Լինելով ուժեղ բնավորության տեր կին՝ Մուհամմադին հավանելուց հետո Խադիջան առաջարկություն է անում նրան: Մարգարեն, խորհրդակցելով իր հորեղբայրներ Աբու Տալիբի և Համզայի հետ, համաձայնվում է ամուսնանալ նրա հետ: Այդ ժամանակ հարսնացուն 40 տարեկան էր, իսկ Մուհամմադը՝ 25: Այս երկու անձնավորությունների միությունը շատ հաջող էր, Մուհամմադը, ի դեմս Խադիջայի, գտավ ոչ միայն իր կնոջը և իր երեխաների մորը, այլ նաև ընկերոջը, խորհրդատուին, մի մարդու, որը հետագա բոլոր իրադարձություններում նրա կողքին էր, որն առաջինը հավատաց նրա մարգարեական առաքելությանը: Մինչև Խադիջայի

մահը Մուհամմադը այլ կին չբերեց իր տուն, ինչը վկայում է այն հարգանքի և գնահատման մասին, որ նա ուներ իր կնոջ նկատմամբ:

Մուհամմադի առաջին զավակը, ով մանուկ հասակում մահացավ, տղա էր՝ Կասիմ անունով, այդ պատճառով նրան (Մուհամմադին) անվանում են նաև Աբու Կասիմ: Դրանից հետո Խադիջայից այլևս տղա չի ունենում: Չորս աղջիկ է ունենում, որոնցից մեկը Ֆատիման է: Ֆատիման նույնպես շատ կարևոր դերակատարություն ունի իսլամի հետագա զարգացման մեջ: Նա Մուհամմադի իբրև թե սիրելի դուստրն էր. կրտսերն էր Խադիջայից ունեցած երեխաներից:

Հետագայում Ֆատիման ամուսնանում է Մուհամմադի հորեղբորորդի Ալիի հետ: Ինչպե՞ս է Ալին հայտնվում Մուհամմադ մարգարեի ընտանիքում: Ինչպես արդեն նշվել է, Աբու Տալիբը շատ ծանր նյութական վիճակում էր գտնվում, և Մուհամմադ մարգարեն և իր երկու հորեղբայրները որոշում են օգնել և իր կրտսեր զավակներին վերցնել իրենց ընտանիքներ, որպեսզի Աբու Տալիբի բեռը թեթևանա: Ալին ամենակրտսեր զավակն էր, և նրան Մուհամմադն է վերցնում: Մանուկ հասակից Ալին ապրում է Մուհամմադի և Խադիջայի տանը: Մուհամմադ մարգարեն հավանաբար երազում էր զավակ ունենալու մասին, որովհետև մինչև Ալիին իր տուն բերելը, որդեգրում է մի տղայի, որը ստրուկ էր, և որին Խադիջան իրեն էր նվիրել: Այնքան է այս տղան իրեն դուր գալիս, որ որոշում է որդեգրել: Կարելի է ասել, որ սա վկայում է արու զավակ ունենալու նրա մեծ ցանկության մասին, քանի որ այդ ժամանակաշրջանում արու զավակ չունենալը տղամարդուն նվաստացնում էր:

Հավանաբար մարգարեն բավարարված չէր իր կյանքով, հավանաբար որբ մեծանալը, եղբայր, քույր, հարազատ չունենալը, ո-

որոշակի իմաստով կախյալ վիճակում ապրելը ստիպում էին իրեն ինչ որ չափով մեկուսանալ մարդկանցից: Բացի դրանից՝ շատ հավանական է, որ իր ճամփորդություններից, տարբեր մարդկանց հետ զրույցներից նրա մտքում բազմաթիվ հարցեր էին առաջանում, որոնց պատասխանները իր իմացածն ու փորձը չէին տալիս, այդ պատասխանները չկային ո՛չ իր դավանածի, ո՛չ ճանաչածի մեջ:

Աղբյուրները վկայում են, որ Մուհամմադը իր կյանքի այդ շրջանում շատ հաճախ մեկուսանում էր, շատ հաճախ միայնակ քայլում էր, շատ հաճախ Մեքքայից հեռանում էր մոտակա Հիրա անունով քարանձավ և այդտեղ մենության մեջ ինչ-որ ժամանակ էր անցկացնում:

Մի անգամ՝ մոտ 610թ., երբ արդեն 40 տարեկան էր, կիզիչ արևից թաքնվելու համար մտնում է քարանձավ, հավանաբար ննջում է և հանկարծ ձայն է լսում ու ինչ-որ բան է տեսնում: Այն մասին, թե ինչ է տեսել, հստակ նկարագրություն կա միայն հետին թվով:

Այն, ինչ պատմում էր ինքը՝ Մարգարեն, տարբեր հաղորդողներ իրարից երբեմն զգալիորեն տարբերվող հաղիսներով են փոխանցում: Օրինակ՝ Մարգարեի կին Աիշան, որը դեռ չէր ծնվել այդ ժամանակ, մի տարբերակ է հաղորդում, իսկ Ուբայդան՝ այլ: Սակայն միջնադարյան մուսուլմանական ավանդությունը համաձայն է, որ այդ օրը Մարգարեն տեսել է մի ինչ-որ սարսափազդու և հզոր էակ, որի ձեռքին գեղեցիկ զարդարված պսպղացող մագաղաթ կար:

Վաղ իսլամի ամենախոշոր ու հեղինակավոր գործիչներից մեկը՝ Հասան ալ-Բասրին (642-728թթ.), այն հարցին, թե իրոք Մար-

գարեն Զիբրիլ³³ հրեշտակապետին է տեսել, և Զիբրիլը նրան ինչ-որ բաներ է հանձնարարել, պատասխանել է, որ Ալլահն ավելի լավ գիտի, բայց ինչ-որ լույս տեսել է: Վաղ շրջանի վկայությունը շատ կարևոր է: Մենք հասկանում ենք, որ հետագա պատմությունները շատ հստակ, շատ հետևողականորեն ներկայացնող իրադարձությունները հավանաբար ինչ-որ ձևով վերակառուցվել են կամ հետո են ստեղծվել:

Այսպես է սկսվում նոր կրոնի՝ իսլամի ստեղծման պատմությունը:

Փորձ կատարվեց ներկայացնել այն նախադրյալները, որոնք հնարավորություն ստեղծեցին իսլամի քարոզի հաղթանակի համար: Հավանաբար անհրաժեշտ է փոքր ինչ անդրադառնալ նրան, թե ինչ էր կատարվում թերակղզու շուրջը, որովհետև Արաբական թերակղզին շատ հաճախ ներկայացվում է որպես մեկուսացված տարածք, բայց իրականում այդպես չէ, այն բոլորովին մեկուսացված չէր, կապերի մեջ էր և՛ Սասանյան Իրանի հետ, և՛ Բյուզանդական կայսրության հետ, և՛ Եթովպիայի հետ: Իսկ Բյուզանդական կայսրությունը և Սասանյան Իրանը 150 տարի գրեթե անընդհատ պատերազմների մեջ էին: Սա նշանակում է, որ այն տարածքները, որոնցով նրանց բանակներն էին անցնում, ավերված վիճակում էին: Դա նշանակում է նաև, որ այս վայրերում բնակչությունը շատ սակավաթիվ էր դարձել, սնանկացել էր, և քանի որ անընդհատ պատերազմ էր, մարդիկ ստիպված էին հսկայական հարկեր վճարել:

Հավանաբար այս ամենը նախապատրաստեց նաև այն զարմանալի, յուրահատուկ, կայծակնային հաջողությունը, որին շատ փոքր, բայց շատ մարտունակ մուսուլմանական ջոկատները հա-

³³ Զիբրիլը աստվածաշանչյան Գաբրիել հրեշտակապետն է:

սան ընդամենը մի քանի տարվա ընթացքում: Նրանք կարողացան շատ արագ ջախջախել և ոչնչացնել Սասանյան Իրանը, ի վիճակի եղան պարտության մատնել բյուզանդական բանակները և իրենց հսկողության տակ վերցնել մի շարք բյուզանդական նահանգներ:

Ընդամենը 80 տարվա ընթացքում՝ 631-714թթ. (631թ. առաջին ջոկատներն են տեղաշարժվում, իսկ 714թ. Պիրենեյան լեռնաշղթան անցնում են առաջին ջոկատները, որոնք արագ հետ են շարտվում Իսպանիա), ստեղծվում է մի հսկայական խալիֆայություն. հյուսիսում արաբներն անցնում են Կովկասյան լեռնաշղթան, հարավում մտնում են Հնդկաստանի կենտրոնական նահանգներ, արևելքում հասնում են Չինաստանի հյուսիսային նահանգներ, իսկ արևմուտքում՝ Պիրենեյան լեռնաշղթային: Սա զարմանալի է, շատ դժվար է բացատրել, եթե հաշվի չառնվի այն փաստը, որ երկու խոշորագույն և ուժեղագույն կայսրությունները ուժասպառ էին եղել:

Վերը նշված ընդհանուր պատկերը շատ հակիրճ ներկայացնելուց հետո հավանաբար ավելի հեշտ կլինի պատկերացնել Մուհամմադ մարգարեի հոգեվիճակը Հիրա քարանձավում այն պահին, երբ իրեն դիմում է իր ուղեղում և հոգում հնչող և իր էությունը ամբողջովին գրավող ինչ-որ ձայն: Նա հասկանում է, որ այդ ձայնը բացառիկ է, գերհզոր և ենթարկող:

Ձայնն ասաց՝ կարդա՛:

Հիմնական գրականություն

- Большаков О. Г., История Халифата. Т.І. Ислам в Аравии. 570-633. М., 1989/ М., 2000, стр. 68-89.

- Hodgson G. S. M., The Venture of Islam, Volume 1: The Classical Age of Islam, University of Chicago Press, 1977, pp. 103-186.
- Watt W. M., Muhammad at Mecca, Oxford University Press 1953, 2004, Chapters II, III.
- Резван Е.А. Адам и бану адам в Коране (к истории понятий "первочеловек" и "человечество") // Ислам. Религия, общество, государство. Сборник статей. - М.: Наука, 1984, стр. 59-68.

Լրացուցիչ գրականություն

- ✓ Грюнебаум Г. Э. фон., Классический ислам. Очерк истории (600-1258). Пер. с англ. И. М. Дижур. "Наука", 1988, стр. 26-34.
- ✓ *Patricia Crone, Meccan Trade and the Rise of Islam, Georgias press, 2004.*
- ✓ Пигулевская Н. Византия и Иран на рубеже VI и VII веков, М.: АН СССР, 1946.

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 5.

ՄԵՔՔԱ՝ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ

Քարանձավում սարսափած և խուճապի մեջ գտնվող մարդուն, որը դեռ չգիտեր, որ ինքն ընտրվել է որպես մարգարե, հրամայվեց՝ կարդա՛ (արաբ. أَقْرَأُ [iqr'a]): Նա կարդալ չգիտեր և հրաժարվեց, ապա այդ ենթարկող հրամայական ձայնով երկրորդ անգամ նրան ասվեց՝ կարդա՛: Մուհամմադը կրկին ասաց, որ չգիտի կարդալ, սակայն ձայնը երրորդ անգամ կարգադրեց՝ կարդա՛:

Սա Ղուրանի այն սուրայի նախապատմությունն է, որն ըստ ավանդության առաջինն է համարվում: Միջնադարյան մուսուլմանական ավանդության մեջ բուռն վեճեր են եղել այն հարցի շուրջ, թե որն է Ղուրանի առաջին սուրան՝ 96-րդը՝ «Լերդարյուն» (արաբ. العلق [al-‘alaq]), թե 74-րդը՝ «Փաթաթվածը», (արաբ. المَدَّيْنَرُ [al-muddaṭṭir]): Որոշ հեղինակներ կարծիք են արտահայտել նաև այն մասին, որ Ալլահի կողմից ներշնչված առաջին հանգատողը եղել է «Բանաստեղծներ» սուրայի 215-րդ այաթը: Առաջարկվել են նաև այլ տարբերակներ, սակայն գիտնականների ճնշող մեծամասնությունն ընդունում է, որ առաջինը տրվել են «Լերդարյուն» սուրայի առաջին հինգ հանգատողերը:

Սուրաների՝ մեզ հայտնի հերթականությունն ի հայտ է եկել միայն Մուհամմադ մարգարեի մահից հետո, երբ ստեղծվել է Ղուրանի գրավոր արձանագրությունը՝ խմբագրույթը: Սուրաները դասավորվել, դասակարգվել են համաձայն նրանց ծավալների՝ նվազման կարգով (որոշ բացառություններով), տարբեր ժամանակաշրջանի պատկանող այաթներ երբեմն նույնիսկ նույն սուրայի մեջ են դրվել, բայց կարևորն, այնուամենայնիվ, այն է, թե ինչից է սկսվում.

اقْرَأْ بِاسْمِ رَبِّكَ الَّذِي خَلَقَ (۱) خَلَقَ الْإِنْسَانَ مِنْ عَلَقٍ (۲)
اقْرَأْ وَرَبُّكَ الْأَكْرَمُ (۳) الَّذِي عَلَّمَ بِالْقَلَمِ (۴) عَلَّمَ الْإِنْسَانَ مَا لَمْ يَعْلَمْ (۵)

«Կարդա՛ր քո Տիրոջ անունով, որն արարել է (1), արարել է մարդուն լերդարյունից (2),

Կարդա՛, և քո Տերն ամենաառաքածուն է (3), որը սովորեցրել է [մարդուն-Դ.Հ.] կալամով³⁴ (4),

Սովորեցրել է մարդուն այն, ինչը նա չգիտեր (5)» (Ղուրան, 96:1-5):

Արդեն նշվել է, որ այն հասարակությունը, որտեղ ապրում էր Մուհամմադ մարգարեն, հիմնվում էր ինֆորմացիայի բանավոր հաղորդման վրա, իսկ այստեղ ասվում է՝ «սովորեցրել է մարդուն կալամով»՝ գրչով: Սա շատ հետաքրքիր է և տիպիկ մարգարեական. նոր գիտելիք է տրվում, տրվում է այն, ինչ մարդիկ մինչ այդ չեն իմացել, ինչն ամենաառաքածուն Ալլահն է շնորհում: Նոր գիտելիք է տրվում, որի ծավալն ու խորությունը անհամեմատելի է մինչ այդ մարդկանց ունեցած գիտելիքի հետ, ուստի դրան տիրապետելու համար անհրաժեշտ է գիրը, այսինքն՝ ինֆորմացիայի հավաքման, մշակման, պահպանման և հաղորդման գրավոր համակարգը:

«Ալլահ» բառը Մուհամմադն այդ շրջանում դեռևս չէր օգտագործում: Նա Բարձրյալին անվանում էր հատկանիշներից որոշակիորեն զուրկ *ռաբ* (արաբ. رَبّ [rabb]) բառով, որը տեր է նշանակում:

³⁴ Կալամը եղեգից պատրաստված գրիչն է:

«Լերդարյուն» սուրայի մյուս հանգատողերը պատկանում են ավելի ուշ շրջանի, երբ Մարգարեն արդեն սկսել էր իր քարոզը Մեքքայում³⁵:

Երկրորդ սուրան, ըստ ժամանակագրության, կոչվում է «Փաթաթվածը»: Սրա նախապատմությունը հետևյալն է. Մեքքայի փողոցներից մեկում քայլելիս Մուհամմադի առջև ինչ-որ բան է հայտնվում: Որոշ նկարագրություններում նշվում է, որ դա կրակի սյան նման էր, որոշ նկարագրություններում գրված է, որ աչքերը փակել ստիպող ուժեղ լույս է եղել, իսկ հետագայում արդեն իր հաղիսների մեջ ասվում է, որ այդ լույսը Ջիբրիլն էր՝ Գաբրիել հրեշտակապետը, որը կրկին հորդորում է, որ գնա և քարոզը սկսի: Վախեցած Մարգարեն գնում է տուն, դողալով պառկում է տենդի մեջ, կինը տեսնում է, որ սարսափահար և վատ վիճակի մեջ է, վրան ծածկոց է գցում, նա փաթաթվում է, և այդ պահին նորից տրվում է «վահիին» (արաբ. وحى [waḥī])՝ աստվածային ներշնչումը, որն այսպես է հնչում.

«Ո՛վ դու փաթաթված, վե՛ր կաց և հորդորի՛ր և Տիրոջդ մեծարի՛ր և զգեստներդ մաքրի՛ր» (խոսքը ծիսական մաքրության մասին է) (Ղուրան, 74:1-4):

³⁵ Հաղիսներից մեկում բացատրվում է այս սուրայի ակնարկն այն մարդու մասին, որը գոռոզացել է և համարձակվել է աղոթքի ժամանակ խանգարել Ալլահի ստրուկին: Մի անգամ, երբ Մուհամմադը աղոթելիս խոնարհում է գլուխը, Աբու Ջահլ (Տգիտության Հայր) մականունով մի հարուստ մեքքացի կատաղած ուզում է ոտքով տրորել Մարգարեի վիզը, սակայն սարսափած հետ է քաշվում: Երբ նրան հարցնում են, թե ինչ պատահեց, պատասխանում է. «Առջևս հայտնվեց մի հոր, որից բոց էր երևում և ինչ-որ թևեր»: Մարգարեն ասում էր, որ եթե նա մի քիչ էլ մոտենար, հրեշտակները նրան կքրքրեին (Սահիհ Ալ-Բուխարի, 4958):

Այս սուրայի առաջին հանգատողերը արդեն տիպիկ առաքելական բնույթ ունեն: Ալլահը հորդորում է իր կողմից ընտրված մարգարեին, որ անի այն, ինչի համար նրան տրվել է գիտելիք (արաբ. علم [‘ilm]): Տերն ուղարկում է Մուհամմադին՝ որպես առաքյալ՝ մարդկանց մոտ, որոնց նա պետք է հայտնի ամենակարևորը՝ Ալլահը միակ աստվածն է, այլ աստված չկա:

Այս աներկբա հրամանից հետո Մուհամմադը սկսում է քարոզել: Սկզբնական շրջանում քարոզում է իր ընտանիքում. հավատարիմ Խադիջան դառնում է առաջին հավատացյալը, երկրորդը, հավանաբար, իր որդեգրած նախկին ստրուկ Ջեյդն է լինում: Ավանդությունն ասում է, որ երրորդը Ալին էր, չնայած որ նա այդ ժամանակ 9-10 տարեկան էր: Այստեղից գալիս է շիաների այն պնդումը, որ Ալին առաջին իսկական մուսուլմանն է, որն իր նախկին կյանքում հեթանոս չի եղել և միանգամից մուսուլման է դարձել, ինչը շատ կարևոր նշանակություն ունեցավ իմամական ուսմունքի ձևավորման ժամանակ, քանի որ գնահատվում էր որպես Ալլահի կողմից Ալիին մյուս հավատացյալների զանգվածից առանձնացնելու, նրա հատուկ որակներով օժտված լինելու նշան: Ավելի ուշ մուսուլման են դառնում Մարգարեի երկու ընկերները, որոնք շատ ազդեցիկ մարդիկ էին՝ Աբու Բաքրը³⁶ և Աուֆը: Այս մարդկանց հավատացյալ դառնալը նույնպես շատ կարևոր էր, որովհետև երկուսն էլ պատկանում էին Մեքքայի հայտնի ցեղերին և լավ համբավ ունեին քաղաքում: Բացի դրանից Աբու Բաքրը նաև բավականին հարուստ մարդ էր և բնութագրվում էր որպես խելացի և հավասարակշռված անձնավորություն: Ընտանիքի շրջանակներից դուրս գալուց և Աբու Բաքրի և Աուֆի իսլամ ընդունելուց հետո հավատացյալների շրջանակը աստիճանաբար հա-

³⁶ Սուննի գիտնականների մեծամասնության կարծիքով, իսլամ ընդունած երրորդ մարդն Աբու Բաքրն է:

մալրվում է Մարգարեի քարոզի նկատմամբ հավատ արտահայտած նոր մարդկանցով: Մուսուլմանական պատմագրությունը նշում է, որ առաջին հերթին ճնշվածները և թույլերն են ականջալուր լինում Մուհամմադի քարոզին և դառնում այդ փոքրիկ համայնքի անդամներ:

Սկզբնական շրջանում մեքքացիները Մուհամմադի քարոզին կարևորություն չեն տալիս: Ինչպես արդեն նշվել է, մեքքացիները քարավանային առևտրի, Քաաբայի աճող կրոնական նշանակության, բազմամարդ և աշխույժ շուկայի շնորհիվ բավականին բարեկեցիկ և ապահով կյանքով էին ապրում: Նրանք շարունակում էին զոհաբերություններ անել իրենց հին աստվածներին և շնորհակալ էին նրանց բոլոր շնորհների համար: Բնական է, որ նրանց ճնշող մեծամասնությունը որևէ փոփոխությունների կարիք չէր զգում: Մեքքացիների մեջ էլ, այնուամենայնիվ, կային այնպիսի անձնավորություններ, որոնք, վերլուծելով և գնահատելով տարբեր ճանապարհներով Հիջազ թափանցող տեղեկությունները, հասկանում էին, որ փոփոխությունների անհրաժեշտություն կա: Քարավանային առևտրի, Սասանյան Իրանի, Բյուզանդական կայսրության, Եթովպիայի հետ ավելի հաճախակի դարձած շփումների շնորհիվ կուտակվող ինֆորմացիան աստիճանաբար ազդում էր աշխարհի մասին պատկերացումների վրա: Այնուամենայնիվ, ավանդական հասարակության չափազանց զգուշավոր վերաբերմունքը բոլոր տեսակի նորությունների և նորարարությունների վերաբերյալ ստիպում էր մեքքացիների մեծամասնությանը կառչած մնալ իրենց աստվածներից, սովորություններից և դրդում էր նրանց անվստահությամբ և հեգնանքով վերաբերվել այն անհասկանալի բաներին, որոնք ասում էր Բանու Հաշիմի անդամներից մեկը:

Մեքքացիների մեծ մասը, բնականաբար, չէր գիտակցում, որ կյանքը փոխվել է. Հիջազից դուրս գտնվող ժողովուրդների և ցեղերի, տարբեր մշակութային հիմքերի վրա ձևավորված երկրների, քաղաքների, տարբեր լեզուներով խոսող և այլ աստվածներ պաշտող մարդկանց հետ ավելի պարբերական և հաճախակի դարձած շփումները անվերադարձ ընդլայնել էին աֆսակի սահմանները:

Նոր տեղեկությունները, արտաքին աշխարհի մասին նոր գիտելիքները սկզբունքային փոփոխության էին ենթարկել աշխարհի մասին պատկերացումները: Այս ամենը մեծացնում էր աշխարհը, ընդլայնում տարածությունը, խորացնում պատմությունը, ուստի ժամանակի կատեգորիան նույնպես հիմքային ձևափոխման էր ենթարկվում:

Այդ նոր գիտելիքից բխող աշխարհընկալման դրսևորումներին համապատասխան գիտակցված ձևակերպումներ և բացատրություններ էին անհրաժեշտ: Պետք է ստեղծվեր նոր կրոնադիցաբանական համակարգ: Պատահական չէ, որ նույն ժամանակահատվածում Արաբական թերակղզու տարբեր մասերում այլ մարգարեներ են ի հայտ գալիս, որոնց հետագայում կեղծ մարգարեներ են անվանում, քանի որ վերջիններս հաջողության չեն հասել և միայն լոկալ հաջողություն են ունեցել:

Կարևորն այն է, որ մեքքացիները չէին զգում, չէին հասկանում և պատկերացնում, թե ինչ կարող է կատարվել, և ինչ հետևանքների է հանգեցնելու կատարվածը: Այդ պատճառով է Մարգարեի քարոզը մեծամասնության կողմից անտարբերությամբ անտեսվում, իսկ փոքրամասնությունը կա՛մ ընդգրկվում է նոր ձևավորվող համայնքի մեջ, կա՛մ ընդգծված ժխտական վերաբերմունք ցուցաբերում:

Հավատացյալների շրջանակը աստիճանաբար ընդլայնվում է, նրանց քանակը այնքան է աճում, որ արդեն չեն տեղավորվում Մուհամմադի տանը և տեղափոխվում են Մուհամմադի համայնքի նոր անդամներից մեկի՝ Աքրամի տուն: Այդ ժամանակ կար մոտ 45-50 հավատացյալ, որոնց թվում նաև հեղինակավոր անձինք, օրինակ՝ երկրորդ խալիֆ Օմարը, Օմայյան ճյուղի ներկայացուցիչ Օսմանը, որը հետագայում դառնում է երրորդ խալիֆ, ինչպես նաև Աբու Բաքրը, որը, ինչպես արդեն նշվել է, երրորդ կամ չորրորդ հավատացյալն էր: Այս մարդիկ բավականին ազդեցիկ մարդիկ էին:

Մի օր Մուհամմադ մարգարեն կրկին քարոզելու հորդոր է ստանում և մեքքացիներին կանչում է Քաաբայի մոտ և ասում, որ Ալլահը միակն է և որ պետք է հավատալ նրան: Մուհամմադի հորեղբայրը, որը հետագայում շատ դաժան անուն է ստանում՝ Աբու Լահաբ՝ բոցի հայր, այսինքն՝ դժոխքի ամենասարսափելի կրակի մեջ գտնվելուն դատապարտված, անլուրջ է ընդունում նրա քարոզը, հարցնում, թե արդյոք այդ դատարկաբանության համար էր իրենց հավաքել և հայիոյելով հեռանում է (Ալ-Բուխարի 4770): Աբու Լահաբը, որը միաժամանակ և՛ Մարգարեի հորեղբայրն էր, և՛ նրա երկու դուստրերի սկեսրայրը, դառնում է Մարգարեի ամենահետևողական հետապնդողը:

Սակայն հավատացյալների համայնքը Մեքքայում դարձել էր արդեն նկատելի և շարունակում էր ուժեղանալ: Երևելի ընտանիքներից երիտասարդ տղաներ իսլամ էին ընդունում, անդամագրվում էին այս համայնքին, մասնակցում աղոթքներին, դրանց միջոցով նոր և կարևոր գաղափարներ էին ստանում: Դրա դեմ պայքարում էին, ընտանիքները փորձում էին արգելել նրանց մասնակցությունը համայնքի հավաքներին: Արձանագրվել են դեպքեր, երբ հարազատները մուսուլմաններից մեկ-երկուսին փակել են,

կողպել՝ թույլ չտալով աղոթելու գնալ: Հայտնի է նաև, որ մի քանի ստրուկների (ինչպես պատմագրության մեջ նշվում է՝ թույլերի) ուղղակի արգելվել է գնալ համայնքի հավաքներին, հակառակ դեպքում նրանք խիստ պատժվել են:

Մուհամմադի քարոզների ակտիվացմանը զուգահեռ լուրջ հակամարտություն է սկսվում, որն ի վերջո նույնիսկ հանգեցնում է բանու Հաշիմ՝ Հաշիմյանների ցեղին բոյկոտ հայտարարելուն: Քանի դեռ Աբու Տալիբը հովանավորում էր Մուհամմադին, նրան ձեռք չէին տալիս, որովհետև իրենց ցեղն ազդեցիկ էր, իսկ Աբու Տալիբը հարգված մարդ էր: Այս բոյկոտը երկար է տևում, ամուսնություններն այլ ցեղերի ներկայացուցիչների հետ արգելված էին այդ ժամանակաշրջանում, ապրանք վաճառելը կամ գնելը նույնպես չէր թույլատրվում, բայց բանու Հաշիմը իր դաշնակիցների հետ դիմանում էր այդ ամենին: Հաշիմիների դաշնակիցները, թողնելով իրենց տները, տեղափոխվում են այն թաղամաս, որտեղ նրանք էին բնակվում և այդպես միասին դիմադրում բոյկոտին: Ի վերջո, միջնորդները քաղաքում ստեղծված իրավիճակը հարթելու համար հաշտեցնում են նրանց, իսկ Աբու Տալիբը խնդրում է Մուհամմադին, որ իրեն ավելի զուսպ պահի:

619թ. Մուհամմադը երկու լուրջ կորուստ է ունենում: Մահանում են նրա կինը՝ Խադիջան, և Աբու Տալիբը, որի արդյունքում նա ընկնում է ծայրահեղ ծանր վիճակի մեջ: Հետապնդումները գնալով ավելի են ուժեղանում, և ի վերջո ամենավտանգվածների համար կազմակերպվում է տեղափոխություն դեպի Եթովպիա, որից հետո նրանք անցնում են Նեգուսի հովանու տակ: Համայնքի հզորացման և ազդեցության աճին համընթաց աճում էին նաև ճնշումները, և 622թ. Մուհամմադը որոշում է բոլոր հավատացյալների հետ միասին տեղափոխվել՝ *հիջրա* (արաբ. هجرة[hijra]) կատարել դեպի Յասրիբի օազիս: Մինչ այդ իրադարձությունները

անհրաժեշտ է երկու կարևոր կետ առանձնացնել: Դրանցից առաջինն այն է, թե ինչ էր քարոզում Մուհամմադը այդ ժամանակաշրջանում:

Ինչպես արդեն նշվել է, իր քարոզի սկզբնական շրջանում Մուհամմադն օգտագործում էր չեզոք «ոաբ»՝ տեր բառը, որը միաստվածական համակարգերից տարբերվող հատկանիշներ չուներ: Մուսուլմանները հավատում էին, որ Աստված Մարգարեի միջոցով մարդկանց հայտնել է, որ ինքը՝ ոաբն է ամեն ինչ արարել, որ Ահեղ դատաստան է լինելու, որ պետք է վախենալ, ձգտել մաքրվել և քավել մեղքերը: Աստված Մուհամմադի միջոցով հայտնում էր նաև, որ բարեգործությունը, մարդկանց լավ վերաբերվելը, գթությունն են այն ճանապարհները, որոնք տանում են դեպի աստվածային արքայություն: Աստվածային արքայությանը տանող կարևոր նախապայմանը նախ և առաջ հավատն էր: Թերևս սրանով էլ սահմանափակվում էին Մուհամմադի առաջին քարոզները:

Անհրաժեշտ է հիշել, որ քրիստոնեական և հուդայական տարբեր սյուժեներ ոչ միայն Մարգարեին, այլ նաև մեքքացիների որոշ մասին արդեն հայտնի էին, որովհետև տարածաշրջանում ապրում էին և՛ քրիստոնյաներ, և՛ հուդայականներ: Այդ ամբողջ համակարգից իր տեսանկյունից շատ հետաքրքիր ֆրագմենտներ կային, որոնք Մուհամմադին փոխանցվել էին բանավոր ձևով: Իսլամագետները այս հարցի շուրջ երկու կարծիք ունեն. ա) նա աստվածաշնչյան գաղափարների, մարգարեների, սյուժեների մասին տեղեկությունները ստացել է հենց քրիստոնյաներից, բ) դա ընդհանուր սեմական մի շերտ է, որը բոլոր սեմական մշակույթներում էլ կար և բանավոր ձևով պահպանվում էր:

Մյուս կարևոր խնդիրն այն է, թե ինչպես և ինչ գործոնների և իրադարձությունների ազդեցության տակ է փոփոխվում քարոզի բովանդակությունը և ոճը: Այս հարցերի պարզաբանման համար

անհրաժեշտ էր ճշտել, թե երբ է այս կամ այն սուրան կամ այաթն արտասանվել:

Այս հարցերին բազմաթիվ աշխատություններ են նվիրել միջ-նադարում արաբական և մուսուլմանական մեծանուն գիտնականներ՝ կատարելով շատ կարևոր հետազոտական աշխատանք:

Արևմտյան գիտնականների կողմից Ղուրանի տեքստի գիտական վերլուծությունը սկսվում է 19-րդ դարում: Առաջինը Ղուրանի սուրաների ժամանակագրական հերթականությունը տվել է գերմանացի գիտնական Նյոլդեկեն (մահ. 1930թ.), նրա աշակերտ Շվեյլեն (մահ. 1919թ.), որը համալրել և հրատարակել է նրա գիրքը: Այս լուրջ ակադեմիական հիմքի վրա կատարված հետազոտությունը մինչ օրս չի կորցրել իր կարևոր նշանակությունը:

Ավելի ուշ Ղուրանի տեքստի գիտական վերլուծությամբ են զբաղվել այլ գիտնականներ, որոնցից ամենախոշորներից է ֆրանսիացի իսլամագետ Ռեժի Բլաշերը (մահ. 1973թ.), որը Ղուրանը թարգմանել է ֆրանսերեն: Նրա թարգմանությունը բաղկացած է երկու հատորից, որոնցից առաջինը ներածությունն է և ամբողջովին Ղուրանի այաթների վերլուծությունը:

Այդ գիտնականների թվում է նաև խորհրդային գիտնական, ակադեմիկոս Ի. Յու. Կրաչկովսկին (մահ. 1951թ.), որը Ղուրանը ռուսերեն է թարգմանել, որը, սակայն, կիսատ է մնացել: Այս գիտնականներն, ի տարբերություն մուսուլմանական ավանդության, Ղուրանը բաժանում էին ոչ թե երկու՝ մեքքայական և մադինայական շրջանների, այլ չորս շրջանի՝ երեք մեքքայական և մեկ մադինայական: Այս տեսության համաձայն՝ Ղուրանի 114 սուրաներից 90-ը Մեքքայում է քարոզվել, 24-ը՝ Մադինայում:

Ներկայում այդ կարծիքի հետ համաձայնվելով, բայց այնուամենայնիվ ինչ-որ նոր խմբավորումներ և վերլուծություններ անելով՝ ձևավորվել են մի շարք մոտեցումներ: Հարկավոր է նշել, որ

գրքի կարևորությունը այնքան մեծ է, որ այդ վերլուծությունները, ուսումնասիրությունները, նոր մոտեցումներ, նոր իմաստներ, նոր գաղափարներ գտնելը, ստեղծելը մշտապես գոյություն ունեն և ուղղորդում են Ղուրանը:

Հիմնական գրականություն

- Большаков О. Г., История Халифата. Т.І. Ислам в Аравии. 570-633. М., 1989/ М., 2000, стр. 68-95.
- Ходжсон М. Дж. С. История ислама: Исламская цивилизация от рождения до наших дней, Москва, 2013, 128-147.
- William Montgomery Watt, Muhammad at Mecca, Oxford University Press 1953, 2004 գլուխ II, III.
- Резван Е.А. Адам и бану адам в Коране (к истории понятий "первочеловек" и "человечество") // Ислам. Религия, общество, государство. Сборник статей. - М.: Наука, 1984, стр. 59-68.

Լրացուցիչ գրականություն

- ✓ Грюнебаум Г. Э. фон., Классический ислам. Очерк истории (600-1258). Пер. с англ. И. М. Дижур. "Наука", 1988, стр. 26-34.

ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ 6.

ՄԵՔՔԱ՝ ՔԱՐՈՉԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

Մուսուլմանական միջնադարյան ավանդության՝ Մեքքայում տրված սուրաների առանձնահատկությունների համաձայն մեքքայական են համարվում.

ա) բոլոր առանձին հարՖերով սկսվող սուրաները, բացի «Կովը» (արաբ. البقرة [al-bakarah]) և «Իմրանի տոհմը» (արաբ. آل عمران [āl-`imrān]) սուրաներից,

բ) ծնկաչոք խոնարհման հրահանգ պարունակող սուրաները,

գ) «Բայց ոչ» (արաբ. كَلَّا [kallā]) արտահայտությունը պարունակող սուրաները,

դ) մարգարեների և հին համայնքների մասին սյուժեներ պարունակող սուրաները, բացի «Կովը» սուրայից,

ե) Ադամի և Իբլիսի (սատանայի) մասին պատմող սուրաները, բացի «Կովը» սուրայից,

զ) գրեթե բոլոր սուրաները, որոնց մեջ կա «Ո՛վ դուք, մարդիկ» (يَا أَيُّهَا النَّاسُ) և միաժամանակ բացակայում է «Ո՛վ դուք, որ հավատացել եք» (يَا أَيُّهَا الَّذِينَ آمَنُوا):

Արդեն նշվել է, որ 19-րդ դարից սկսած արևմտյան գիտնականները մեզ հասած 114 սուրաներից բաղկացած Ղուրանի դասական համարվող խմբագրույթը բաժանել են չորս շրջանների: Քարոզի առաջին փուլը Նյուդելեից³⁷ սկսած անվանում են բա-

³⁷ Հետագայում արևմտյան ղուրանագիտությունը բազմիցս անդրադարձել է Թ.Նյուդելեի դասակարգմանը՝ հիմնականում ընդունելով այն: Մի շարք հետազոտողներ, օրինակ՝ Վ. Մոնթգոմերի Վոթթը, Ռ. Բլաշերը, ընդունելով այն, գտնում էին, որ Նյուդելեի դասակարգումը հաշվի չի առնում այն փաստը, որ մի սուրայի մեջ տեղ են գտել տարբեր ժամանակահատվածների պատկանող այբաթեր: Ռ. Բլաշերն առանձնացնում էր այդ այբաթերը և առանձին տեղադրում դրանք Ղուրանի համապատասխան մասում:

նաստեղծական: Այս սուրաներում և՛ հանգ կա, և՛ դիթամ: Սուրաները որպես կանոն կարճ են և հիմնականում մի քանի գաղափարների վերաբերյալ են, հիմնականում վախճանաբանական էություն ունեցող:

Բանաստեղծական շրջանի սուրաները այն մասին են, որ կա նախախնամություն և հատուցում, դրախտ և դժոխք: Առաջ է քաշվում թաուհիդի գաղափարը, այսինքն՝ Տերը մեկն է, ուրիշ աստվածություն գոյություն չունի: Պետք է հավատալ, պաշտել և երկրպագել Տիրոջը, տերն ամենակարող է, նա է արարել ամեն ինչ: Հողեղեն կյանքն ու պատմությունը ավարտվելու են Ահեղ դատաստանով: Ալլահը Ահեղ դատաստանի օրը կենդանացնելու է բոլոր ապրածներին, և նրանք ներկայանալու են այդ վերջին դատին: Յուրաքանչյուր ոք պետք է պատրաստ լինի դրան, քանի որ կա հավիտենություն, հողեղեն կյանքով ամեն ինչ չի վերջանում, և Ահեղ դատաստանով որոշվելու է, թե ով ուր է գնալու: Սրանք շատ կարևոր գաղափարներ էին նոր ձևավորվող աշխարհայեցողության համար, բայց և շատ հեռու էին պրագմատիկ մեքքացիների պատկերացումներից և աշխարհընկալումից, և դա էր պատճառը, որ շատերի կողմից Մուհամմադի ասածները որպես անհեթեթություն էին ընկալվում: Նրանք ունեին իրենց Քաաբան և իրենց կուռքերը: Կային Աստծո երեք դուստրեր՝ Ուզգան, Լաթը և Մանաթը, որոնք, ինչպես հունական դիցաբանության աստվածները, ղեկավարում էին տարբեր ոլորտներ, կային տարբեր փոքր շեյթաններ, ջիններ, ղուլեր, որոնք իրենց գործն էին անում: Այսպիսով, ամեն ինչ համակարգված էր. մեքքացիները գիտեին, թե ում և երբ պետք է զոհ մատուցել, երբ և ինչ տոներ նշել, ինչ աղոթքներ կատարել: Անհրաժեշտ է նշել, որ քարոզի առաջին փուլում Մուհամմադը շարունակում էր Քաաբա գնալ և մեքքացիներին զուգահեռ կատարել այդ բոլոր ծիսակատարությունները:

Այս շրջանի սուրաները իրենց ծավալով մեծ չեն: Այն անվանվել է բանաստեղծական, քանի որ հանգատողերը հագեցած են փոխաբերություններով, այլաբանություններով, համեմատություններով, փոխանունություններով: Շատ են տարբեր տիպի երգումները, ինչը մի շարք հետազոտողների տեսանկյունից նախաիսլամական քահինական ոճի ազդեցության հետևանք է:

Օրինակ՝ Ղուրանի 52-րդ սուրայում.

وَالطُّورِ (1) وَكِتَابٍ مَسْطُورٍ (2) فِي رَقٍّ مَّنشُورٍ (3) وَالنَّبِيَّتِ الْمَعْمُورِ (4)
وَالسَّقْفِ الْمَرْفُوعِ (5) وَالْبَحْرِ الْمَسْجُورِ (6)

*Եվ լեռով(1), Եվ տողազծված գրքով(2),
Մագաղաթին գրված(3),
Եվ բնակեցված տնով(4),
Եվ բարձրացած տանիքով(5)
Եվ բոցաշունչ ծովով (6)³⁸:*

Ալլահը Ղուրանում երգվում է կամ գուցե վկայակոչում է լուսինը, աստղերը, կիսալուսինը և այլ իր արարած աշխարհի, տիեզերքի բնության հրաշալի երևույթները:

Հանգատողերը հագեցած են վառ պատկերներով, որոնք, վստահաբար, ազդում էին մարգարեին ծանոթ լսարանի վրա: Անշուշտ, քահինական ոճի ազդեցությունը առկա է, սակայն իմաստը բոլորովին տարբեր է, եթե չմոռանանք, որ Ղուրանը Ալլահի խոսքն է: Ալլահը, կարծես, ասում է. «Տեսեք, թե ինչեր եմ արարել: Ուստի քանի որ դուք ևս իմ արարածներն եք, հնազանդվեք ինձ և ծնկի եկեք իմ առջև»:

³⁸ Տե՛ս նաև 51, 53 և այլ սուրաներ:

Շատ ազդեցիկ են նաև դրախտի, դժոխքի, Ահեղ դատաստանի նկարագրությունները:

Մեքքայական շրջանի երկրորդ փուլը կոչվում է ռահմանակյան: Արաբիայի կենտրոնական և հարավային մասերում այդ ժամանակաշրջանում պանթեոնի հիերարխիայի ամենավերին մասը զբաղեցնում էր «Ռահման»՝ (գթասիրտ, գթացող կամ բարեգութ) անունով մի աստված և իբրև թե Աբու Տալիբը, որին Մեքքայի երևելիները խնդրել էին սաստել իր զարմիկին, երբ Մուհամմադի հետ խոսում է, հորդորում է զգույշ լինել, որպեսզի իրենք Մեքքայում խնդիրներ չունենան: Մուհամմադը որոշում է ինչ-որ կոմպրոմիսային տարբերակ գտնել և իր «Ռաբը»՝ «Տերը», դառնում է «Ռահման», ուստի այս շրջանում արտասանված սուրաներում Մարգարեն «Ռահման» է անվանում Ալլահին: Թ. Նյուլդեկեի դասակարգմամբ այս ժամանակաշրջանին պատկանող սուրաները նրանք են, որտեղ Տերը անվանվում է *Ալ-Ռահման* (արաբ. الرحمان [al-rahmān]):

Համաձայն որոշ միջնադարյան հեղինակների³⁹ Մուհամմադը մի այսօր է ասում, որի համաձայն մեքքացիներին լավ հայտնի և նրանց պանթեոնի մաս կազմող Աստծո դուստրերն (Ալ-Ուզզան, Ալ-Լաթը և Ալ-Մանաթը) իրենք են Ալլահի առջև կանգնողները⁴⁰, որպեսզի Ահեղ դատաստանի ժամանակ բարեխոսեն մահկանացուների համար: Որոշ ժամանակ հետո, սակայն, Մարգարեն հայտարարում է, որ դա շեյթանն էր իրեն թելադրել և ոչ թե Ալլահը: Հավանաբար այս հանգատողից հրաժարվելու իրական պատճառն այն էր, որ չնայած մեքքացիների հետ համաձայնության

³⁹ Շատ նշանավոր հեղինակներ Իբն Իսհակը, Իբն Սա'դը, Ալ-Տաբարին այս այսպիսի սատանայական են անվանել:

⁴⁰ Մուսուլման գիտնականների մեծ մասը կեղծ են համարում այս մասին հարկը:

գալու, ինչ-որ միջին ճանապարհ գտնելու իր բոլոր ջանքերին՝ նրան դա չի հաջողվում: Դա հավանաբար կապված է նաև մուսուլմանների և մյուս մեքքացիների միջև տեղի ունեցած բախումների հետ: Մուհամմադի թշնամիներն իր ազգականներից մեկին, ամենայն հավանականությամբ, նաև հորեղբորը՝ Աբու Լահաբին, որի զավակները ամուսնացած էին Մարգարեի երկու դստրերի հետ, համոզում են, որ նա իր եղբորորդու հարցում վերջնականապես կողմնորոշվելու համար հարցնի Մուհամմադին, թե արդյոք Աբդ Ալ-Մուտտալիբը կրակի մեջ է: Մուհամմադն արտասվում և պատասխանում է՝ «Աստված վկա՝ կրակի մեջ է»: Լսելով, որ Մարգարեի կարծիքով իր պապը՝ բոլորի կողմից հարգանք վայելող պատվավոր անձնավորությունը դժոխքում է հայտնվելու, Աբու Լահաբը բարկանում և հարվածում է Մուհամմադին, և այսպես ավարտվում է ռահմանական շրջանը:

Ոճական առումով, ինչպես նաև գաղափարների և թեմաների ընդգրկման տեսակետից ռահմանական շրջանը շատ չի տարբերվում բանաստեղծականից: Այն պարունակում է մի շարք կարևոր սուրաներ, որոնցից է 36-րդ «Յա-Սին» սուրան, որը Մարգարեն բնութագրել է որպես «Դուրանի սիրտ»: Այս սուրան առաջիններից է, որտեղ առակի ձևով պատմվում է Մուհամմադին նախորդած Աստծո առաքյալների մասին: Ստորև մեջբերված են սուրայի միայն առաջին հանգատողերը, որոնք պատկերացում են տալիս այս շրջանի ոճական առանձնահատկությունների մասին:

يس (١) وَالْقُرْآنَ الْحَكِيمَ (٢) إِنَّكَ لَمِنَ الْمُرْسَلِينَ (٣) عَلَىٰ صِرَاطٍ مُسْتَقِيمٍ (٤) نَنْزِيلَ الْعَزِيزِ الرَّحِيمِ. (٥) لِنُنذِرَ قَوْمًا مَّا أُنذِرَ آبَاؤُهُمْ فَهُمْ غَافِلُونَ (٦) لَقَدْ حَقَّ الْقَوْلُ عَلَىٰ أَكْثَرِهِمْ فَهُمْ لَا يُؤْمِنُونَ (٧) إِنَّا جَعَلْنَا فِي أَعْنَاقِهِمْ أَغْلَالًا فَهِيَ إِلَى الْأَذْقَانِ فَهُمْ مُقْمَحُونَ (٨) وَجَعَلْنَا مِنْ بَيْنِ أَيْدِيهِمْ سَدًّا وَمِنْ خَلْفِهِمْ سَدًّا

فَأَعْتَبْنَا لَهُمْ فَهُمْ لَا يُبْصِرُونَ (٩) وَسَوَاءٌ عَلَيْهِمْ أَلَّذَرْتَهُمْ أَمْ لَمْ تُنذِرْهُمْ لَا يُؤْمِنُونَ (١٠) إِنَّمَا تُنذِرُ مَنِ اتَّبَعَ الذِّكْرَ وَخَشِيَ الرَّحْمَنَ الْعَلِيمَ فَبَشِّرْهُ بِمَغْفِرَةٍ وَأَجْرٍ كَرِيمٍ (١١) إِنَّا نَحْنُ نُحْيِي الْمَوْتَى وَنَكْتُبُ مَا قَدَّمُوا وَآثَارَهُمْ وَكُلُّ شَيْءٍ أَحْصَيْنَاهُ فِي إِمَامٍ مُّبِينٍ (١٢)

Յա Սին(1). Եվ Ղուրանով իմաստուն(2), Իրոք որ դու առաքյալ ես (3), Ուղիղ ճանապարհին (4). Իջեցվածն (հայտնություն-Դ.Հ.) է իմաստունի սիրելի (5): Որ հորդորի մարդկանց, որոնց հայրերին չեն հորդորել, սակայն նրանք անհոգ էին (6). Ճշմարտացել է խոսքը նրանց մեծամասնության մասին, բայց նրանք չեն հավատում (7). Վզներին շղթա ենք արել մինչև կզակները և ստիպված են ձգվել (8). Նրանց առջևից արգելք ենք արել և հետևից՝ արգելք, և փակել նրանց, և չեն տեսնում (9). Եվ միևնույն է նրանց համար, հորդորում ես դու իրենց թե չես հորդորում իրենց, նրանք չեն հավատում (10). Իրոք դու հորդորում ես, ով հետևում է հիշեցմանը և թաքուստի մեջ առ-Ռահմանից երկյուղում: Ապա դե ուրախացրու նրան ներումով և ազնիվ պարգևով: (11). Չէ՞ որ մենք կենդանացնում ենք մահացածներին և գրանցում՝ ինչ են նրանք պատրաստել առաջ, և նրանց հետքերը և ամեն մի բան (12):

Այս յուրատեսակ «ներածականին» հետևում է առական այն մասին, թե ինչպես մի ավան եկան Ալ-Ռահմանի ուղարկած երկուսը, որ ավետեն, բայց ավանի բնակիչները ասացին, որ նրանք սուտասան են: Նա երրորդին էլ ավելացրեց, որ ավետեն, սակայն նորից չհավատացին և սպառնացին առաքյալներին: Սակայն բնակիչներից մեկը հավատաց և հայտարարեց այս մասին: Շնոր-

հիվ այս հավատացյալի՝ ավանի բնակիչները չստացան իրենց պատիժը:

Առակին հաջորդող այաթները շատ նման են բանաստեղծական շրջանի հանգատողերին թե՛ իրենց ոճով և թե՛ հայտնություններով:

Երրորդ շրջանը, որի նախանշաններն արդեն նախորդ հանգատողերում հայտնվել էին, կոչվում է մարգարեական: Մուհամմադն արդեն չափազանց նպատակամղված կառուցում է նոր կրոնը՝ իսլամը: Նա պնդում է, որ կա մարգարեություն, որի համար Աստված տարբեր ժամանակներ տարբեր ժողովուրդներին ավետիչներ է ուղարկել, և ինքն է իր ժողովրդին ուղարկված մարգարեն: Ի պատասխան իր մոտ եկող և ի նշան իր՝ մարգարե լինելու իրենից հրաշք պահանջողների՝ Մուհամմադը նշում էր, որ իսկական մարգարեն նա չէ, ով հրաշք է գործում: Այդ դեպքերում նա ասում էր, որ ինքը մյուսների նման սովորական մարդ է, և հրաշք է այն, ինչ ինքը ասում է նրանց, որովհետև դա Ալլահի խոսքն է, այն հանգատողերը՝ այաթները, որոնք ինքը փոխանցում է, սուրբ նշաններ են և միակ վկայությունն են իր մարգարեության: Թող մարդիկ իրենից ավել ոչինչ չսպասեն: Այս սուրբ նշանները՝ Ալլահի խոսքը փոխանցելն է իր առաքելությունը:

Սա շատ կարևոր և սկզբունքային դրույթ է: Հետագայում ումման բախվում է դրա հետևանքների հետ: Դրանցից մեկն էլ այն էր, որ Մուհամմադն արգելել էր գրի առնել իր խոսքերը, քանի որ ինքը մյուսների նման սովորական մարդ էր և կարող էր սխալվել: Սա էր պատճառը, որ հաղիսները նրա մահից հետո դեռ երկար ժամանակ գրի չէին առնվում, և միայն 8-րդ դարի սկզբին է որոշվում դրանք հավաքել, գրանցել, դասակարգել և կիրառել որպես հիմք և աղբյուր: Իհարկե դրանով խախտվում էր արգելքը, սա-

կայն հաղիսների հիման վրա սուննայի ձևավորումը ումմային անհրաժեշտ էր պրակտիկ նպատակներով:

Մինչև Օմար 2-րդ խալիֆի կողմից պաշտոնական թույլտվությունը, հաղիսների հավաքագրումը և գրանցումը, առանց ինչի անհնար էր դրանց դասակարգումը և ուսումնասիրությունը, կանոնավոր հիմքի վրա չդրվեց:

Ղուրանի երրորդ՝ մարգարեական շրջանը հետաքրքիր է նրանով, որ Մուհամմադ մարգարեն փաստորեն, ի տարբերություն իր քարոզի նախորդող շրջանի, ոչ միայն ավետում է մեկ Աստծո գոյությունը և հորդորում հնազանդվել և հավատալ նրան, այլև անցնում սպառնալիքների՝ պատմելով Աստվածաշնչի և հին արաբական ավանդության պատումների սյուժեները իրեն նախորդած մարգարեների խոսքը չլսելու համար պատիժ կրած ժողովուրդների և ցեղերի մասին:

Ալլահն իր խոսքը հայտնում է միայն մարգարեների և առաքյալների միջոցով: Նա նրանց ուղարկում է, որպեսզի փրկվելու հնարավորություն տա նրանց, ովքեր կլսեն և կհասկանան իրենց ուղղված խոսքը: Փրկվելու են միայն առաքինիները, այսինքն՝ նրանք, ովքեր կապրեն համապատասխան այն կանոնների, որոնց մասին հայտնում են Աստծո կողմից ուղարկված մարգարեները:

Մուհամմադը պատմում է Ալլահի կողմից մարդկանց մոտ ուղարկված տարբեր մարգարեների՝ Մուսայի, Իբրահիմի, Յուսուֆի և ուրիշների մասին: Պատմում է Իսա իբն Մարիամի՝ Հիսուսի մասին, որը մեծ մարգարեների թվին է պատկանում, բայց իրենց համար Աստված չի, որովհետև Աստվածը միակն է: Այս մարգարեները նույնպես ուղարկվել են Ալլահի կողմից, որ իրենց ժողովուրդներին ասեն ճշմարտությունն Աստծու մասին, գիտելիք տան, սակայն իրենց ժողովուրդները չեն ընդունել, հեզնել են նրանց և ծի-

ծաղել, տանջել, հետապնդել, չարչարել: Մուհամմադը պատմում է նաև, թե ինչ պատիժ է սահմանել Ալլահը նրանց հետապնդողների և տանջողների համար:

Լուտի՝ աստվածաշնչյան Ղովտի պատմությունը, Նուհի՝ Նոյի պատմությունն այն է, որ մարդիկ երես էին դարձրել Աստծուց, ճշմարտությունից, արդարությունից, առաքինությունից և այն ամենից, ինչ քարոզվել էր իրենց, որի պատճառով Ալլահը որոշում է ոչնչացնել նրանց: Բայց այդպես արդար չէր լինի, որովհետև Աստծուց երես դարձրած այդ բոլոր մարդկանց մեջ կար մեկը, որ նվիրված էր Աստծուն իր ամբողջ էությանը, նրա կինն ու զավակները ևս նվիրված էին Ալլահին, կատարում էին նրան նվիրված բոլոր ծիսական փառաբանությունները: Միթե նրանց էլ պետք է պատժեր: Ալլահը, որը հավանաբար այդ ժամանակվա պատկերացումներով երկար սպիտակ մորուքով մարդակերպ էակ էր, ամպերում բազմած, մտածում է, որ դա արդար չի լինի, և այդպես սկսում է Նոյան տապանի պատմությունը (Ղուրան, 11:25-49, 37:75-82, 71): Անշուշտ, զուգահեռներ են նկատվում ավելի վաղ շրջանի Յա Սին սուրայում տեղ գտած առակի հետ:

Մուհամմադն այս պատմություններն է պատմում՝ ասելով, որ նրանց՝ իրեն ծաղրող, իսկ ապա նաև հետապնդող, հայիոյող և սպառնացող մեքքացիներին նույնպես դա է սպասում: Նա աստվածաշնչյան այդ պատմությունները և արաբական ավանդապատումներից հատվածները ներկայացնում է ամբողջությամբ կամ ուղղակի հիշատակելով այդ սյուժեների որևէ տարր: Անընդհատ կրկնությունը մի նպատակ է հետապնդում՝ բացատրել անհավատներին, որ այս ամենը միշտ նույն ավարտն է ունենում: Մարգարեն գալիս է, քարոզում է, չեն ընդունում, և Ալլահը պատժում ու ոչնչացնում է նրանց: Սակայն պատիժը միայն աշխարհիկ կյան-

քին չի վերաբերում. ավելի դաժան տանջանքների նրանք կդատապարտվեն Ահեղ դատաստանից հետո:

Ղուրանի առաջին երեք շրջաններն էլ շատ գեղեցիկ են իրենց լեզվով, ոճով, շատ հարուստ են տարբեր տիպի համեմատություններով, այլաբանություններով, պատկերներով: Ոճը գերում է մարդկանց և հետագայում հանգեցնում Ղուրանի անգերազանցելիությանը նվիրված բազմաթիվ ստեղծագործությունների ի հայտ գալուն: Հիմնական փաստարկը հետևյալն է. Ղուրանը անգերազանցելի է, որովհետև այն Աստծո խոսքն է: Սակայն միջնադարյան հեղինակները ձգտում էին այդ բացառիկությունը հիմնավորել նաև բանասիրական ապացույցներով:

Սրա հետ կապված մի փոքրիկ պատմություն կա, որն առնչվում է հայերի հետ: Գրիգոր Մագիստրոսն (մահ. 1058թ.) իր թղթերից մեկում պատմում է այն մասին, որ Պոլսում հանդիպել է մի տաճիկի, որի անունը Մանուչե էր, և նրանք վեճի են բռնվել: Մանուչեն ասում էր, որ իրենց Ղուրանը Ալլահն է արարել, և հիմնավորում էր դա այն հանգամանքով, որ Սուրբ գիրքը հանգավորված է:

Հայտնի է, որ մեր պոեզիայում հանգն առաջին անգամ ի հայտ է գալիս Նարեկացու (մահ. 1003թ.) տաղերի մեջ, սակայն դեռ ոչ կանոնավոր ձևով: Առաջին կանոնավոր հանգավորված ստեղծագործությունը Գրիգոր Մագիստրոսի «Առ Մանուչե» («Հազարտողեան») պոեմն է:

Մագիստրոսը նրան ասում է, որ ինքը կգրի Աստվածաշնչի համառոտ լրիվ հանգավորված վերապատումը և առաջարկում է, որ եթե ինքը հաջողի, ապա այդ մարդը պետք է քրիստոնյա դառնա, եթե ոչ՝ ինքը կդառնա մուսուլման՝ ընդունելով, որ Ղուրանը Ալլահի խոսքն է: Ինչպես հայտնի է, Գրիգոր Մագիստրոսը հաջո-

ղում է: Հայտնի չէ, թե ինչպես է դասավորվել Մանուչեի ճակատագիրը, բայց հավանաբար իր խոսքի տերն է եղել:

Այսպիսով, Ղուրանի տեքստն այնպիսի գեղեցկություն ունի, որ մարդիկ համոզված են, որ դա սովորական մարդու խոսք չի կարող լինել, որ այն գերբնական է և Ալլահի կողմից է տրված: Այդ ազդեցիկությունը, այդ շատ լարված տեքստը, բնականաբար, գրավում էր լսողների ուշադրությունը:

Հարկավոր է նշել նաև, որ այդ մշակութային շրջանակներից դուրս ցանկացած մարդ, սկսելով կարդալ Ղուրանի տեքստը, ոչինչ չի հասկանում: Ինչպես արդեն նշվել է, Մուհամմադը ծնվել է «Փղի տարում»՝ մոտ 570թ.: Ղուրանում մի սուրա կա, որի անունը «Փիղ» է՝ Ֆիլ, որը սկսվում է այսպես.

أَلَمْ تَرَ كَيْفَ فَعَلَ رَبُّكَ بِأَصْحَابِ الْفِيلِ (1)
 أَلَمْ يَجْعَلْ كَيْدَهُمْ فِي تَضَلُّبٍ (2) وَأَرْسَلَ عَلَيْهِمْ طَيْرًا أَبَابِيلَ (3) تَرْمِيهِمْ
 بِحِجَارَةٍ مِنْ سِجِّيلٍ (4) فَجَعَلَهُمْ كَعَصْفٍ مَأْكُولٍ (5)

«Արդյո՞ք դու չտեսար, թե ինչ արեց քո Տերը փղի մարդկանց հետ (1), մի՞թե նրանց խորամանկությունները մոլորություն չդարձրեց (2) և ուղարկեց նրանց վրա երամներով թռչուններ (3), և հարվածեցին թրծված աղյուսից քարերով (4), և դարձրեցին նրանց որպես մորեխի կերած դաշտ (5)» (Ղուրան, 105):

Ինչ է կարելի հասկանալ այս տեքստից, եթե հայտնի չէ այն իրադարձությունը, որն ակնարկվում է այս սուրայում: Ոչինչ:

Ինչ-որ «փղի մարդիկ», որոնց հետ տերն ինչ-որ բան է արել, որը շատ վատ է վերջացել, որովհետև մորեխի կերած դաշտի նման են դարձել: Ոչինչ չի հասկացվում: Իրականում խոսքը շատ

կոնկրետ դեպքի մասին է: Աբրահա անունով Եմենի կառավարիչը, որն այդ ժամանակ գտնվում էր Եթովպիայի ազդեցության տակ, Սանայում կառուցում է մի շքեղ, շատ գեղեցիկ եկեղեցի, որը օծում են, սակայն առավոտյան արթնանում և տեսնում են, որ եկեղեցին պղծված է: Ապա ինչ-որը մեկն ասում է, որ մի խումբ մեքքացիներ, որոնք Սանայում էին գտնվում, վաղ առավոտյան փախել են: Եմենի կառավարիչը հասկանում է, որ դա մեքքացիներն են արել, զորք է հավաքում, որի մեջ նաև փղեր են լինում և Սանայից գնում է Մեքքա: Հետագայում պատմություններ են ավելացվում, որ նրանք ճանապարհին գողանում են Աբդ Ալ-Մուտտալիբի՝ Մուհամմադի պապի հոտը, և վերջինս գալիս է Աբրահայի մոտ, ներկայացնում է, որ ինքը հարգված մարդ է և հետ է ուզում իր ունեցվածքը: Աբրահան նրան ասում է, որ գիտի, որ նա Քաաբայի պահապանն է և փոխարենը ասի, որ Քաաբային ձեռք չտան, իր անասուններին է պահանջում: Աբդ Ալ-Մուտտալիբն ասում է, որ ինքն իր ունեցվածքի տերն է, իսկ Աստված իր ունեցվածքի, և թող ինքն էլ իր տան գործով զբաղվի: Պարզ է, որ այս տողերը ավելի ուշ են ավելացվել՝ Մուհամմադի և իր ցեղի հեղինակությունը բարձրացնելու նպատակով:

Երբ Աբրահան մտնում է Մեքքա, քաղաքը դատարկ է լինում և փորձում է Քաաբան քանդել: Ահմադ (փառավոր, սա նույնպես պատահական անուն չէ) անունով մի փղի քշում է, որպեսզի Քաաբան քանդի, փիղը չի գնում, երկրորդ անգամ է քշում, էլի չի գնում, երրորդ անգամ ծնկի է գալիս, մուսուլմանական ձևով ճակատը գետնին է դնում՝ որպես աղոթքի նշան: Ապա թռչուններ են գալիս, յուրաքանչյուրը երեք կտոր քարով հարվածում: Միջնադարյան պատմիչն ասում է, որ այդ հարվածներից գոյանում են կապույտ, դեղին, կարմիր գույնի վերքեր, և աշխարհով տարածվում է ժանտախտը և այլ հիվանդություններ:

Ֆրանսիացի գիտնական Պոլ Կազանովայի (մահ. 1926թ.) տարբերակը սրա շուրջ այն է, որ հավանաբար քաղաքում ժանտախտ է եղել, դրա համար բնակիչները դուրս են եկել քաղաքից: Այս պատմությունը մեջբերելու նպատակը Ղուրանի տեքստի բարդությունը ցույց տալն է, այդ տեքստը մի շատ ավելի մեծ տեքստի մասնիկ է այնպես, ինչպես ցանկացած բանավոր տեքստ:

Հիմնական գրականություն

Տե՛ս Դասախոսություն 5-ի գրականությունը: